

Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձեւավորմանն ուղղված ժամանակավոր համաձայնագիր

ՆԱԽԱԲԱՆ

Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ) եւ Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ անդամ պետություններ)՝ մի կողմից, եւ Իրանի Իսլամական Հանրապետությունը (այսուհետ՝ Իրան)՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր)՝

ՀԱՍԿԱՆԱԼՈՎ Կողմերի միջեւ երկարատեւ եւ ամուր բարեկամական հարաբերություններն ու ավանդական բազմակողմ համագործակցությունն խորացնելու կարեւորությունը,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ ստեղծել բարենպաստ միջավայր եւ պայմաններ՝ իրենց միջեւ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման, ինչպես նաեւ փոխադարձ շահ ներկայացնող ոլորտներում Կողմերի միջեւ տնտեսական համագործակցության զարգացման համար,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ ԵԱՏՄ-ի ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու

ձեավորմանն ուղղված ժամանակավոր համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) առաջին քայլը կդառնա ԵԱՏՄ-ի ու դրա անդամ պետությունների եւ Իրանի Իսլամական Հանրապետության հետագա առեւտրատնտեսական ինտեգրման ճանապարհին,

ՍԱՀՄԱՆԵԼՈՎ ԵԱՏՄ-ի ու դրա անդամ պետությունների եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ ազատ առեւտրի լիարժեք գոտու ձեավորումը որպես հիմնական նպատակ,

ԸՆԴԳԾԵԼՈՎ Կողմերի միջեւ փոխադարձ վստահության, թափանցիկության եւ առեւտրի ընթացակարգերի պարզեցման վրա հիմնված փոխհարաբերությունների հետագա զարգացմանը նպաստելու անհրաժեշտությունը,

ՀԱՍՏԱՏԵԼՈՎ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը հնարավորինս շուտ միանալուն իրենց օժանդակությունը, եւ ընդունելով այն փաստը, որ ԵԱՏՄ-ի եւ դրա անդամ պետությունների (որոնք ներկա պահին Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ չեն) եւ Իրանի Իսլամական Հանրապետության՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցության շնորհիվ կստեղծվեն բարենպաստ պայմաններ՝ բազմակողմ առեւտրային համակարգում իրենց ինտեգրումը խորացնելու եւ սույն Համաձայնագրի Կողմերի միջեւ ավելի սերտ համագործակցություն հաստատելու համար,

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵՑԻՆ հետեւյալի մասին.

ԳԼՈՒԽ 1.

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1.1

Ընդհանուր սահմանումները

Եթե այլ բան նախատեսված չէ, սույն Համաձայնագրի նպատակներով՝

ա) **«կենտրոնական մաքսային մարմին»** նշանակում է ԵԱՏՄ անդամ պետություններից յուրաքանչյուրի կամ Իրանի Իսլամական Հանրապետության բարձրագույն լիազորված մաքսային մարմին, որը համապատասխան ազգային օրենսդրության եւ նորմատիվ ակտերի հիման վրա իրականացնում է գործառույթներ՝ մաքսային ոլորտում համապատասխան պետական քաղաքականության, նորմատիվ ակտերի, հսկողության ու վերահսկողության իրագործման նպատակով.

բ) **«մաքսային մարմիններ»** նշանակում է ԵԱՏՄ անդամ պետությունների կամ Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային մարմին կամ մաքսային մարմիններ.

գ) **«օրեր»** նշանակում է օրացուցային օրեր՝ ներառյալ հանգստյան եւ տոնական օրերը.

դ) **«հայտարարատու»** նշանակում է այն անձը, որը հայտարարագրում է ապրանքներ մաքսային նպատակներով կամ որի անունից հայտարարագրվում են ապրանքներ.

ե) **«Եվրասիական տնտեսական հանձնաժողով»** նշանակում է Եվրասիական տնտեսական միության մշտապես գործող՝ կարգավորող մարմին՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին (այսուհետ՝ Միության մասին պայմանագիր) համապատասխան.

զ) **«Ներդաշնակեցված համակարգ» կամ «ՆՀ»** նշանակում է «Ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի մասին» 1983 թվականի հունիսի 14-ի միջազգային կոնվենցիայով հիմնված՝ Ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգ՝ Կոդմերի կողմից իրենց համապատասխան օրենսդրություններում ու նորմատիվ ակտերում ընդունման ու կիրառման մասով.

է) **«օրենսդրություն եւ նորմատիվ ակտեր»** նշանակում է ցանկացած օրենք կամ ցանկացած այլ նորմատիվ իրավական ակտ.

ը) **«միջոց»** նշանակում է Կոդմի ցանկացած միջոց՝ օրենքի, նորմատիվ ակտի, կանոնի, ընթացակարգի, որոշման, վարչական գործողության, ձեավորված գործելակերպի ձեով կամ ցանկացած այլ ձեով.

թ) **«ծագում ունեցող»** նշանակում է սույն Համաձայնագրի 6-րդ գլխով («Ծագումը որոշելու կանոնները») սահմանված՝ ծագման կանոններին համապատասխանող.

ժ) **«Կոդմեր»** նշանակում է Միության մասին պայմանագրից բխող իրենց համապատասխան իրավասության շրջանակներում համատեղ կամ առանձին գործող՝ ԵԱՏՄ անդամ պետությունները կամ ԵԱՏՄ-ն՝ մի կողմից, եւ Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ մյուս կողմից.

ժա) **«անձ»** նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

Հողված 1.2

Նպատակները

Սույն Համաձայնագրի նպատակներն են՝

- ա) ազատականացնել և պարզեցնել Կողմերի միջև ապրանքների առևտուրը, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում ներառված ապրանքների համար սակագնային և ոչ սակագնային խոչընդոտները նվազեցնելու կամ վերացնելու միջոցով.
- բ) հիմք ստեղծել ազատ առևտրի գոտու ձևավորման համար, որի շրջանակներում Կողմերի միջև փաստացի ամբողջ առևտրի համար կվերացվեն տուրքերն ու առևտրի կարգավորման մյուս սահմանափակող միջոցները՝ միջազգային կանոններին, ստանդարտներին և փորձին՝ համապատասխան.
- գ) աջակցել Կողմերի միջև տնտեսական և առևտրային փոխգործակցությանը.
- դ) հիմքեր ստեղծել սույն Համաձայնագրի շրջանակներում ներառված ոլորտներում առավել սերտ համագործակցության զարգացման համար և ղյուրացնել Կողմերի միջև փոխգործակցությունը:

¹ Սույն Համաձայնագրի՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ հանդիսացող Կողմերի համար «միջազգային կանոններին, ստանդարտներին և փորձին համապատասխան» ասելով հասկանում ենք «Առևտրի համաշխարհային կազմակերպության մասին» համաձայնագրի համապատասխան դրույթները, մասնավորապես՝ 1994 թվականի ՍԱԳՀ-ի XXIV հոդվածը:

Հոդված 1.3

Առեստրի ազատականացումը եւ ազատ առեստրի գոտու ձեւավորումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից Կողմերը նվազեցնում եւ (կամ) չեղարկում են սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված ապրանքների ներմուծման դեպքում կիրառվող մաքսատուրքերն ու վճարները կամ համարժեք ազդեցություն ունեցող այլ միջոցներ:
2. Կողմերը սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում կսկսեն բանակցություններ՝ 1.2 հոդվածի «բ» կետին համապատասխան ազատ առեստրի վերաբերյալ համաձայնագիր կնքելու նպատակով:
3. Կողմերը սույն հոդվածի 2-րդ կետում նշված համաձայնագիրը պետք է կնքեն ոչ ուշ, քան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարի հետո:
4. Այն դեպքում, երբ Կողմերը սույն հոդվածի 2-րդ կետում նշված բանակցությունները չեն ավարտում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարվա ընթացքում, Կողմերը պարտավորվում են որոշում ընդունել սույն Համաձայնագրի կիրառումը շարունակելու անհրաժեշտության վերաբերյալ: Այդ որոշումը պետք է ձեւակերպվի սույն Համաձայնագրին կցվող արձանագրության ձեւով:

Հոդված 1.4

Հարաբերակցությունն այլ միջազգային պայմանագրերի հետ

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է՝ չխախտելով Կողմերի՝ այն երկկողմ եւ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց մասնակիցն են Կողմերը:

2. Չխախտելով սույն Համաձայնագրի 6.7 հոդվածի (Հավաքական ծագման կանոնները) դրույթները՝ սույն Համաձայնագրի դրույթները չեն կիրառվում ո՛չ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև, ո՛չ ԵԱՏՄ անդամ պետությունների եւ ԵԱՏՄ-ի միջև, ինչպես նաեւ այդ դրույթներով Իրանի Իսլամական Հանրապետությունը չի օժտվում այն իրավունքներով ու արտոնություններով, որոնք ԵԱՏՄ անդամ պետությունները տրամադրում են բացառապես միմյանց:

Հոդված 1.5

Համատեղ կոմիտե

1. Սույնով Կողմերն ստեղծում են յուրաքանչյուր Կողմից ներկայացուցիչներ ներառող Համատեղ կոմիտե, որը կղեկավարի երկու ներկայացուցիչ. մեկը՝ ԵԱՏՄ-ից եւ դրա անդամ պետություններից, մյուսը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից: Կողմերին կներկայացնեն այդ նպատակի համար իրենց կողմից լիազորված բարձրաստիճան պաշտոնատար անձինք:

2. Համատեղ կոմիտեն իրականացնում է հետեւյալ գործառույթները՝

ա) սույն Համաձայնագրի կիրարկման ու կիրառման հետ կապված ցանկացած հարցի ուսումնասիրում.

բ) սույն Համաձայնագրին համապատասխան կամ Համատեղ կոմիտեի հայեցողությամբ սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ստեղծված բոլոր ենթակոմիտեների, աշխատանքային խմբերի եւ այլ մարմինների աշխատանքի նկատմամբ հսկողության իրականացում.

գ) սույն Համաձայնագրի 1.3 հոդվածին համապատասխան անցկացվող բանակցությունների ընթացքի ամփոփում եւ փաստացի բանակցություններն ավարտելու վերաբերյալ որոշման ընդունում, եւ

- դ) Կողմերի միջեւ առետորային փոխհարաբերությունների հետագա զարգացման հնարավորությունների ուսումնասիրում.
- ե) սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխության վերաբերյալ Կողմերին ներկայացվող առաջարկությունների ուսումնասիրում եւ նախապատրաստում.
- զ) սույն Համաձայնագրի շրջանակներում ցանկացած հարցի մասով այլ գործողությունների կատարում՝ Կողմերի պայմանավորվածություններին համապատասխան:

3. Համատեղ կոմիտեն, իր գործառույթները կատարելու նպատակով, կարող է ստեղծել օժանդակ մարմիններ, այդ թվում՝ ժամանակավոր (*ad hoc*) մարմիններ, եւ հանձնարարել նրանց կոնկրետ հարցերի հետ կապված խնդիրների կարգավորումը: Համատեղ կոմիտեն, անհրաժեշտության դեպքում, կարող է դիմել երրորդ անձանց կամ խմբերին՝ իր իրավասության շրջանակներում գտնվող հարցերի վերաբերյալ վերջիններիս կարծիքն իմանալու համար:

4. Եթե Կողմերն այլ համաձայնություն ձեռք չեն բերել, ապա Համատեղ կոմիտեն հրավիրվում է՝

- ա) յուրաքանչյուր տարի՝ պարբերական նստաշրջաններին, որոնք անցկացվում են հաջորդաբար Կողմերից յուրաքանչյուրի տարածքում, եւ
- բ) Կողմերից որեւէ մեկի պահանջով՝ 30 օրացուցային օրվա ընթացքում՝ հատուկ նստաշրջաններին, որոնք անցկացվում են մյուս Կողմի տարածքում կամ այլ վայրում՝ Կողմերի միջեւ պայմանավորվածության համաձայն:

5. Համատեղ կոմիտեի, կոմիտեների, ենթակոմիտեների ու սույն Համաձայնագրին համապատասխան ստեղծված մյուս մարմինների բոլոր որոշումներն ընդունվում են Կողմերի ընդհանուր համաձայնությամբ:

6. Կողմերի կամ Համատեղ կոմիտեի հասցեին բոլոր ծանուցումները, հարցումները եւ մյուս գրավոր դիմումները ներկայացվում են անգլերենով կամ պարսկերենով կամ ռուսերենով՝ անգլերեն համապատասխան թարգմանությամբ, եթե սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 1.5 bis

Գործարար երկխոսությունը

1. Կողմերն ստեղծում են Կողմերի գործարար համայնքների միջեւ համագործակցության ամրապնդմանն ուղղված գործարար երկխոսություն, որը կանցկացվի Կողմերի այդ գործարար համայնքների ներկայացուցիչների միջեւ:

2. Գործարար երկխոսության արդյունքում Համատեղ կոմիտեի ուսումնասիրմանը կարող են ներկայացվել առաջարկներ սույն Համաձայնագրի կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ՝ ներառյալ Կողմերի միջեւ առեւտրատնտեսական համագործակցության զարգացման վերաբերյալ առաջարկները, ինչպես նաեւ առաջարկներ Կողմերի միջեւ փոխադարձ առեւտրին առնչվող այլ հարցերի վերաբերյալ:

3. Գործարար երկխոսության շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, կանցկացվեն սեմինարներ, գործնական ցուցահանդեսներ, տոնավաճառներ, կլոր սեղաններ եւ այլ համատեղ միջոցառումներ՝ ուղղված Կողմերի միջեւ փոխադարձ առեւտրի եւ տնտեսական հարաբերությունների զարգացմանը:

Հոդված 1.6

Կապի ապահովման կենտրոնները

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կապի ապահովման կենտրոն կամ կենտրոններ՝ սույն Համաձայնագրի հետ կապված ցանկացած հարցի շուրջ Կողմերի

միջեւ փոխգործակցությունը պարզեցնելու համար, եւ Համատեղ կոմիտեին ծանուցում է կապի ապահովման իր կենտրոնի կամ կենտրոնների մասին:

2. Կողմի պահանջով՝ մյուս Կողմի կապի ապահովման կենտրոնը կամ կենտրոնները հայտնում են կոնկրետ հարցի համար պատասխանատու գերատեսչության կամ պաշտոնական անձի մասին եւ, ըստ անհրաժեշտության, աջակցում են Կողմերի միջեւ փոխգործակցության կազմակերպմանը:

Հոդված 1.7

Գաղտնի տեղեկատվությունը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է մյուս Կողմի կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում որպես գաղտնի տեղեկատվություն տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը՝ իր օրենսդրությանը եւ նորմատիվ ակտերին համապատասխան:

2. Սույն Համաձայնագրում ոչինչ չի պարտավորեցնում Կողմին ներկայացնել այնպիսի գաղտնի տեղեկատվություն, որի բացահայտումը կարող է խոչընդոտել իրավունքի կիրառությունը կամ այլ կերպ հակասել հասարակական շահերին կամ ոտնահարել պետական կամ մասնավոր ձեռնարկությունների օրինական կոմերցիոն շահերը:

Հոդված 1.8

Ընդհանուր բացառությունները

1. Այն պահանջի պահպանման պայմանով, որ այդ միջոցները չեն կիրառվի որպես Կողմերի միջեւ չհիմնավորված կամ ոչ իրավաչափ խտրականության միջոց, որտեղ գործում են միեւնույն պայմանները, կամ որպես միջազգային առետրի

թաքնված սահմանափակման միջոց՝ սույն Համաձայնագրում ոչինչ չի մեկնաբանվում որպես որեւէ Կողմի կողմից հետեցյալ միջոցների ընդունումը կամ հարկադրական ապահովումը բացառող, որոնք՝

- ա) անհրաժեշտ են հասարակական բարոյականության պաշտպանության համար.
- բ) անհրաժեշտ են մարդու կյանքի կամ առողջության, կենդանիների կամ բույսերի պաշտպանության համար.
- գ) առնչվում են ոսկու կամ արծաթի ներմուծմանը կամ արտահանմանը.
- դ) անհրաժեշտ են օրենսդրությանը կամ այն նորմատիվ ակտերին համապատասխանության ապահովման համար, որոնք չեն կիրառվում որպես բարենպաստության ռեժիմ ստեղծելու եւ (կամ) ներքին արտադրությանը սատարելու միջոց կամ որպես խտրականության միջոց մյուս Կողմի ապրանքների նկատմամբ՝ որեւէ երրորդ երկրից ծագող նմանատիպ ապրանքների համեմատ, այդ թվում՝ կապված մաքսային օրենսդրության պահպանման, սույն Համաձայնագրի 2.11 հոդվածին համապատասխան գործող ձեռնարկությունների կողմից իրավունքի պահպանման ապահովման, արտոնագրերի, ապրանքային նշանների կամ հեղինակային իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ խարդախ գործողությունների կանխման հետ.
- ե) վերաբերում են բանտարկյալների կողմից արտադրված ապրանքներին.
- զ) կիրառվում են գեղարվեստական, պատմական կամ հնագիտական արժեք ունեցող ազգային գանձերի պահպանման համար.
- է) վերաբերում են սպառվող բնական ռեսուրսների պահպանությանը, եթե այդ միջոցները կիրառվում են այն սահմանափակումների հետ

համադրությամբ, որոնք դրվում են ներքին արտադրության կամ սպառման վրա.

- ը) կապված են հայրենական արտադրության նյութերի արտահանման սահմանափակման հետ՝ հայրենական մշակող արդյունաբերությունն այդ նյութերի բավարար քանակով ապահովելու նպատակով այն ժամանակահատվածներում, երբ այդ նյութերի ներքին գինն ավելի ցածր է, քան համաշխարհային գինը՝ որպես Կառավարության կողմից իրականացվող կայունացման նախագծի մի մաս՝ պայմանով, որ այդ սահմանափակումները չեն նպաստի արտահանման ընդլայնմանը կամ չեն սատարի այդ ներքին արդյունաբերությանը եւ չեն հակասի սույն Համաձայնագրի՝ խտրականության անթույլատրելիությանն առնչվող դրույթներին.
- թ) անհրաժեշտ են ընդհանուր կամ կոնկրետ տարածաշրջանի պակասորդի պայմաններում արտադրանքի ձեռքբերման կամ տարածման համար՝ պայմանով, որ այն միջոցները, որոնք չեն համապատասխանում Համաձայնագրի մյուս դրույթներին, դադարում են, հենց որ պայմանները, որոնց կապակցությամբ դրանք ընդունվել են, դադարում են գոյություն ունենալ:

Հոդված 1.9

Բացառություններ՝ անվտանգության նկատառումներից ելնելով

Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես՝

- ա) որեւէ Կողմի ներկայացվող պահանջ՝ այնպիսի տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ, որոնց բացահայտումը, ըստ տվյալ Կողմի, կհակասի իր անվտանգության հիմնական շահերին, կամ

- բ) որեւէ Կողմի այնպիսի միջոցների ձեռնարկումը խոչընդոտող, որոնք, ըստ տվյալ Կողմի, անհրաժեշտ են իր անվտանգության հիմնական շահերի պաշտպանության համար՝
- i) քայքայվող նյութերի կամ այնպիսի նյութերի հետ կապված, որոնցից դրանք ստացված են,
 - ii) զենքի, զինամթերքի եւ ռազմամթերքի, ինչպես նաեւ այլ ապրանքների եւ նյութերի առետրի հետ կապված, որն իրականացվում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ զինված ուժերին մատակարարելու նպատակով,
 - iii) եթե դրանք ձեռնարկվում են պատերազմի ժամանակ կամ միջազգային հարաբերություններում առաջացած այլ արտակարգ իրավիճակներում, կամ
- գ) սույն Համաձայնագրի Կողմի համար խոչընդոտ՝ Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության համաձայն ստանձնած իր պարտավորություններին համապատասխան ձեռնարկելու միջոցներ՝ միջազգային խաղաղության եւ անվտանգության պահպանման նպատակով:

Հոդված 1.10

Վճարային հաշվեկշռի ապահովմանն ուղղված միջոցները²

1. Չնայած 2.7 հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ Կողմերը, իրենց արտաքին ֆինանսական դրության պաշտպանության եւ վճարային հաշվեկշռի ապահովման նպատակով, իրավունք ունեն սահմանափակելու ներմուծման համար թույլատրված

² Կողմերը ցանկացած խորհրդակցություն անցկացնելիս, սույն հոդվածի դրույթներին համապատասխան, ապահովում են խիստ գաղտնիություն:

ապրանքների քանակը կամ ծավալը՝ սույն հոդվածի հետեւյալ կետերի դրույթները կատարելու պայմանով: Կողմի կողմից սույն հոդվածին համապատասխան սահմանված, պահպանվող կամ ուժեղացված՝ ներմուծմանն առնչվող սահմանափակումները չպետք է գերազանցեն այն սահմանափակումները, որոնք անհրաժեշտ են՝

- i. իր արժույթային պահուստների համար անխուսափելի վտանգը կանխելու կամ դրանց լուրջ նվազումը դադարեցնելու, կամ
- ii. այն դեպքում, երբ Կողմն ունի շատ ցածր արժույթային պահուստներ, դրա պահուստների աճի խելամիտ տեմպին հասնելու համար:

Երկու դեպքում էլ պատշաճ ուշադրություն պետք է դարձնել ցանկացած հատուկ գործոնի, որը կարող է ազդել այդ Կողմի պահուստների կամ պահուստների մասով դրա պահանջմունքի վրա, իսկ եթե տվյալ Կողմին հասանելի են նպատակային արտաքին վարկեր կամ այլ ռեսուրսներ, ապա նաեւ՝ այդ վարկերի կամ ռեսուրսների համապատասխան օգտագործումն ապահովելու անհրաժեշտությանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան սահմանափակումներ կիրառող Կողմերը, դրության բարելավման հետ մեկտեղ, հետեւողականորեն թուլացնում են այդ սահմանափակումները՝ դրանք պահպանելով միայն այն չափով, որի դեպքում սույն ենթակետով սահմանված պայմանները հետագայում կարդարացնեն դրանց կիրառումը: Կողմերը չեղարկում են սահմանափակումները, եթե այդ պայմաններով չեն հիմնավորվում դրանց սահմանումը կամ պահպանումը՝ սույն ենթակետին համապատասխան:

3. ա) Կողմերն իրենց ներքին քաղաքականությունն իրականացնելիս պարտավորվում են պատշաճ ուշադրություն դարձնել վճարային հաշվեկշիռն ամուր եւ կայուն հիմքի վրա պահպանելու կամ վերականգնելու անհրաժեշտությանն ու արտադրական ռեսուրսների՝

տնտեսապես չարդարացված օգտագործումը կանխելուն: Կողմերն ընդունում են, որ այդ նպատակներին հասնելու համար ցանկալի է հնարավորինս արագ ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնց շնորհիվ միջազգային առեստուրը ոչ թե կրճատվում, այլ զարգանում է:

- բ) Սույն հոդվածի համաձայն սահմանափակումներ կիրառող Կողմերը տարբեր ապրանքների կամ ապրանքների խմբերի ներմուծման մասով սահմանափակումների արդյունավետությունը կարող են սահմանել այնպես, որ առաջնահերթությունը տրվի առավել կարետր ապրանքների ներմուծմանը:
- գ) Սույն հոդվածին համապատասխան սահմանափակումներ կիրառող Կողմերը պարտավորվում են՝
 - i) խուսափել ցանկացած այլ Կողմի կոմերցիոն ու տնտեսական շահերին անհարկի վնաս հասցնելուց³.
 - ii) չկիրառել այնպիսի սահմանափակումներ, որոնք ուղղված են որեւէ անվանմամբ ապրանքի՝ առետրում ընդունված նվազագույն քանակությամբ ներմուծումը չարդարացված ձեռով խոչընդոտելուն, ինչը բացասաբար կանդրադառնա մշտական առետրային կապերի վրա, եւ
 - iii) չկիրառել այնպիսի սահմանափակումներ, որոնք կարող են խոչընդոտել կոմերցիոն նմուշների ներմուծումը կամ արտոնագրերի, ապրանքային նշանների, հեղինակային իրավունքի կամ համանման ընթացակարգերի վերաբերյալ դրույթների պահպանումը:

³ Սահմանափակումներ կիրառող Կողմը ջանքեր է գործադրում այն արտադրանքի արտահանմանը լուրջ վնաս հասցնելը կանխելու համար, որից մեծապես կախված է Կողմի տնտեսությունը:

դ) Կողմերն ընդունում են, որ լրիվ եւ արտադրական զբաղվածության ձեռքբերմանն ու պահպանմանը կամ տնտեսական ռեսուրսների զարգացմանն ուղղված ներքին քաղաքականությունների արդյունքում Կողմի՝ ներմուծման պահանջմունքի մակարդակը կարող է աճել, ինչը մեծ վտանգ կներկայացնի դրա՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված արժույթային պահուստների համար: Համապատասխանաբար, սույն հոդվածի դրույթները մնացած մասով կատարող Կողմը պարտավոր չէ չեղարկել կամ փոփոխել սահմանափակումներն այն հիմնավորմամբ, որ սույն հոդվածին համապատասխան իր կողմից կիրառվող սահմանափակումներն այդ քաղաքականությունների փոփոխման արդյունքում դառնում են անօգուտ:

4. Եթե խոսքը, սույն հոդվածին համապատասխան, ներմուծման սահմանափակումների մշտական եւ լայնամասշտաբ կիրառման մասին է, ինչը վկայում է Կողմերի միջեւ առետուրը սահմանափակող՝ վճարումների ընդհանուր անհաշվեկշռվածության առկայության մասին, ապա Կողմերը նախաձեռնում են քննարկումներ՝ գնահատելու համար, թե կարող են արդյոք այն Կողմերը, որոնց վճարային հաշվեկշիռը ճնշված է, կամ այն Կողմերը, որոնց վճարային հաշվեկշիռը բացառապես բարենպաստ դիրքում է, կամ ցանկացած համապատասխան միջկառավարական կազմակերպություն ընդունել այլ միջոցներ՝ վճարումների անհաշվեկշռվածության հիմնական պատճառները վերացնելու նպատակով:

Հոդված 1.11

Թափանցիկությունը

1. Յուրաքանչյուր Կողմ, իր օրենսդրությանը եւ նորմատիվ ակտերին համապատասխան, ապահովում է, որ սույն Համաձայնագրի գործողության

շրջանակներում գտնվող ցանկացած հարցին առնչվող՝ իր ընդհանուր կիրառության օրենքներն ու նորմատիվ ակտերն անհապաղ հրապարակվեն կամ այլ կերպ հասանելի լինեն, որպեսզի շահագրգիռ անձանց ու Կողմին հնարավորություն տրվի ծանոթանալու դրանց, հնարավորության դեպքում՝ նաեւ էլեկտրոնային եղանակով: Կողմերը փոխանակում են համապատասխան պաշտոնական հրապարակումների եւ էլեկտրոնային զանգվածային լրատվության միջոցների ցանկերը:

2. Յուրաքանչյուր Կողմ՝

- ա) նախապես հրապարակում է սույն հոդվածի 1-ին կետում նշված այն օրենքների ու նորմատիվ ակտերի նախագծերը, որոնք նախատեսված են ընդունման համար այդ Կողմում, եւ
- բ) շահագրգիռ անձանց եւ մյուս Կողմին տրամադրում է խելամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իրենց մեկնաբանությունները սույն հոդվածի 1-ին կետում նշված այն օրենքների ու նորմատիվ ակտերի վերաբերյալ, որոնք նախատեսված են ընդունման համար այդ Կողմում:

3. Յուրաքանչյուր Կողմ, մյուս Կողմի պահանջով, օպերատիվ կերպով ներկայացնում է տեղեկատվություն եւ պատասխանում է ցանկացած գործող կամ նախատեսվող օրենքին, նորմատիվ ակտին, ընթացակարգին կամ ընդհանուր կիրառության վարչական ակտին առնչվող հարցերին՝ անկախ այն փաստից, թե հարցում կատարող Կողմը նախապես ծանուցվել է այդ մասին, թե ոչ: Սույն կետին համապատասխան՝ Կողմը տեղեկատվություն է տրամադրում անգլերենով՝ հարցումն ստանալու օրվանից 45-օրյա ժամկետում:

4. Կողմերն ապահովում են մյուս Կողմից կատարվող ներմուծման գործընթացին ներկայացվող իրենց պահանջների հստակությունն ու թափանցիկությունը եւ մյուս Կողմի արտահանողների համար հրապարակում են ներմուծման կարգավորման վերաբերյալ՝ իրենց կողմից կիրառվող մանրամասն ձեռնարկը՝ սույն

Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում: Վերոնշյալ ձեռնարկը կազմվում է անգլերենով եւ հրապարակվում է համընդհանուր ծանոթացման համար, այդ թվում՝ համապատասխան Կողմի՝ բոլորի համար հասանելի անվճար պաշտոնական կայքում: Կողմերն այդ ձեռնարկում անհապաղ արտացոլում են ներմուծման գործընթացի իրենց կարգավորման մեջ կատարված ցանկացած փոփոխություն:

5. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված ծանուցումը համարվում է կատարված, եթե համապատասխան տեղեկատվությունը հրապարակվել է համընդհանուր ծանոթացման համար, այդ թվում՝ համապատասխան Կողմի՝ բոլորի համար հասանելի անվճար պաշտոնական կայքում:

6. Սույն հոդվածին համապատասխան տրամադրվող ցանկացած ծանուցում, հարցում կամ տեղեկատվություն մյուս Կողմին փոխանցվում է կապի ապահովման համապատասխան կենտրոնների միջոցով:

Հոդված 1.12

Օրենսդրության եւ նորմատիվ ակտերի փոփոխությունը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից Կողմերը պարտավորվում են ձեռնարկել ընդհանուր եւ հատուկ բնույթի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ սույն Համաձայնագրին համապատասխան իրենց պարտավորությունների կատարումն ապահովելու համար, եւ, անհրաժեշտության դեպքում, իրենց համապատասխան օրենսդրության մեջ կատարում են ուղղումներ՝ սույն Համաձայնագրի դրույթներին այն համապատասխանեցնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 2.

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Հոդված 2.1

Առավել բարենպաստության ռեժիմը

1. Ցանկացած տեսակի մաքսատուրքերի եւ վճարների մասով, որոնք կիրառվում են ներմուծման կամ արտահանման նկատմամբ կամ կապակցությամբ, կամ կիրառվում են ներմուծման կամ արտահանման դիմաց վճարումների միջազգային փոխանցման նկատմամբ, եւ այդպիսի տուրքերի ու վճարների գանձման միջոցի մասով, ինչպես նաեւ ներմուծման եւ արտահանման հետ կապված բոլոր կանոնների ու ձեականությունների մասով եւ 2.2 հոդվածի 2-րդ ու 3-րդ կետերում նշված բոլոր հարցերի մասով, որեւէ այլ երկրի տարածքում արտադրված կամ դրա համար նախատեսված որեւէ ապրանքի համար Կողմի կողմից տրամադրվող ցանկացած առավելություն, արտոնություն, առանձնաշնորհում կամ ազատում անհապաղ եւ անվերապահորեն տրամադրվում է մյուս Կողմի տարածքում արտադրված կամ դրա համար նախատեսված նմանատիպ ապրանքների համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում այն առանձնաշնորհումների դեպքում, որոնք՝

ա) որեւէ Կողմի կողմից տրամադրվել են հարեան երկրներին՝ սահմանամերձ առեւտուրը պարզեցնելու նպատակով.

բ) որեւէ Կողմի կողմից տրամադրվել են մաքսային միության կամ ազատ առեւտրի գոտու վերաբերյալ համաձայնագրին, կամ մաքսային միության կամ ազատ առեւտրի գոտու ձեավորման համար անհրաժեշտ՝ ժամանակավոր համաձայնագրին համապատասխան.

- գ) Կողմի կողմից տրամադրվել են զարգացող եւ առավել թույլ զարգացած երկրներին՝ սակագնային առանձնաշնորհումների ընդհանուր սխեմային համապատասխան:

Հոդված 2.2

Ազգային ռեժիմը⁴

1. Կողմերն ընդունում են, որ ներքին հարկերն ու մյուս ներքին վճարները, եւ ներքին վաճառքին առնչվող օրենքները, նորմատիվ ակտերն ու պահանջները, ապրանքների վաճառքի, գնման, փոխադրման, բաշխման կամ օգտագործման վերաբերյալ առաջարկները, ինչպես նաեւ ապրանքների համակցում, մշակում եւ որոշակի քանակությամբ ու մասնաբաժիններով օգտագործում պահանջող ներքին քանակական սահմանափակումները չեն կիրառվում ներմուծվող կամ ներքին ապրանքների նկատմամբ՝ ներքին արտադրությանը սատարելու նպատակով⁵:

⁴ Ցանկացած ներքին հարկ կամ այլ ներքին վճար, կամ ցանկացած օրենք, կանոն կամ պահանջ, որոնց մասին նշվում է 1-ին կետում, եւ որոնք կիրառվում են ներմուծվող ապրանքների կամ համանման հայրենական արտադրության ապրանքների համար, եւ որոնք գանձվում կամ գործում են ներմուծվող ապրանքների համար ներմուծման պահին կամ վայրում, այնուամենայնիվ, պետք է դիտարկվեն որպես ներքին հարկ կամ այլ ներքին վճար կամ օրենք, կանոն կամ պահանջ, որոնց մասին նշվում է 1-ին կետում, եւ, համապատասխանաբար, դրանց վրա տարածվում են 2.2 հոդվածի դրույթները:

⁵ Կողմերը ձեռնարկում են այնպիսի ողջամիտ միջոցներ, որոնք իրենց համար կարող են հասանելի լինել պետական կառավարման տարածաշրջանային եւ տեղական մարմինների, ինչպես նաեւ իրենց տարածքների իշխանության մարմինների կողմից՝ 1-ին կետի պահպանումն ապահովելու համար: «Ողջամիտ միջոցներ» եզրույթի օգտագործմամբ չի պահանջվում, օրինակ, գործող ազգային օրենսդրության չեղարկում, որով պետական կառավարման տեղական մարմինները լիազորվում են կիրառելու այնպիսի ներքին հարկեր, որոնք թեեւ պաշտոնապես չեն համաձայնեցվում 2.2 հոդվածի դրույթների հետ, սակայն փաստացի համապատասխանում են այդ հոդվածի ոգուն, եթե այդ չեղարկման արդյունքում էապես կվատանա պետական կառավարման համապատասխան տեղական մարմինների կամ իշխանության մարմինների ֆինանսական դրությունը: Իսկ պետական կառավարման տեղական մարմինների կամ իշխանության մարմինների կողմից այնպիսի հարկման դեպքում, որը հակասում է 2.2 հոդվածի թե՛ դրույթներին, թե՛ ոգուն, «ողջամիտ միջոցներ» եզրույթի օգտագործումը Կողմին թույլ է տալիս անցումային ժամանակահատվածի ընթացքում աստիճանաբար

2. Մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ներմուծվող ապրանքները, ոչ ուղղակի եւ ոչ էլ անուղղակի ենթակա չեն ներքին հարկման կամ ցանկացած բնույթի այլ ներքին վճարների, որոնք գերազանցում են նմանատիպ ներքին ապրանքների նկատմամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառվող ներքին հարկերն ու վճարները: Բացի այդ, Կողմերը ներմուծվող կամ ներքին ապրանքների նկատմամբ ներքին հարկումը կամ մյուս ներքին վճարները չեն կիրառում այնպես, որ խախտվեն սույն հոդվածի 1-ին կետով սահմանված սկզբունքները⁶:

3. Մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ներմուծվող ապրանքների համար ապահովվում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան ազգային ծագում ունեցող նմանատիպ ապրանքների համար տրամադրվող ռեժիմը՝ դրանց ներքին վաճառքին, վաճառքի, գնման, փոխադրման, բաշխման կամ օգտագործման վերաբերյալ առաջարկներին առնչվող բոլոր օրենքների, նորմատիվ ակտերի ու պահանջների առումով: Սույն կետի դրույթներով չի բացառվում տարբերակված ներքին տրանսպորտային վճարների կիրառումը, որոնց գանձման համար որպես հիմք է ընդունվում այն, թե ինչ տնտեսական գործունեություն է իրականացվում այդ տրանսպորտային միջոցներով, այլ ոչ թե արտադրանքի ծագման երկիրը:

4. Կողմերը չեն սահմանում եւ չեն պահպանում որեւէ ներքին քանակական սահմանափակում ապրանքների համակցման, մշակման կամ որոշակի քանակությամբ ու մասնաբաժիններով օգտագործման համար, որով ուղղակիորեն կամ անուղղակիորեն պահանջվում է, որ սահմանափակման ենթակա ապրանքի որոշակի քանակություն կամ մասնաբաժին մատակարարվի ներքին աղբյուրներից:

բացառել անհամատեղելի հարկումը, եթե դրա անսպասելի բացառումը վարչական ու ֆինանսական էական դժվարություններ կստեղծի:

⁶ 2-րդ կետի առաջին նախադասության պահանջները բավարարող հարկը երկրորդ նախադասության առաջարկների հետ համարվում է անհամատեղելի միայն այն դեպքերում, երբ առկա է մրցակցություն մի կողմից՝ հարկվող ապրանքների, մյուս կողմից՝ համանման հարկով չհարկված՝ ուղղակիորեն մրցակցող կամ փոխարինվող ապրանքների միջեւ:

Բացի այդ, Կողմերը ներքին քանակական սահմանափակումները չեն կիրառում այնպես, որ խախտվեն սույն հոդվածի 1-ին կետով սահմանված սկզբունքները⁷:

5. Ապրանքների համակցմանը, մշակմանը եւ որոշակի քանակությամբ ու մասնաբաժիններով օգտագործմանն առնչվող ներքին քանակական սահմանափակումները չեն կիրառվում այնպես, որ ցանկացած այդպիսի քանակություն կամ մասնաբաժին բաշխվի մատակարարման ներքին աղբյուրներին:

6. ա) Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում այն օրենքների, նորմատիվ ակտերի կամ պահանջների նկատմամբ, որոնցով կարգավորվում են պետական հաստատությունների կողմից գնվող արտադրանքի մատակարարումները, որոնք կատարվում են պետական նպատակներով, այլ ոչ թե կոմերցիոն վերավաճառքի կամ կոմերցիոն վաճառքի նպատակով ապրանքների արտադրության մեջ օգտագործելու համար:

բ) Սույն հոդվածի դրույթներով չի բացառվում սուբսիդիաների վճարումը բացառապես ներքին արտադրողներին, այդ թվում՝ վճարումները ներքին արտադրողներին՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան կիրառվող ներքին հարկերի կամ վճարների մուտքերից ստացված, ինչպես նաեւ ներքին արտադրանքի պետական գնումների միջոցով իրագործվող սուբսիդիաների վճարումը:

7. Կողմերն ընդունում են, որ առավելագույն գնի վերահսկման ներքին միջոցները, անգամ սույն հոդվածի մյուս դրույթների պահպանման դեպքում, կարող են վնաս հասցնել ներմուծվող արտադրանք մատակարարող Կողմերի շահերին:

⁷ 4-րդ կետի առաջին նախադասության դրույթների հետ համատեղելի նորմատիվ ակտը չի դիտարկվում որպես երկրորդ նախադասության դրույթներին հակասող ակտ ցանկացած դեպքում, երբ այն թույլ ապրանքները, որոնց վրա տարածվում են նորմատիվ ակտերը, արտադրված են երկրի ներսում՝ զգալի քանակությամբ: Նորմատիվ ակտը չի կարող դիտարկվել որպես երկրորդ նախադասության դրույթների հետ համատեղելի ակտ այն հիմքով, որ նորմատիվ կարգավորման ենթակա ապրանքներից յուրաքանչյուրի համար սահմանված մասնաբաժինը կամ քանակությունը հավասար հարաբերակցություն է ներմուծվող եւ ներքին ապրանքների միջեւ:

Համապատասխանաբար, այդպիսի միջոցներ կիրառող Կողմը պետք է հաշվի առնի արտահանման ոլորտում մյուս Կողմի շահերը՝ այդպիսի վնասից հնարավորինս խուսափելու համար:

Հոդված 2.3

Մաքսատուրքերի նվազեցումը եւ (կամ) չեղարկումը

1. Յուրաքանչյուր Կողմ այլ Կողմի ծագում ունեցող ապրանքների առնչությամբ տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որ սահմանվել է սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում՝ դրա սակագնային պարտավորությունների ցանկին համապատասխան:
2. Կողմի ծագում ունեցող ապրանքների առնչությամբ՝ մյուս Կողմի սակագնային պարտավորությունների ցանկին համապատասխան՝ այդ մյուս Կողմի տարածք այդ ապրանքների ներմուծման դեպքում եւ հաշվի առնելով դրա սակագնային պարտավորությունների ցանկում սահմանված պայմանները, պահանջներն ու հստակեցումները՝ սակագնային պարտավորությունների համապատասխան ցանկում սահմանված չափը գերազանցող մաքսատուրքերի դրույքաչափերը չեն կիրառվելու: Այդ ապրանքների առնչությամբ չեն կիրառվելու նաեւ ցանկացած այլ տուրք եւ ցանկացած տեսակի վճար, որոնք կիրառվում են ներմուծման առնչությամբ կամ ներմուծման հետ կապված եւ որոնք գերազանցում են սակագնային պարտավորությունների ցանկում սահմանված մաքսատուրքերի դրույքաչափերը:
3. Սույն հոդվածով որեւէ Կողմի չի արգելվում ցանկացած ապրանքի ներմուծման առնչությամբ ցանկացած պահի սահմանել՝
 - ա) ներքին այն հարկերին համարժեք վճարները, որոնք, 2.2 հոդվածի 2-րդ կետին համապատասխան, սահմանվել են համանման հայրենական

արտադրության ապրանքների առնչությամբ կամ ցանկացած այնպիսի նյութի առնչությամբ, որից ամբողջությամբ կամ մասնակիորեն արտադրվել կամ վերամշակվել է ներմուծվող ապրանքը.

- բ) սույն Համաձայնագրի 3-րդ գլխին (Ներքին շուկայի պաշտպանության միջոցներ) համապատասխան սահմանվող ցանկացած տուրք.
- գ) համապատասխան ծառայությունների տրամադրման ծախսերին համարժեք տուրքեր եւ այլ ծանրաբեռնումներ:

4. Եթե Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքի համար սահմանված՝ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածին համապատասխան կիրառվող մաքսատուրքի արտոնյալ դրույքաչափն ավելի բարձր է, քան առավել բարենպաստության ռեժիմին համապատասխան կիրառվող մաքսատուրքի դրույքաչափն այդ նույն ապրանքի համար, ապա այդ ապրանքի մասով կիրառվում է վերջին դրույքաչափը:

Հոդված 2.4

Կիրառվող սակագնային անվանացանկի փոփոխությունները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ՆՀ-ի ու դրա նկարագրերի հիման վրա կազմված՝ իր կողմից կիրառվող անվանացանկում կատարվող ցանկացած փոփոխություն կատարվի՝ առանց խախտելու սույն Համաձայնագրի 1-ին հավելվածին համապատասխան սահմանված սակագնային պարտավորությունները:
2. ՆՀ-ի ու դրա նկարագրերի հիման վրա կազմված՝ ԵԱՏՄ-ի կողմից կիրառվող ապրանքային անվանացանկի եւ ՆՀ-ի ու դրա նկարագրերի հիման վրա կազմված՝ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից կիրառվող ապրանքային անվանացանկի այդպիսի փոփոխություն պետք է կատարվի համապատասխանաբար Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Իրանի

Իսլամական Հանրապետության կողմից: Կողմերը բոլորին հասանելի վայրում ժամանակին հրապարակում են ՆՀ-ի եւ դրա նկարագրերի հիման վրա կազմված՝ կիրառվող անվանացանկի ցանկացած փոփոխություն, ինչպես նաեւ յուրաքանչյուր տարի միմյանց տեղեկացնում են այդպիսի փոփոխությունների մասին:

Հոդված 2.5

Ներմուծման եւ արտահանման հետ կապված հարկերը, վճարներն ու ձեականությունները⁸

1. ա) Բոլոր վճարումներն ու ցանկացած բնույթի վճար (բացի 2.2 հոդվածին համապատասխան ներմուծման ու արտահանման տուրքերից եւ հարկերից), որոնք Կողմերի կողմից կիրառվում են ներմուծման կամ արտահանման նկատմամբ կամ կապակցությամբ, սահմանափակվում են մատուցված ծառայությունների մոտավոր արժեքի չափով եւ չեն հանդիսանում միջնորդավորված սատարում ներքին ապրանքներին կամ ներմուծման կամ արտահանման հարկում՝ հարկաբյուջետային նպատակով:
- բ) Կողմերն ընդունում են «ա» ենթակետում նշված տուրքերի ու վճարների քանակն ու տեսակները կրճատելու անհրաժեշտությունը:

⁸ Չնայած այն փաստին, որ 2.5 հոդվածի գործողության շրջանակը չի ընդգրկում արժույթային փոխարժեքների բազմաքանակության կիրառումը, որպես այդպիսիք, 1-ին եւ 4-րդ կետերում դատապարտվում է արժույթային հարկերի կամ վճարների կիրառումը որպես արժույթային փոխարժեքների բազմաքանակության գործելակերպի անցկացման եղանակ. սակայն, եթե Կողմը, ստանալով Արժույթի միջազգային հիմնադրամի հավանությունը, վճարային հաշվեկշռի նկատառումներով գանձում է արժույթային վճարներ արժույթային փոխարժեքների բազմաքանակության պայմաններում, ապա սույն Համաձայնագրի ոչ մի դրույթով չի բացառվում Կողմի կողմից արժույթային վերահսկման միջոցների կամ արժույթային սահմանափակումների կիրառումը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներին կամ մյուս Կողմի հետ Կողմի՝ փոխանակման վերաբերյալ հատուկ համաձայնագրի հոդվածներին համապատասխան:

գ) Կողմերն ընդունում են նաեւ ներմուծման ու արտահանման ձեւականությունները պարզեցնելու եւ դրանց ծավալները նվազագույնին հասցնելու, ինչպես նաեւ ներմուծմանն ու արտահանմանն առնչվող փաստաթղթերին ներկայացվող պահանջները կրճատելու ու պարզեցնելու անհրաժեշտությունը:⁹

2. Կողմը, մյուս Կողմի պահանջով, վերանայում է իր օրենքների ու նորմատիվ ակտերի գործողությունը՝ սույն հոդվածին համապատասխան:

3. Մաքսային կանոնների կամ ընթացակարգային պահանջների աննշան խախտումների համար Կողմերը շոշափելի տուգանային պատժամիջոցներ չեն կիրառում: Մասնավորապես, այն տուգանային պատժամիջոցները, որոնք նշանակվում են մաքսային փաստաթղթերի մեջ ցանկացած այնպիսի բացթողման կամ սխալի համար, որը հեշտ է ուղղել եւ որն ակնհայտորեն արվել է առանց խարդախություն անելու մտադրության եւ ոչ էլ կոպիտ անփութության հետեւանքով, չեն գերազանցում բացառապես նախազգուշացման ձեւով կիրառվող միջոցները:

4. Սույն հոդվածի դրույթները տարածվում են այն վճարների, վճարումների, ձեւականությունների ու պահանջների վրա, որոնք սահմանվում են կառավարական մարմինների կողմից ներմուծման եւ արտահանման, ինչպես նաեւ հետեւյալի առնչությամբ՝

ա) հյուպատոսական գործողություններ, օրինակ՝ հյուպատոսական ապրանքագրեր ու սերտիֆիկատներ.

բ) քանակական սահմանափակումներ.

գ) լիցենզավորում.

⁹ 1-ին կետին համապատասխանում է այն դրույթը, երբ մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ապրանքների ներմուծման դեպքում ապրանքների ծագման սերտիֆիկատի տրամադրում պահանջվում է միայն այն դեպքերում, երբ դա խիստ անհրաժեշտ է:

- դ) արժույթային վերահսկողություն.
- ե) վիճակագրական հաշվառում.
- զ) փաստաթղթեր, փաստաթղթավորում եւ սերտիֆիկացում.
- է) վերլուծություն եւ ստուգում, եւ
- ը) բեռների կարանտին, սանիտարական վերահսկողություն եւ մշակում:

5. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր իրավասու մարմիններն իրենց պաշտոնական կայքերում ծանոթացման համար հրապարակեն տեղեկատվություն իրենց կողմից կիրառվող տուրքերի ու վճարների վերաբերյալ:

Հոդված 2.6

Առեստրային նորմերի վարչարարությունը

1. Կողմերի կողմից գործողության մեջ դրվող ընդհանուր կիրառության օրենքները, նորմատիվ ակտերը, դատական վճիռներն ու վարչական որոշումները, որոնք կապված են մաքսային նպատակներով ապրանքների դասակարգման կամ արժեքի որոշման կամ մաքսային դրույքաչափերի, հարկերի կամ այլ վճարների, ինչպես նաեւ ներմուծման կամ արտահանման, կամ դրանց դիմաց վճարումների փոխանցման նկատմամբ պահանջների, սահմանափակումների արգելքների հետ, կամ որոնք ազդեցություն ունեն վաճառքի, բաշխման, փոխադրման, ապահովագրության, պահեստում տեղաբաշխման ստուգման, ցուցադրման, վերամշակման, համակցման կամ այլ օգտագործման վրա, անհետաձգելիորեն հրապարակվում են այնպես, որ իշխանություններն ու առեստրային ընկերությունները կարողանան ծանոթանալ դրանց: Հրապարակվում են նաեւ միջազգային առեստրի քաղաքականության վրա ազդեցություն ունեցող համաձայնագրերը, որոնք գործում են կառավարության եւ կառավարական

կազմակերպության միջեւ: Սույն կետի դրույթները Կողմերին չեն պարտավորեցնում բացահայտել գաղտնի տեղեկատվությունը, որի բացահայտումը կխոչընդոտի օրենքի կատարումը կամ այլ կերպ կհակասի հասարակական շահերին կամ կհանգեցնի թե՛ պետական, թե՛ մասնավոր առանձին ձեռնարկությունների օրինական կոմերցիոն շահերի ոտնահարմանը:

2. Կողմերի կողմից ընդունված ընդհանուր կիրառության միջոցները, որոնք կապված են ներմուծման մաքսատուրքի կամ այլ վճարների դրույքաչափի՝ սահմանված եւ մշտական գործելակերպին համապատասխան բարձրացման հետ, կամ ներմուծման կամ դրանց դիմաց վճարումների փոխանցման նկատմամբ նոր կամ ավելի ծանրաբեռնող պահանջի, սահմանափակման կամ արգելքի կիրառումը, ուժի մեջ չեն մտնում՝ մինչեւ դրանց պաշտոնական հրապարակումը:

3. ա) Յուրաքանչյուր Կողմ միատեսակ, արդար եւ խելամիտ կերպով կիրառում է սույն հոդվածի 1-ին կետում նշված իր բոլոր օրենքները, նորմատիվ ակտերը, վճիռներն ու որոշումները:

բ) Յուրաքանչյուր Կողմ առավելագույնս կարճ ժամկետում պահպանում կամ հիմնում է դատական, արբիտրաժային կամ վարչական տրիբունալներ կամ ընթացակարգեր, մասնավորապես՝ մաքսային հարցերին առնչվող վարչական գործողության անհապաղ վերանայման եւ շտկման նպատակով: Այդպիսի տրիբունալները կամ ընթացակարգերն անկախ են այն մարմիններից, որոնց վերապահված է վարչական իրավունքի նորմերի կիրառումը, եւ նրանց որոշումները կատարվում են այդ մարմինների կողմից, ու վերջիններս իրենց գործելակերպում առաջնորդվում են այդ որոշումներով, եթե միայն ներմուծողների կողմից բողոք ներկայացնելու համար սահմանված ժամանակահատվածի ընթացքում վերին աստիճանի դատարան կամ տրիբունալ վերաքննիչ բողոք չի ներկայացվում. պայմանով, որ այդ մարմնի կենտրոնական ղեկավարությունը կարող է

միջոցներ ձեռնարկել՝ մեկ ուրիշ վարույթի շրջանակներում այդ հարցը վերանայելու համար, եթե առկա են բավարար պատճառներ՝ ենթադրելու, որ այդ որոշումն անհամատեղելի է օրենքի սահմանված սկզբունքների կամ իրական փաստերի հետ:

- գ) Սույն կետի «բ» ենթակետի դրույթներով չի պահանջվում սույն Համաձայնագրի ամսաթվի դրությամբ Կողմի տարածքում գործող այն ընթացակարգերի չեղարկում կամ փոխարինում, որոնցով փաստացիորեն ապահովվում է վարչական գործողությունների օբյեկտիվ եւ անկողմնակալ վերանայումը, նույնիսկ եթե այդպիսի ընթացակարգերն ամբողջովին կամ միայն ձեւականորեն անկախ չեն այն մարմիններից, որոնց վերապահված է վարչական իրավունքի նորմերի կիրառումը: Այդպիսի ընթացակարգեր կիրառող ցանկացած Կողմ հարցման հիման վրա տրամադրում է ամբողջական տեղեկատվություն դրանց վերաբերյալ, որպեսզի մյուս Կողմը կարողանա սահմանել, թե արդյոք այդ ընթացակարգերը համապատասխանում են սույն ենթակետի պահանջներին:

Հոդված 2.7

Քանակական սահմանափակումները¹⁰

1. Սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված ապրանքների մասով արգելքները կամ սահմանափակումները, բացի քվոտաների միջոցով ներմուծված տուրքերից, հարկերից կամ այլ վճարներից, ներմուծման կամ արտահանման լիցենզիաներից կամ այլ միջոցներից, չեն սահմանվում եւ չեն պահպանվում ցանկացած Կողմի կողմից ցանկացած այլ Կողմի տարածքից այդ ապրանքների

¹⁰ 2.7 հոդվածի բոլոր կետերում «ներմուծման սահմանափակումներ» եւ «արտահանման սահմանափակումներ» եզրույթները ներառում են պետության կողմից իրականացվող առետրային գործառնությունների միջոցով կիրառվող սահմանափակումները:

ներմուծման կամ ցանկացած այլ Կողմի տարածքի համար նախատեսված այդ ապրանքների արտահանման կամ արտահանման նպատակով վաճառքի դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն տարածվում՝

- ա) արտահանման արգելքների կամ սահմանափակումների վրա, որոնք ժամանակավորապես կիրառվում են պարենային ապրանքների կամ արտահանող Կողմի համար կարելու այլ ապրանքների սուր պակասուրդը կանխարգելելու կամ նվազեցնելու համար.
- բ) արտահանման կամ ներմուծման արգելքների կամ սահմանափակումների վրա, որոնք անհրաժեշտ են ստանդարտների կամ նորմատիվ ակտերի կիրառման համար՝ միջազգային առեստրոմ ապրանքների դասակարգման, տեսակավորման կամ մարքեթինգի նպատակով.
- գ) ցանկացած ձեռով¹¹ ներմուծվող ցանկացած գյուղատնտեսական կամ ձկնատնտեսական ապրանքի ներմուծման սահմանափակումների վրա, որոնք անհրաժեշտ են այն կառավարական միջոցների կատարման համար, որոնք գործում են՝
- ի) սահմանափակելու սպառման կամ արտադրության համար թույլատրված հայրենական արտադրության համանման ապրանքի քանակությունը կամ, եթե համանման ապրանքի զգալի ծավալով հայրենական արտադրություն չկա, ապա հայրենական արտադրության այնպիսի ապրանքի քանակությունը, որն ուղղակիորեն կարող է փոխարինվել ներմուծվող ապրանքով, կամ

¹¹ Տվյալ կետում «ցանկացած ձեռով» եզրույթը վերաբերում է մշակման սկզբնական փուլում գտնվող միեւնոցն արագ փչացող ապրանքներին, որոնք ուղղակիորեն մրցում են թարմ ապրանքների հետ, եւ ազատ ներմուծման դեպքում թարմ ապրանքների նկատմամբ սահմանափակումները անարդյունավետ են դարձնում:

- ii) շուկայից հանելու հայրենական արտադրության համանման ապրանքի ժամանակավոր ավելցուկը կամ, եթե համանման ապրանքի զգալի ծավալով հայրենական արտադրություն չկա, ապա հայրենական արտադրության այնպիսի ապրանքի քանակությունը, որն ուղղակիորեն կարող է փոխարինվել ներմուծվող ապրանքով՝ առկա ավելցուկը հայրենական սպառողների որոշ խմբերի անվճար կամ ընթացիկ շուկայական գներից ավելի ցածր գներով տրամադրելու միջոցով, կամ
- iii) սահմանափակելու կենդանական ծագում ունեցող ցանկացած այնպիսի ապրանքի արտադրության համար թույլատրելի քանակությունը, որի արտադրությունն ուղղակիորեն, ամբողջությամբ կամ հիմնականում կախված է ներմուծվող հումքային ապրանքից, եթե տվյալ ապրանքի հայրենական արտադրությունը հարաբերականորեն աննշան է:

Ցանկացած Կողմ, որը կիրառում է ցանկացած ապրանքի ներմուծման սահմանափակումները սույն կետի «գ» ենթակետին համապատասխան, համընդհանուր ծանուցման համար հրապարակում է հետագայում որոշակի ժամանակահատվածի ընթացքում ներմուծման համար թույլատրվող ապրանքի ընդհանուր քանակությունը կամ արժեքը եւ այդ քանակության կամ արժեքի ցանկացած փոփոխություն: Բացի այդ՝ վերոնշյալ «i» ենթակետի համաձայն կիրառվող ցանկացած սահմանափակման արդյունքում չպետք է կրճատվի ներմուծման ընդհանուր ծավալը՝ հայրենական արտադրության ընդհանուր ծավալի նկատմամբ, այն հարաբերակցության համեմատությամբ, որը, ինչպես եւ ակնկալվում է, դրանց միջեւ սահմանափակումների բացակայության դեպքում կարող է գոյություն ունենալ: Այդ հարաբերակցությունը որոշելիս Կողմը պատշաճ ուշադրություն է դարձնում այն հարաբերակցությանը, որը գերակշռող է եղել

նախորդ ներկայացուցչական ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաև ցանկացած հատուկ գործոնի¹², որը կարող էր ազդել կամ ազդում է համապատասխան ապրանքների առետրի վրա:

3. Կողմը մյուս Կողմի տարածքից որեւէ ապրանքի ներմուծման կամ մյուս Կողմի տարածքների համար նախատեսված որեւէ ապրանքի արտահանման համար արգելքներ կամ սահմանափակումներ չի կիրառում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բոլոր երրորդ երկրներից համանման ապրանքների ներմուծումը կամ բոլոր երրորդ երկրներ համանման ապրանքների արտահանումը համանման կերպով արգելված կամ սահմանափակված է:

4. Ցանկացած ապրանքի ներմուծման սահմանափակումներ կիրառելիս Կողմը ձգտում է այդ ապրանքի առետրի այնպիսի բաշխման, որ առավելագույնս հստակ արտացոլի առետրում իր մասնակցության չափը, որը մյուս Կողմը, ինչպես էլ ակնկալվում է, կարող էր ունենալ այդպիսի սահմանափակումների բացակայության դեպքում, եւ այս նպատակով պահպանում է հետեւյալ դրույթները.

ա) այն դեպքում, երբ դա գրեթե արդարացված է, սահմանվում են քվոտաներ, որոնք ներկայացնում են թույլատրվող ներմուծման ընդհանուր քանակություն (անկախ այն բանից՝ դրանք տարածվում են մատակարար երկրների միջեւ, թե ոչ), եւ ուղարկվում է ծանուցում դրանց չափի վերաբերյալ՝ սույն հոդվածի 5-րդ կետի «բ» ենթակետին համապատասխան.

բ) այն դեպքերում, երբ քվոտաները գրեթե իրագործելի չեն, սահմանափակումները կարող են կիրառվել ներմուծման լիցենզիաների կամ առանց քվոտայի թույլտվությունների միջոցով.

¹² «Հատուկ գործոններ» եզրույթը ներառում է փոփոխություններ՝ հայրենական ու օտարերկրյա արտադրողների արտադրողականության հարաբերական մակարդակում կամ փոփոխություններ տարբեր օտարերկրյա արտադրողների միջեւ, սակայն այն չի ներառում սույն Համաձայնագրով չթույլատրված եղանակներով արհեստականորեն առաջացրած փոփոխությունները:

- գ) Կողմերը, սույն կետի «դ» ենթակետին համապատասխան բաշխվող քվոտաների կիրառման նպատակներից բացի այլ նպատակով, չեն պահանջում, որ ներմուծման լիցենզիաները կամ թույլտվություններն օգտագործվեն կոնկրետ երկրից կամ աղբյուրից՝ համապատասխան ապրանքները ներմուծելու համար.
- դ) այն դեպքերում, երբ քվոտան բաշխվում է մատակարար երկրների միջև, սահմանափակումներ կիրառող Կողմը կարող է ձգտել համաձայնություն ձեռք բերել տվյալ ապրանքի մատակարարման մեջ շոշափելի շահ ունեցող երկրների՝ ներառյալ մյուս Կողմի հետ՝ քվոտայում մասնաբաժինների բաշխման նպատակով: Այն դեպքերում, երբ այդ մեթոդը ողջամտորեն արդարացված չէ, Կողմը մյուս Կողմին տվյալ ապրանքի ամբողջ քանակությունից կամ ներմուծման արժեքից տրամադրում է մասնաբաժիններ, որոնք հիմնված են ներկայացուցչական ժամանակահատվածին նախորդող ժամանակահատվածի ընթացքում մյուս Կողմի՝ տվյալ ապրանքի մատակարարումների հարաբերակցության վրա, ընդ որում, հաշվի են առնվում այն բոլոր հատուկ գործոնները, որոնք կարող էին կամ կարող են հետագայում ազդել այդ ապրանքի առետրի վրա: Չեն սահմանվում այնպիսի պայմաններ կամ ձեականություններ, որոնք ցանկացած Կողմին կխոչընդոտեին ամբողջությամբ օգտագործել մատակարարումների ցանկացած այդպիսի ընդհանուր քանակությունից կամ արժեքից իրեն տրամադրված մասնաբաժինը՝ պայմանով, որ ներմուծումը կատարվի այն սահմանված ժամանակահատվածի ընթացքում, որին կարող է վերաբերել քվոտան¹³:

¹³ «Կոմերցիոն նկատառումներով» բառակապակցությունը ոչ մի կերպ չի նշվել որպես կանոն քվոտաների բաշխման համար, քանի որ համարվում է, որ կառավարական մարմինների կողմից դրա կիրառումը ոչ միշտ է նպատակահարմար: Բացի այդ, այն դեպքերում, երբ դա նպատակահարմար է, Կողմը կարող է օգտագործել այդ նկատառումները համաձայնություն ձեռք բերելու գործընթացում՝

5. ա) Այն դեպքերում, երբ ներմուծման լիցենզիաները տրվում են ներմուծման սահմանափակումների առնչությամբ, սահմանափակումներ կիրառող Կողմը, մյուս Կողմի պահանջով, տրամադրում է ամբողջական համապատասխան տեղեկատվությունը՝ ներմուծման սահմանափակումները, վերջերս տրված ներմուծման լիցենզիաները կարգավորելու եւ այդ լիցենզիաները մատակարար երկրների միջեւ բաշխելու վերաբերյալ՝ *պայմանույ*, որ ներմուծող կամ մատակարարող ձեռնարկությունների անվանումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պարտավորություն չլինի:
- բ) Քվոտաների սահմանմանը հանգեցնող՝ ներմուծման սահմանափակումների դեպքում սահմանափակումներ կիրառող Կողմը համընդհանուր ծանոթացման համար հրապարակում է ապրանքների ընդհանուր քանակությունը կամ արժեքը կամ այն ապրանքները, որոնց ներմուծումը կթույլատրվի որոշակի հետագա ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաեւ այդ քանակության կամ արժեքի ցանկացած փոփոխություն: Համապատասխան ապրանքների ցանկացած մատակարարում, որը պաշտոնական հաղորդագրության հրապարակման պահին իրականացվում է տրանսպորտային փոխադրման ձեւով, չի բացառվում ներմուծման համար՝ *պայմանույ*, որ այն, հնարավորության դեպքում, դասվի համապատասխան ժամանակահատվածի ընթացքում ներմուծման համար թույլատրված քանակությանը, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, հաջորդ ժամանակահատվածի կամ ժամանակահատվածների ընթացքում ներմուծման համար թույլատրված ծավալներին՝ *ինչպես նաեւ այն պայմանույ*, որ եթե որեւէ Կողմ սովորական կարգով վերացնի այդ սահմանափակումներն այն

սույն հոդվածի 4-րդ կետի առաջին նախադասության մեջ ներկայացված ընդհանուր կանոնին համապատասխան:

ապրանքների համար, որոնք ստացվել են ներքին սպառման համար կամ դուրս են բերվել պահեստներից ներքին սպառման համար, ապա այդ պաշտոնական ծանուցման օրվանից երեսուն օրվա ընթացքում այդպիսի գործելակերպը դիտարկվի որպես սույն ենթակետին ամբողջությամբ համապատասխանող գործելակերպ:

- գ) Մատակարար երկրների միջև բաշխված քվոտաների դեպքում սահմանափակումներ կիրառող Կողմն անհապաղ ծանուցում է մյուս Կողմին՝ քվոտայի այն մասնաբաժինների մասին, որոնք տվյալ պահի դրությամբ բաշխվել են տարբեր մատակարար երկրներին՝ ըստ քանակության կամ արժեքի, եւ հրապարակում է այդ մասին ծանուցում՝ համընդհանուր ծանոթացման համար:

6. Սույն հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետին կամ 4-րդ կետի «դ» ենթակետին համապատասխան կիրառվող սահմանափակումների դեպքում որոշակի ապրանքների համար ներկայացուցչական ժամանակահատվածի ընտրությունը եւ այդ ապրանքների առետրի վրա ազդող որոշակի հատուկ գործոնների գնահատումն ի սկզբանե կատարվում է սահմանափակում կիրառող Կողմի կողմից՝ *պայմանով*, որ այդ Կողմը, մյուս Կողմի պահանջով, անհապաղ խորհրդակցի մյուս Կողմի հետ՝ սահմանվող մասնաբաժինը կամ ընտրված հիմնական ժամանակահատվածը կարգավորելու անհրաժեշտությանը կամ համապատասխան հատուկ գործոնները վերագնահատելու անհրաժեշտությանը կամ համապատասխան քվոտայի բաշխման կամ դրա անսահմանափակ օգտագործման վերաբերյալ միակողմանիորեն սահմանված պայմանները, ձեականությունները կամ մյուս դրույթները վերացնելու անհրաժեշտությանն առնչվող հարցի շուրջ:

7. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են ցանկացած Կողմի կողմից սահմանված կամ պահպանված ցանկացած սակագնային քվոտայի նկատմամբ եւ,

կիրառելիության սահմաններում, սույն հոդվածի սկզբունքները տարածվում են նաև արտահանման սահմանափակման վրա:

Հոդված 2.8

Տարանցման ազատությունը

1. Ապրանքները (ներառյալ ուղեբեռը), ինչպես նաև նավերն ու մյուս տրանսպորտային միջոցները համարվում են Կողմի տարածքով տարանցվող, երբ փոխադրումն այդ տարածքով, գերբեռնման, պահեստավորման, խմբաքանակների մասնատման կամ տրանսպորտի տեսակի փոփոխման առկայության կամ բացակայության դեպքում, ամբողջական երթուղու մի մասն է կազմում, որն սկսվում եւ ավարտվում է այն Կողմի սահմաններից դուրս, որի տարածքով բեռը շարժվում է: Այդ տեսակի շարժումը սույն հոդվածում սահմանվում է որպես «տարանցիկ փոխադրումներ»:

2. Սահմանվում է յուրաքանչյուր Կողմի տարածքով տարանցման ազատություն այն երթուղիներով, որոնք առավել հարմարեցված են միջազգային տարանցման համար, մյուս Կողմի տարածքներ կամ տարածքներից տարանցիկ փոխադրումների համար: Որեւէ տարբերություն չի դրվում, որը հիմնված է նավի դրոշի, ծագման վայրի, առաքման, մուտքի, ելքի կամ ուղղության, ինչպես նաև ապրանքների, նավի կամ տրանսպորտային մյուս միջոցների սեփականության հետ կապված այլ հանգամանքների վրա:

3. Կողմերը կարող են պահանջել, որ իրենց տարածքով տարանցիկ փոխադրումները կատարվեն համապատասխան մուտքի մաքսատան միջոցով, սակայն, բացի կիրառվող մաքսային օրենսդրությանը եւ նորմատիվ ակտերին անհամապատասխանության դեպքերից, մյուս Կողմերի տարածքից կամ տարածքով իրականացվող այդպիսի փոխադրումները չեն ենթարկվում անհիմն ուշացումների

կամ սահմանափակումների եւ ազատվում են տարանցման կապակցությամբ հարկվող մաքսատուրքերից եւ բոլոր տարանցիկ կամ այլ վճարներից՝ բացի փոխադրման կամ այն վճարներից, որոնք համադրելի են տարանցման կամ մատուցվող ծառայությունների արժեքի հետ կապված վարչական ծախսերի հետ:

4. Կողմի կողմից մյուս Կողմի տարածք կամ տարածքից տարանցիկ փոխադրումների համար բոլոր վճարներն ու կանոնները պետք է ողջամիտ լինեն՝ հաշվի առնելով փոխադրման պայմանները:

5. Տարանցման հետ կապված բոլոր վճարների, կանոնների ու ձեականությունների մասով յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի տարածք կամ տարածքով անցնող տարանցիկ փոխադրումների առնչությամբ տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը տրամադրվում է ցանկացած երրորդ երկիր կամ երկրից տարանցիկ փոխադրման առնչությամբ:¹⁴

6. Յուրաքանչյուր Կողմ ցանկացած այլ Կողմի տարածքով տարանցման մեջ գտնվող ապրանքների մասով տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը կտրամադրվեր այդպիսի ապրանքների առնչությամբ, եթե իրենց ծագման վայրից նշանակման վայրը դրանք փոխադրվեին՝ առանց այդ մյուս Կողմի տարածքով անցնելու: Կողմերը, սակայն, կարող են պահպանել ուղղակի բեռնառաքման իրենց պահանջները, որոնք գոյություն ունեն սույն Համաձայնագրի ամսաթվի դրությամբ՝ ցանկացած ապրանքի առնչությամբ, որի դեպքում այդ ուղղակի բեռնառաքումը պարտադիր պայման է՝ արտոնյալ դրույքաչափերով ապրանքների ներմուծման իրավունք ստանալու համար կամ առնչություն ունի տուրքերի գանձման նպատակով Կողմի կողմից սահմանված՝ գնահատման մեթոդի հետ:

¹⁴ Տրանսպորտային վճարների դեպքում 5-րդ կետում նշված սկզբունքը վերաբերում է նույն պայմաններում նույն երթուղով փոխադրվող համանման ապրանքներին:

7. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում ինքնաթիռների տարանցիկ շարժման նկատմամբ, սակայն կիրառվում են ապրանքների (այդ թվում՝ ուղեբեռի) օդային տարանցման առնչությամբ:

Հոդված 2.9

Ապրանքների առևտրի հարցերով կոմիտեն

1. Սույնով Կողմերը հիմնում են Ապրանքների առևտրի հարցերով կոմիտե (այսուհետ՝ «Ապրանքների հարցերով կոմիտե»), որը յուրաքանչյուր Կողմից ներկայացուցիչներ կընդգրկի:

2. Ապրանքի հարցերով կոմիտեն հանդիպում է ցանկացած Կողմի պահանջով՝ սույն գլխի, 3-րդ գլխի (Ներքին շուկայի պաշտպանության միջոցները), 4-րդ գլխի (Տեխնիկական խոչընդոտներն առևտրում), 5-րդ գլխի (Սանիտարական եւ բուսասանիտարական միջոցները), 6-րդ գլխի (Ծագումը որոշելու կանոնները) եւ 7-րդ գլխի (Մաքսային համագործակցությունը եւ առևտրային ընթացակարգերի պարզեցումը) առնչությամբ առաջացող ցանկացած հարց ուսումնասիրելու համար:

3. Ապրանքների հարցերով կոմիտեն կատարում է հետեւյալ գործառույթները՝

ա) սույն հոդվածի 2-րդ կետում նշված գլուխների ուսումնասիրություն եւ դրանց կիրառման նկատմամբ մոնիթորինգի անցկացում.

բ) սույն գլխի դրույթների եւ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված սակագնային պարտավորությունների ցանկերի ցանկացած ուղղման վերաբերյալ համապատասխան հանձնարարականների ուսումնասիրություն եւ, անհրաժեշտության դեպքում, մշակում Համատեղ կոմիտեի համար՝ շուկայի հասանելիության զարգացման եւ պարզեցման նպատակով.

- գ) ցանկացած առաջացող խնդրի համար կարգավորման միջոցներ սահմանելը եւ առաջարկելը.
- դ) սույն գլխի կիրառման արդյունքում առաջացող ցանկացած խնդրի գնահատման արդյունքների փոխանցում Համատեղ կոմիտեին:

Հոդված 2.10

Պարտավորությունները չկատարելը կամ խախտելը

1. Եթե որեւէ Կողմ գտնում է, որ սույն Համաձայնագրին համապատասխան ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր համար նախատեսված որեւէ օգուտ զրոյացվում կամ նվազում է կամ որ Համաձայնագրի որեւէ նպատակի ձեռքբերումը դժվարեցված է՝

- ա) մյուս Կողմի կողմից սույն Համաձայնագրին համապատասխան ստանձնած իր պարտավորությունները չկատարելու, կամ
- բ) մյուս Կողմի կողմից սույն Համաձայնագրի դրույթներին հակասող կամ չհակասող որեւէ միջոց կիրառելու, կամ
- գ) ցանկացած այլ իրավիճակի արդյունքում,

Կողմը, տվյալ հարցը բավարար չափով կարգավորելու նպատակով, իրավունք ունի մյուս Կողմին տրամադրելու գրավոր դիմումներ կամ առաջարկներ: Այն Կողմը, որի հասցեին այդպիսի դիմում է ստացվել, բարյացակամորեն ուսումնասիրում է իրեն ներկայացրած դիմումները կամ առաջարկները:

2. Եթե վաթսուն օրը չգերազանցող ողջամիտ ժամկետի ընթացքում Կողմերի կողմից բավարար կարգավորում չի կատարվում կամ եթե առաջացած դժվարություններն իրենց բնույթով դասվում են սույն հոդվածի 1-ին կետի «դ»

ենթակետում նշված դժվարություններին, ապա հարցը կարող է փոխանցվել Համատեղ կոմիտեի ուսումնասիրմանը: Համատեղ կոմիտեն անհապաղ ուսումնասիրում է այդ առնչությամբ իրեն փոխանցված ցանկացած հարց եւ տալիս է համապատասխան հանձնարարականներ կամ համապատասխան դեպքերում տվյալ հարցի վերաբերյալ որոշում է կայացնում:

3. Եթե Համատեղ կոմիտեն գտնում է, որ առկա հանգամանքները բավականաչափ լուրջ են՝ այդ միջոցը հիմնավորելու համար, ապա այն իրավունք ունի լիազորելու Կողմին դադարեցնելու մյուս Կողմի նկատմամբ այդպիսի զիջումների եւ սույն Համաձայնագրին համապատասխան ստանձնած այն մյուս պարտավորությունների կիրառումը, որոնք այն անհրաժեշտ կհամարի համապատասխան հանգամանքներում:

4. Եթե Համատեղ կոմիտեի միջոցով Կողմերի միջեւ համաձայնություն ձեռք չի բերվել, եւ քննարկվող հարցը մնում է բաց, ապա շահագրգիռ Կողմն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնելու զիջումները՝ մյուս Կողմին վերապահելով այդ հարցի շուրջ քննություն նախաձեռնելու իրավունքը՝ սույն Համաձայնագրի 8-րդ գլխին համապատասխան:

Հոդված 2.11

Պետական առևտրային ձեռնարկությունները

1.¹⁵ ա) Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է, որ եթե հիմնում կամ պահպանում է պետական ձեռնարկություն՝ անկախ դրա գտնվելու

¹⁵ Մարքեթինգի հարցերով այն խորհուրդների գործունեությունը, որոնք ստեղծվում են Կողմերի կողմից եւ որոնք մասնակցում են գնումների գործընթացներին կամ վաճառքներին, կարգավորվում է «ա» եւ «բ» ենթակետերի դրույթներով: Մարքեթինգի հարցերով այն խորհուրդների գործունեությունը, որոնք ստեղծվում են Կողմերի կողմից եւ որոնք չեն զբաղվում գնման գործունեությամբ կամ վաճառքներով, այլ սահմանում են մասնավոր առևտրի վրա տարածվող նորմատիվ ակտեր,

վայրից, կամ եթե ձեականորեն կամ գործնականում ցանկացած ձեռնարկության տրամադրում է բացառիկ կամ հատուկ արտոնություններ,¹⁶ ապա այդպիսի ձեռնարկությունն արտահանման կամ ներմուծման հետ կապված գնումների կամ վաճառքների ընթացքում, գործում է խտրականության բացառման ռեժիմի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, որոնք սահմանված են սույն Համաձայնագրով՝ այն կառավարական միջոցների համար, որոնք ազդում են անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվող ներմուծման կամ արտահանման վրա:

- բ) Սույն կետի «ա» ենթակետի դրույթները մեկնաբանվում են որպես պահանջ, որ այդպիսի ձեռնարկությունները, պատշաճորեն հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները, իրականացնեն այդպիսի գնումներ եւ վաճառքներ՝ ելնելով բացառապես կոմերցիոն նկատառումներից¹⁷ ներառյալ գնման եւ վաճառքի գինը, որակը, մատչելիությունը, մրցունակությունը, փոխադրումն ու մյուս պայմանները, ինչպես նաեւ մյուս Կողմի ձեռնարկությունների համար ստեղծում են անհրաժեշտ հնարավորություն՝ պայքարելու այդպիսի գնումներում կամ վաճառքներում մասնակցության համար՝ գործարար գործելակերպին համապատասխան:

կարգավորվում է սույն Համաձայնագրի համապատասխան հոդվածներով: Պետական ձեռնարկության կողմից տարբեր շուկաներում ապրանքների վաճառքի համար տարբեր գների սահմանումը չի բացառվում սույն հոդվածի դրույթներով՝ պայմանով, որ այդ տարբեր գները սահմանվեն կոմերցիոն նկատառումներով՝ արտահանման շուկաներում մատակարարման եւ պահանջարկի պայմանները կատարելու համար:

¹⁶Արտաքին առեստուր իրականացնելիս որակի եւ արդյունավետության ստանդարտների ապահովման համար կիրառվող կառավարական միջոցները, կամ այն արտոնությունները, որոնք տրամադրվում են ազգային բնական ռեսուրսների օգտագործման համար, սակայն չեն լիազորում իշխանություններին վերահսկողություն իրականացնելու համապատասխան ձեռնարկության առեստուրային գործունեության նկատմամբ, չեն համարվում «բացառիկ կամ հատուկ արտոնություններ»:

¹⁷«Կապված վարկ» ստացող երկիրը արտասահմանում անհրաժեշտ նյութական միջոցներ գնելիս իրավունք ունի դիտարկելու այդ վարկը՝ որպես «կոմերցիոն հաշվարկ»:

գ) Կողմերը չեն կարող իրենց իրավագրության ներքո գտնվող որեւէ ձեռնարկության (անկախ այն բանից, թե այն նկարագրված է սույն կետի «ա» ենթակետում, թե ոչ) գրկել սույն կետի «ա» եւ «բ» ենթակետերով սահմանված սկզբունքներին համապատասխան գործելու հնարավորությունից:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում պետական նշանակությամբ արագ կամ վերջնական սպառման համար նախատեսված եւ վերավաճառքի կամ այլ կերպ վաճառելու նպատակով արտադրության մեջ ապրանքներն օգտագործելու համար նախատեսված ապրանքների ներմուծման նկատմամբ:¹⁸ Այդպիսի ներմուծման դեպքում յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի առետրի համար տրամադրում է անկողմնակալ եւ արդար ռեժիմ:

3. Կողմերն ընդունում են, որ սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված տեսակի ձեռնարկությունները կարող են կառավարվել այնպես, որ լուրջ խոչընդոտներ ստեղծեն առետրի համար. հետեաբար, երկկողմ փոխշահավետ հիմքի վրա այն բանակցությունները, որոնք ուղղված են այդպիսի խոչընդոտների սահմանափակմանը կամ նվազեցմանը, կարելու են միջազգային առետրի ընդլայնման համար:

4. ա) Կողմերը Համատեղ կոմիտեին ծանուցում են այն ապրանքների մասին, որոնք ներմուծվում են իրենց տարածք կամ արտահանվում են իրենց տարածքից այն ձեռնարկությունների կողմից, որոնք դասվում են սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նկարագրված տեսակին:

բ) Սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում չներառված ապրանքների ներմուծման նկատմամբ մենաշնորհի ստեղծող, պահպանող կամ թույլատրող Կողմը, մյուս Կողմի պահանջով, այդ Կողմին ծանուցում է ոչ

¹⁸ «Ապրանքներ» եզրույթը սահմանափակվում է առետրի գործելակերպում ընդունված ապրանքներով եւ նախատեսված չէ ծառայությունների գնման կամ վաճառքի համար:

վաղ շրջանի ներկայացուցչական ժամանակահատվածի ընթացքում ապրանքների ներմուծման գնի¹⁹ ավելացման մասին, կամ, եթե դա անհնար է, ապրանքի վերավաճառքի համար սահմանված գնի մասին:

- գ) Այն Կողմը, որը պատճառներ ունի ենթադրելու, որ իր շահերը, սույն Համաձայնագրին համապատասխան, ոտնահարվում են սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նկարագրված տեսակին դասվող ձեռնարկության գործողություններով, այդպիսի ձեռնարկություն հիմնող, պահպանող կամ թույլատրող Կողմից պահանջում է տեղեկություններ տրամադրել սույն Համաձայնագրի դրույթների կատարման հետ կապված՝ դրա գործունեության վերաբերյալ:
- դ) Սույն կետի դրույթները որեւէ Կողմի չեն պարտավորեցնում բացահայտել գաղտնի տեղեկատվություն, որի բացահայտումը կխոչընդոտի օրենքի կատարումը կամ այլ կերպ կհակասի հասարակական շահերին կամ կհանգեցնի առանձին ձեռնարկությունների օրինական կոմերցիոն շահերի ոտնահարմանը:

¹⁹ «Ավելացում» եզրույթն այն տարբերությունն է, որով ներմուծվող ապրանքների ներմուծման համար մենաշնորհի արդյունքում սահմանված արժեքը (սույն Համաձայնագրի 2.2 հոդվածին (Ազգային ռեժիմը) համապատասխան ներքին հարկերը, տրանսպորտային փոխադրման, բաշխման եւ գնման, վաճառքի կամ հետագա գործողությունների ընթացքում մյուս ծախսերը, ինչպես նաեւ շահույթի ողջամիտ գործակիցը պահելուց հետո) գերազանցում է պահեստում ապրանքի արժեքը:

ԳԼՈՒԽ 3.

ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 3.1

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով օգտագործվում են հետևյալ սահմանումները՝

«հակազնազցման միջոց»՝ միջոց, որը, սույն գլխի դրույթներին համապատասխան, Կողմը կիրառում է այլ Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքի ներմուծման առնչությամբ՝ հակազդելու կամ կանխելու համար գնազցման ներմուծումը, որը պատճառում է կամ կարող է նյութական վնաս պատճառել կամ զգալիորեն դանդաղեցնել տնտեսության ճյուղի ստեղծումը.

«փոխհատուցման միջոց»՝ միջոց, որը, սույն գլխի դրույթներին համապատասխան, Կողմը կիրառում է այլ Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքի ներմուծման առնչությամբ՝ վերջինիս տարածքում տրամադրվող այն հատուկ սուբսիդիայի ազդեցությունը չեզոքացնելու համար, որը պատճառում է կամ կարող է նյութական վնաս պատճառել կամ զգալիորեն դանդաղեցնել տնտեսության ճյուղի ստեղծումը.

«հատուկ պաշտպանական միջոց»՝ միջոց, որը, սույն գլխի դրույթներին համապատասխան, Կողմը կիրառում է ապրանքի ներմուծման առնչությամբ՝ տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասը կամ այդ վնասը հասցնելու վտանգը կանխելու կամ փոխհատուցելու նպատակով, որն առաջացել է բոլոր երկրներից այդ ապրանքի ներմուծման ծավալն ավելանալու հետեանքով.

«երկկողմ պաշտպանական միջոց»՝ միջոց, որը, սույն գլխի դրույթներին համապատասխան, Կողմը կիրառում է այլ Կողմի տարածքի ծագում ունեցող

ապրանքի ներմուծման առնչությամբ՝ տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասը կամ այդ վնասը հասցնելու վտանգը կանխելու կամ փոխհատուցելու նպատակով, որն առաջացել է սույն Համաձայնագրին համապատասխան մաքսատուրքի դրույքաչափի նվազեցման կամ զրոյացման հետ կապված՝ այդ ապրանքի ներմուծման ծավալն ավելանալու հետեանքով:

Հոդված 3.2

Հակազնազցման եւ փոխհատուցման միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ կիրառում է հակազնազցման եւ փոխհատուցման միջոցներ՝ հակազնազցման ու փոխհատուցման միջոցների կիրառման կարգը կարգավորող իր օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի:
2. Ապրանքը դիտարկվում է որպես գնազցման օբյեկտ, այսինքն՝ որպես ապրանք, որը մուտք է գործել մյուս երկրի շուկա իր սովորական արժեքից ավելի ցածր գնով, եթե մեկ Կողմից մյուս Կողմ արտահանված ապրանքի արտահանման գինն ավելի ցածր է, քան առետրի բնականոն ընթացքի շրջանակներում արտահանող Կողմում սպառման համար նախատեսված համանման ապրանքի համար սահմանվող համեմատելի գինը: Արտահանող Կողմի շուկայում համանման ապրանքի վաճառքն արտադրության միջին կշռված ծախքերից ոչ պակաս գներով՝ վարչական, առետրային եւ ընդհանուր ծախքերի հաշվառմամբ, դիտարկվում է որպես առետրի բնականոն ընթացքի շրջանակներում իրականացվող գործընթաց: Հակազնազցման մասով քննություններ անցկացնելու նպատակով՝ արտահանող Կողմի ներքին շուկայում առետրի բնականոն ընթացքի շրջանակներում համանման ապրանքի վաճառքի բացակայության դեպքում, կամ երբ արտահանող երկրի ներքին շուկայում վաճառքի փոքր ծավալի պատճառով հնարավոր չէ անցկացնել

պատշաճ համադրում, գնագցման չափը որոշվում է՝ համադրելով համանման ապրանքի համեմատելի գնի հետ, երբ այն արտահանվում է համապատասխան երրորդ երկիր՝ պայմանով, որ այդ գինը ներկայացուցչական է, կամ ծագման երկրում արտադրության ծախքերի հետ, որոնց գումարվում է վարչական, առևտրային եւ ընդհանուր ծախքերի, ինչպես նաեւ շահույթի ողջամիտ գումար: Սույն կետի նպատակներով՝ ծախքերը սովորաբար հաշվարկվում են այն արտահանողի կամ արտադրողի հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որի նկատմամբ քննություն է անցկացվում՝ պայմանով, որ այդ փաստաթղթերը համապատասխանեն արտահանող երկրի հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներին եւ բավականաչափ ճշգրտորեն արտացոլեն տվյալ ապրանքի արտադրության ու վաճառքի հետ կապված ծախքերը: Իրավասու մարմինները հաշվի են առնում ծախքերի բաշխման ճշտության մասին գոյություն ունեցող բոլոր ապացույցները՝ ներառյալ այն ապացույցները, որոնք արտահանողի կամ արտադրողի կողմից տրամադրվում են քննության ընթացքում՝ պայմանով, որ ծախքերի այդպիսի բաշխումը պատմականորեն կատարվում է արտահանողի կամ արտադրողի կողմից, մասնավորապես, ամորտիզացման ու մաշվածության համապատասխան ժամանակահատվածը սահմանելու, կապիտալի ներդրումների գծով մասնահանումների եւ արտադրության զարգացմանն ուղղված մյուս ծախքերը ծածկելու մասով: Եթե սույն կետին համապատասխան ծախքերի բաշխման ժամանակ դա դեռ հաշվի չի առնվել, ապա ծախքերը համապատասխան ձեով ճշգրտվում են՝ հաշվի առնելով հետագա եւ (կամ) ընթացիկ արտադրության զարգացման համար նախատեսված ծախսերին առնչվող ոչ պարբերական հոդվածները կամ այն հանգամանքները, որոնց դեպքում քննություն անցկացնելու ժամանակահատվածի ընթացքում ծախքերը պայմանավորված են արտադրության ձեւավորման ժամանակահատվածի գործառնություններով:²⁰ Սույն կետի

²⁰ Արտադրության ձեւավորման ժամանակահատվածի գործառնությունների մասով ճշգրտումն արտացոլում է արտադրության ձեւավորման ժամանակահատվածի ավարտի դրությամբ եղած

նպատակներով՝ վարչական, առեստրային եւ ընդհանուր ծախքերի, ինչպես նաեւ շահույթի գումարները հիմնվում են առեստրի բնականոն ընթացքի շրջանակներում համանման ապրանքի արտադրության ու վաճառքի վերաբերյալ փաստացի տվյալների վրա, որոնք տրամադրվում են այն արտահանողի կամ արտադրողի կողմից, որի նկատմամբ քննություն է անցկացվում: Եթե այդ գումարները հնարավոր չէ սահմանել նշված հիմքով, ապա դրանք կարող են սահմանվել՝ հիմք ընդունելով՝

- i) այդ նույն կատեգորիայի ապրանքների արտադրության կամ ծագման երկրի ներքին շուկայում վաճառքի առնչությամբ՝ տվյալ արտահանողի կամ արտադրողի կողմից վճարված կամ ստացված փաստացի գումարները.
- ii) համանման ապրանքի արտադրության կամ ծագման երկրի ներքին շուկայում վաճառքի առնչությամբ՝ այն մյուս արտահանողների կամ արտադրողների կողմից վճարված կամ ստացված փաստացի միջին կշռված գումարները, որոնց նկատմամբ քննություն է անցկացվում.
- iii) ցանկացած այլ ողջամիտ մեթոդ՝ պայմանով, որ այդ մեթոդով սահմանված շահույթի գումարը չի գերազանցում ծագման երկրի ներքին շուկայում այդ նույն ընդհանուր կատեգորիայի ապրանքների վաճառքի դեպքում այլ արտահանողների կամ արտադրողների կողմից սովորաբար ստացվող շահույթը:

3. Այն դեպքերում, երբ արտահանման գինը սահմանված չէ կամ երբ, համապատասխան իրավասու մարմինների կարծիքով, արտահանման գինը վստահություն չի ներշնչում արտահանողի ու ներմուծողի կամ երրորդ երկրի միջեւ կապի կամ փոխհատուցման համաձայնագրի առնչությամբ, արտահանման գինը

ծախքերը կամ, եթե այդ ժամանակահատվածը ավելի երկար է, քան քննության ժամանակահատվածը, ապա՝ ամենավերջին ծախքերը, որոնք քննության ընթացքում կարող են ողջամտորեն հաշվի առնվել իրավասու մարմինների կողմից:

կարող է սահմանվել այն գնի հիման վրա, որով ներմուծված ապրանքներն առաջին անգամ վերավաճառվում են անկախ գնորդին, կամ, եթե ապրանքները չեն վերավաճառվում անկախ գնորդին կամ չեն վերավաճառվում այն տեսքով, որով դրանք ներմուծվել են, ապա՝ իրավասու մարմինների կողմից սահմանվող ողջամիտ հիմքով:

4. Արտահանման գնի ու սովորական արժեքի համեմատությունը կատարվում է արդար ձեով: Այդպիսի համեմատությունը պետք է կատարվի առետրային գործառնության միեւնոյն փուլում՝ սովորաբար պահեստից բեռնառաքման փուլում, եւ, հնարավորության դեպքում, միեւնոյն ժամանակ իրականացված վաճառքների նկատմամբ: Յուրաքանչյուր դեպքում կատարվում են համապատասխան անհրաժեշտ ճշգրտումներ, որոնց դեպքում հաշվի են առնվում գների համադրելիությանն առնչվող տարբերությունները՝ ներառյալ վաճառքի հանգամանքների ու պայմանների, հարկման, առետրի մակարդակների, քանակությունների, ֆիզիկական բնութագրերի տարբերությունները, ինչպես նաեւ ցանկացած այլ տարբերություն, որոնց մասով գների համադրելիության վրա դրանց ազդեցության մասին ապացույցներ են տրամադրվում: Սույն հոդվածի 3-րդ կետում նշված դեպքերում պետք է ճշգրտումներ կատարել նաեւ ծախսերի մասով՝ ներառյալ ներմուծման եւ վերավաճառքի միջեւ ընկած ժամանակահատվածում վճարված տուրքերն ու հարկերը, ինչպես նաեւ՝ ճշգրտումներ ստացված շահույթի մասով: Եթե այդպիսի դեպքերում փոփոխվում է գների համադրելիությունը, ապա իրավասու մարմինները սովորական արժեքը սահմանում են առետրային գործառույթի այն փուլում, որը համարժեք է այն փուլին, որում կիրառվելու համար սահմանվում է արտահանման գինը, կամ կատարում են սույն կետով թույլատրված անհրաժեշտ ուղղումները: Կողմի իրավասու մարմինը շահագրգիռ անձանց ցույց է տալիս, թե ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ՝ արդար համեմատություն անցկացնելու համար, եւ այդ կողմերի վրա ապացուցման անհիմն բեռ չի դնում:

- i) Եթե սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն համեմատություն անցկացնելու համար պահանջվում է մի արժույթից մյուսը վերահաշվարկ, ապա այդ վերահաշվարկը կատարվում է վաճառքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ պայմանով, որ եթե արտարժույթի վաճառքը ժամկետային շուկայում անմիջականորեն կապված է արտահանման համապատասխան մատակարարման հետ, ապա օգտագործվում է ժամկետով վաճառքի դեպքում կիրառվող փոխարժեքը: Փոխարժեքների տատանումները հաշվի չեն առնվում, եւ քննության ընթացքում իրավասու մարմիններն արտահանողներին առնվազն 60 օր են տրամադրում արտահանման գները ճշգրտելու համար՝ հաշվի առնելով փոխարժեքների կայուն փոփոխությունները քննության ժամանակահատվածի ընթացքում:
- ii) Հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ կետի դրույթները, որոնցով կարգավորվում է արդար համեմատության անցկացումը, գնագցման չափի առկայությունը քննության ընթացքում սովորաբար սահմանվում է՝ միջին կշռված սովորական արժեքը համեմատելով բոլոր համադրելի արտահանման գործարքների միջին կշռված գների հետ կամ սովորական արժեքը համեմատելով կոնկրետ գործարքների արտահանման գների հետ: Միջին կշռված հիմքով սահմանված սովորական արժեքը կարող է համեմատվել արտահանման կոնկրետ գործարքների գների հետ, եթե իրավասու մարմինները փաստեն, որ արտահանման գներն էապես տարբերվում են տարբեր գնորդների, տարածաշրջանների կամ ժամանակահատվածների միջեւ, եւ եթե բացատրություն տրվի, թե ինչու այդ տարբերությունները չեն կարող համապատասխան ձևով հաշվի առնվել միջին կշռված մեծությունների կամ կոնկրետ գործարքների գների միջեւ համեմատություն անցկացնելիս:

5. Այն դեպքում, երբ ապրանքները չեն ներմուծվում անմիջապես ծագման երկրից, այլ ներմուծող Կողմ արտահանվում են միջանկյալ երկրից, այն գինը, որով ապրանքներն արտահանման երկրից վաճառվում են ներմուծող Կողմին, սովորաբար համեմատում են արտահանման երկրում համեմատելի գնի հետ: Սակայն համեմատություն կարող է անցկացվել ծագման երկրում գնի հետ, եթե, օրինակ՝ ապրանքները պարզապես ուղարկվում են արտահանման երկրով, կամ այդ ապրանքները չեն արտադրվում արտահանման երկրում, կամ արտահանման երկրում դրանց համեմատելի գնի բացակայության դեպքում:

6. Սույն գլխի տեքստում «համանման ապրանք» եզրույթը նշանակում է նույնանման ապրանք, այսինքն՝ տվյալ ապրանքին բոլոր առումներով նման ապրանք, կամ այդ ապրանքի բացակայության դեպքում՝ այլ ապրանք, որը, բոլոր առումներով նման չլինելով այդ ապրանքին, ունի այդ ապրանքի բնութագրերին մոտ բնութագրեր:

7. Սույն գլխի նպատակներով՝ սուբսիդիաների առկայությունն ընդունվում է, եթե՝

ա) արտահանող Կողմի տարածքում կառավարության կամ ցանկացած հանրային մարմնի կողմից ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն, այսինքն՝ երբ.

i) կառավարությունն ուղղակիորեն փոխանցում է դրամական միջոցները (օրինակ՝ դոտացիաների, փոխառությունների կամ բաժնետոմսերի գնման ձեռով) կամ ստանձնում է այդ միջոցների փոխանցման պարտավորությունները (օրինակ՝ փոխառությունների դիմաց տրված երաշխիքների ձեռով),

ii) կառավարությունը հրաժարվում է գանձումից կամ չի գանձում իրեն հասանելիք եկամուտները (օրինակ՝ այնպիսի հարկային արտոնություններ, ինչպիսիք հարկային վարկերն են),

iii) կառավարությունը տրամադրում է ապրանքներ կամ ծառայություններ՝ բացի ընդհանուր ենթակառուցվածքից, կամ գնում է ապրանքներ,

iv) կառավարությունը կատարում է վճարումներ ֆինանսավորման մեխանիզմներում կամ մասնավոր անձին հանձնարարում կամ կարգադրում է կատարել «i»-«iii» ենթակետերում նշված գործառույթներից մեկը կամ մի քանիսը, որոնք սովորաբար դրվում են կառավարության վրա, ընդ որում, այնպիսի պայմաններով, որոնք փաստացիորեն չեն տարբերվում կառավարությունների սովորական գործելակերպից,

կամ

բ) գոյություն ունի սուբսիդիա ստացողի եկամուտների եւ գների պահպանման ցանկացած այլ ձեւ, որն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է ունենում արտահանող Կողմի տարածքից ցանկացած ապրանքի արտահանման ծավալների ավելացման կամ դրա տարածք ցանկացած ապրանքի ներմուծման ծավալների կրճատման վրա,

եւ

գ) այդպիսով, առավելություն է տրամադրվում:

8. Արտահանող Կողմի սուբսիդիան համարվում է հատուկ, եթե արտահանող Կողմի օրենքի համաձայն՝ սուբսիդիայի հասանելիությունը փաստացիորեն սահմանափակվում է առանձին ձեռնարկության կամ ձեռնարկության մասնաճյուղի կամ մի խումբ ձեռնարկությունների կամ ձեռնարկությունների մասնաճյուղերի շրջանակով՝ սուբսիդավորող մարմնի իրավազորության սահմաններում: Հատուկ է համարվում այն սուբսիդիան, որի օգտագործման հնարավորությունը սահմանափակված է սուբսիդավորող մարմնի իրավազորությանը ենթակա

տարածքի՝ սահմանազատված աշխարհագրական շրջանում գտնվող որոշակի ձեռնարկությունների շրջանակով: Ենթադրվում է, որ հարկերի՝ բոլոր մակարդակներում համընդհանուր ձեռով կիրառվող դրույքաչափերը կառավարական իրավասու մարմինների կողմից սահմանելը կամ փոփոխելը սույն Համաձայնագրի նպատակներով չի դիտարկվում որպես հատուկ սուբսիդիա:

9. Սահմանելու համար՝ արդյոք սուբսիդիան հատուկ է, թե ոչ, կիրառվում են հետեւյալ սկզբունքները՝

ա) եթե սուբսիդավորող մարմնի կողմից կամ այն օրենսդրությամբ, որին համապատասխան գործում է սուբսիդավորող մարմինը, սուբսիդիայի հասանելիությունը հստակորեն սահմանափակվում է միայն որոշակի ձեռնարկությունների շրջանակով, ապա այդպիսի սուբսիդիան դիտարկվում է որպես հատուկ սուբսիդիա.

բ) եթե սուբսիդավորող մարմնի կողմից կամ այն օրենսդրությամբ, որին համապատասխան գործում է սուբսիդավորող մարմինը, սահմանվում են օբյեկտիվ չափորոշիչներ կամ պայմաններ²¹, որոնց համաձայն որոշվում է սուբսիդիաներ ստանալու իրավունքն ու դրանց չափը, ապա սուբսիդիան հատուկ չի համարվում՝ պայմանով, որ այն ստանալու իրավունքն առաջանա ինքնաբերաբար, եւ որ այդպիսի չափորոշիչներն ու պայմանները խստորեն պահպանվեն: Չափորոշիչներն ու պայմանները պետք է հստակորեն նախատեսվեն օրենքով, հրահանգով, ակտով կամ այլ պաշտոնական փաստաթղթերով այնպես, որ դրանք հնարավոր լինի ստուգել.

²¹ Օբյեկտիվ չափորոշիչներն ու պայմաններն ասելով հասկանում ենք այն չափորոշիչները, որոնք չեզոք են, որոշ ձեռնարկությունների համար առավելություններ չեն ստեղծում՝ այլ ձեռնարկությունների հետ համեմատությամբ, բնույթով տնտեսական են, իսկ կիրառման եղանակով՝ հորիզոնական, ինչպես օրինակ՝ զբաղվածություն ունեցողների թիվը կամ ձեռնարկությունների չափը:

գ) եթե չնայած այն փաստին, որ «ա» եւ «բ» կետերում նշված սկզբունքների կիրառման արդյունքում սուբսիդիան թվում է ոչ հատուկ, հիմքեր կան ենթադրելու, որ այն իրականում, հավանաբար, հատուկ է, ապա կարող են հաշվի առնվել այլ գործոններ: Այդպիսի գործոնների թվին են պատկանում. սուբսիդավորման ծրագրի օգտագործումը որոշակի ձեռնարկությունների սահմանափակ թվի կողմից, արտոնյալ օգտագործումը որոշակի ձեռնարկությունների կողմից, անհամամասնորեն մեծ չափով սուբսիդիաների տրամադրումը որոշ ձեռնարկությունների, ինչպես նաեւ հայեցողություն դրսևորելու եղանակը, որի իրավունքն ունի սուբսիդավորող մարմինը՝ սուբսիդիա տրամադրելու մասին որոշում ընդունելիս²²: Այս ենթակետը կիրառելիս պետք է հաշվի առնել տնտեսական գործունեության դիվերսիֆիկացման մակարդակը սուբսիդավորող մարմնի իրավագործության սահմաններում, ինչպես նաեւ այն ժամանակահատվածի տեսողությունը, որի ընթացքում գործում է սուբսիդավորման տվյալ ծրագիրը:

10. Սույն հոդվածի 8-րդ եւ 9-րդ կետերի դրույթներին համապատասխան, հատուկ լինելու վերաբերյալ ցանկացած պնդում պետք է ակնհայտորեն հիմնավորված լինի՝ հաստատող ապացույցների առկայությամբ:

11. Արտահանող Կողմի ցանկացած սուբսիդիա համարվում է հատուկ, եթե՝

ա) սուբսիդիան կապված է արտահանող Կողմի օրենքի հետ կամ, փաստացիորեն²³, արտահանման արդյունքների հետ՝ որպես միակ պայման կամ մի քանի պայմաններից մեկը.

²² Այս առումով պետք է, մասնավորապես, հաշվի առնվեն սուբսիդիա ստանալու համար ներկայացվող հայտերը մերժելու կամ հաստատելու հաճախականության վերաբերյալ տեղեկատվությունը եւ համապատասխան որոշումների հիմնավորումները:

²³ Այդ նորմը կատարվում է այնպիսի փաստերի առկայության դեպքում, որոնք վկայում են այն մասին, որ սուբսիդիայի տրամադրումը, օրինական ձեռով պայմանավորված չլինելով արտահանման

բ) սուբսիդիան կապված է արտահանող Կողմի օրենքի հետ կամ, փաստացիորեն, ներմուծված ապրանքների փոխարեն հայրենական արտադրության ապրանքների օգտագործման հետ՝ որպես միակ պայման կամ մի քանի պայմաններից մեկը:

12. Քննությունն անցկացնող մարմնի կողմից օգտագործվող՝ սուբսիդիա ստացողի համար սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան արտոնության հաշվարկ անելու ցանկացած մեթոդ պետք է համապատասխանի հետեւյալ սկզբունքներին՝

- ա) կառավարության մասնակցությունը ընկերության կապիտալում չի դիտարկվում որպես արտոնության տրամադրում, եթե ներդրումների վերաբերյալ որոշումը չի կարող որակվել որպես տվյալ Կողմի տարածքում մասնավոր ներդրողների սովորական ներդրումային գործելակերպին չհամապատասխանող գործողություն (ներառյալ ռիսկային կապիտալի տրամադրումը).
- բ) կառավարական փոխառությունը չի դիտարկվում որպես արտոնության տրամադրում, եթե վարկ ստացող ընկերության կողմից պետական վարկի դիմաց վճարվող գումարը չի տարբերվում այն գումարից, որն այն կվճարեր համադրելի կոմերցիոն վարկի դիմաց, որը տվյալ ընկերությունը կարող է ստանալ շուկայում: Նման դեպքում արտոնություն է համարվում այդ երկու գումարների միջեւ եղած տարբերությունը.
- գ) կառավարության կողմից վարկի երաշխավորումը չի դիտարկվում որպես արտոնության տրամադրում, եթե կառավարության կողմից երաշխավորված վարկի դիմաց երաշխիք ստացող ընկերության կողմից վճարվող գումարը չի տարբերվում այն գումարից, որն այն կվճարեր

արդյունքներով, իրականում կապված է փաստացի կամ ակնկալվող արտահանման կամ արտահանումից ստացվող հասույթի հետ: Այն փաստը, որ սուբսիդիան տրամադրվում է արտահանում իրականացնող ձեռնարկությանը, չի կարող ինքնին հիմք ծառայել՝ սույն դրույթի իմաստով այն արտահանման սուբսիդիա համարելու համար:

համադրելի կոմերցիոն վարկի դիմաց՝ առանց պետական երաշխիքի: Նման դեպքում արտոնություն է համարվում այդ երկու գումարների միջեւ եղած տարբերությունը՝ միջնորդավճարների տարբերությամբ ճշգրտված:

- դ) կառավարության կողմից ապրանքների կամ ծառայությունների մատակարարումը կամ ապրանքների գնումը չի համարվում արտոնություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքները կամ ծառայությունները կառավարության կողմից չեն մատակարարվում համարժեքից ավելի փոքր չափով վճարման դիմաց, կամ գնումը կատարված չէ համարժեքից ավելի մեծ չափով վճարման դիմաց: Վճարման համարժեքությունը որոշվում է՝ ելնելով մատակարարման կամ գնման երկրում այդպիսի ապրանքների եւ ծառայությունների համար գոյություն ունեցող շուկայական պայմաններից (ներառյալ գինը, որակը, հասանելիությունը, իրացվելիությունը, տրանսպորտային փոխադրումը եւ գնմանը կամ վաճառքին առնչվող մյուս պայմանները):

13. Կողմերն իրավունք ունեն կիրառելու հակազնագցման կամ փոխհատուցման միջոց միայն իրավասու մարմնի կողմից սույն հոդվածի դրույթների համաձայն սկսված ու անցկացված քննություն անցկացնելուց հետո: Քննությունն ավարտվում է մեկ տարվա ընթացքում եւ ոչ մի դեպքում չի գերազանցում այն սկսելու պահից 18 ամիսը:

14. Քննությունն սկսվում է տնտեսության ճյուղի կողմից կամ դրա անունից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա, որը պարունակում է բավարար ապացույցներ հետեւյալի մասին. ա) գնագցում (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ հատուկ սուբսիդիա (փոխհատուցման մասով

քննություն անցկացնելու նպատակով), բ) տնտեսության ճյուղին հասցված վնաս²⁴ եւ գ) պատճառահետեանքային կապ գնագոյող ներմուծման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) եւ ենթադրվող վնասի միջեւ:

15. Փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով ներկայացված դիմումը պարունակում է դիմումատուի համար հասանելի տեղեկատվություն հետեւյալի մասին՝

- ա) դիմումատուի անձը եւ հայրենական արտադրության համանման ապրանքի ծավալի ու արժեքի նկարագիրը դիմումատուի կողմից: Եթե գրավոր դիմումը ներկայացվել է տնտեսության ճյուղի անունից, ապա դրանում պետք է հստակ սահմանվի, թե տնտեսության որ ճյուղի անունից է ներկայացվել դիմումը՝ ներառելով համանման ապրանքի բոլոր հայտնի հայրենական արտադրողների (կամ համանման ապրանքի հայրենական արտադրողների ասոցիացիաների) ցուցակը եւ հնարավորինս ներառելով այդ արտադրողներին բաժին ընկնող հայրենական արտադրության համանման ապրանքի ծավալի ու արժեքի նկարագիրը.
- բ) ենթադրաբար սուբսիդավորվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ծագման կամ արտահանման երկրի կամ երկրների անվանումը (անվանումները), յուրաքանչյուր հայտնի արտահանողի կամ օտարերկրյա արտադրողի անձը եւ այդ ապրանքի հայտնի ներմուծողների ցուցակը.
- գ) ապացույցներ սուբսիդիայի գոյության, մեծության եւ բնույթի մասին.

²⁴ «Վնաս» եզրույթը, եթե այլ բան նախատեսված չէ, հասկացվում է որպես տնտեսության ճյուղին հասցված նյութական վնաս, տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգ կամ տնտեսության ճյուղի ստեղծման գործընթացի զգալի դանդաղեցում:

դ) ապացույցներ այն մասին, որ տնտեսության ճյուղին ենթադրաբար հասցված վնասն առաջացրել է սուբսիդավորված ներմուծումը՝ սուբսիդիայի ազդեցության արդյունքում. այդ ապացույցները պարունակում են տեղեկատվություն՝ ենթադրաբար սուբսիդավորվող ներմուծման ծավալի փոփոխության, ներքին շուկայում համանման ապրանքի գների վրա այդ ներմուծման ազդեցության եւ տնտեսության ճյուղի վիճակը բնութագրող համապատասխան ցուցանիշների ու ցուցիչների վրա հիմնված՝ տնտեսության ճյուղի վրա ներմուծման հետագա ազդեցության վերաբերյալ:

16. Հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով ներկայացված դիմումը պարունակում է դիմումատուի համար հասանելի տեղեկատվություն հետեւյալի մասին՝

ա) դիմումատուի անձը եւ հայրենական արտադրության համանման ապրանքի ծավալի ու արժեքի նկարագիրը դիմումատուի կողմից: Եթե գրավոր դիմումը ներկայացվում է տնտեսության ճյուղի անունից, ապա դրանում պետք է հստակ սահմանվի, թե տնտեսության որ ճյուղի անունից է ներկայացվում դիմումը՝ ներառելով համանման ապրանքի բոլոր հայտնի հայրենական արտադրողների (կամ համանման ապրանքի հայրենական արտադրողների ասոցիացիաների) ցանկը եւ հնարավորինս ներառելով այդ արտադրողներին բաժին ընկնող հայրենական արտադրության համանման ապրանքի ծավալի ու արժեքի նկարագիրը.

բ) ենթադրաբար գնագցման առարկա հանդիսացող ապրանքի ամբողջական նկարագիրը, դրա ծագման կամ արտահանման երկրի կամ երկրների անվանումը (անվանումները), յուրաքանչյուր հայտնի արտահանողի կամ օտարերկրյա արտադրողի անձը եւ այդ ապրանքը ներմուծող հայտնի անձանց ցանկը.

- գ) տեղեկատվություն այն գների վերաբերյալ, որոնցով տվյալ ապրանքը վաճառվում է ծագման կամ արտահանման երկրի կամ երկրների ներքին շուկաներում սպառման համար (կամ, անհրաժեշտության դեպքում, տեղեկատվություն այն գների վերաբերյալ, որոնցով ապրանքը ծագման կամ արտահանման երկրից կամ երկրներից վաճառվում է երրորդ երկիր կամ երկրներ, կամ տեղեկատվություն ապրանքի սահմանված արժեքի վերաբերյալ) եւ տեղեկատվություն արտահանման գների վերաբերյալ կամ, անհրաժեշտության դեպքում, այն գների վերաբերյալ, որոնցով ապրանքը ներմուծող Կողմի տարածքում առաջին անգամ վերավաճառվում է անկախ գնորդի.
- դ) տեղեկատվություն ենթադրաբար գնագցման առարկա հանդիսացող ներմուծման, ներքին շուկայում համանման ապրանքի գնի վրա այդ ներմուծման ազդեցության եւ հայրենական ճյուղի վրա այդ ներմուծման հետեւանքների վերաբերյալ, որոնք հաստատված են հայրենական ճյուղի վիճակի հետ կապված համապատասխան գործոններով ու ցուցանիշներով:

17. Եթե հատուկ հանգամանքներում համապատասխան իրավասու մարմինը քննություն սկսելու վերաբերյալ որոշում է ընդունում՝ առանց տնտեսության ճյուղի կողմից կամ դրա անունից այդպիսի քննություն սկսելու խնդրանքով դիմում ստանալու, ապա իրավասու մարմինը դրան ընթացք է տալիս միայն այն դեպքում, երբ բավարար ապացույցներ ունի գնագցման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ հատուկ սուբսիդիայի (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով), վնասի եւ դրանց միջեւ պատճառահետեւանքային կապի առկայության մասին՝ քննություն սկսելը հիմնավորելու համար: Քննություն սկսվում է միայն այն դեպքում, երբ համանման ապրանքի հայրենական արտադրողների՝ դիմումին կողմ կամ դեմ հանդես գալու

աստիճանի ուսումնասիրման հիման վրա Կողմի իրավասու մարմինը սահմանում է, որ դիմումը ներկայացվել է տնտեսության ճյուղի կողմից կամ դրա անունից: Դիմումը դիտարկվում է որպես «տնտեսության ճյուղի կողմից կամ դրա անունից» ներկայացված, եթե դրան կողմ են հանդես գալիս այն հայրենական արտադրողները, որոնց արտադրության ամբողջական ծավալը տնտեսության ճյուղի այն նույն հատվածի կողմից արտադրված համանման ապրանքի արտադրության ամբողջ ծավալի 50 տոկոսից ավելի է կազմում, որը դիմումին կողմ կամ դեմ է հանդես գալիս: Սակայն քննություն չի սկսվում, եթե դիմումին կողմ հանդես եկող հայրենական արտադրողներին բաժին է ընկնում տնտեսության ճյուղի կողմից արտադրված համանման ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի 25 տոկոսից պակաս ծավալ:

18. Դիմումը մերժվում է, եւ քննությունն անհապաղ դադարեցվում է այն բանից հետո, երբ Կողմի իրավասու մարմինը համոզվում է ընթացակարգը շարունակելը արդարացնող՝ գնագցման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորման (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ վնասի առկայության մասին բավարար ապացույցների բացակայության մեջ: Քննությունն անհապաղ դադարեցվում է այն դեպքերում, երբ Կողմի իրավասու մարմինը սահմանում է, որ գնագցման չափը կամ սուբսիդիայի չափը ոչ էական է (*de minimis*) կամ որ գնագցող կամ սուբսիդավորվող՝ փաստացի կամ հնարավոր ներմուծման ծավալը կամ վնասի չափը աննշան է:

19. Հակագնագցման եւ փոխհատուցման մասով քննություններ անցկացնելու նպատակով՝ «տնտեսության ճյուղ» եզրույթը վերաբերում է համանման ապրանքների բոլոր հայրենական արտադրողներին կամ միայն նրանց, որոնց՝ ապրանքների արտադրության ամբողջական ծավալն այդ ապրանքների հայրենական արտադրության զգալի մասն է կազմում՝ այն բացառությամբ, որ.

- ա) եթե արտադրողները փոխկապակցված են²⁵ արտահանողների կամ ներմուծողների հետ կամ իրենք են ենթադրաբար գնագցման առարկա հանդիսացող ապրանքի ներմուծողը, «տնտեսության ճյուղ» եզրույթը կարող է վերաբերել մնացած արտադրողներին,
- բ) բացառիկ հանգամանքներում տվյալ արտադրության համար Կողմի տարածքը կարող է բաժանված լինել երկու կամ ավելի մրցակցող շուկաների, եւ արտադրողները յուրաքանչյուր շուկայի ներսում կարող են դիտարկվել որպես առանձին ճյուղ, եթե ա) այդպիսի շուկայի ներսում արտադրողները վաճառում են իրենց կողմից արտադրված ապրանքի ամբողջ կամ գրեթե ամբողջ ծավալը, եւ բ) այդ շուկայում պահանջարկն այդ տարածքի տարբեր հատվածներում գտնվող՝ տվյալ ապրանքի արտադրողների կողմից զգալի չափով չի բավարարվում: Այդպիսի հանգամանքներում վնասի առկայությունը կարող է արձանագրվել, նույնիսկ եթե տնտեսության ամբողջ ճյուղի հիմնական մասը վնաս չի կրում՝ պայմանով, որ գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծումը կենտրոնացված է այդպիսի առանձնացված շուկայում, ինչպես նաեւ այն պայմանով, որ գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման արդյունքում վնաս է հասցվում այդպիսի շուկայում արտադրանքի ամբողջ կամ գրեթե ամբողջ ծավալի արտադրողներին:

²⁵ Սույն կետի նպատակներով արտադրողներն արտահանողների կամ ներմուծողների հետ փոխկապակցված են համարվում միայն այն դեպքում, երբ ա) նրանցից մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկողություն է իրականացնում մյուսի նկատմամբ, կամ բ) նրանց երկուսի նկատմամբ էլ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկողություն է իրականացվում երրորդ անձի կողմից, կամ գ) նրանք միասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկողություն են իրականացնում երրորդ անձի նկատմամբ՝ պայմանով, որ հիմքեր կան ենթադրելու, որ այդ կապի ազդեցության ներքո տվյալ արտադրողի գործունեությունը կարող է տարբերվել արտահանողներից կամ ներմուծողներից անկախ արտադրողների գործունեությունից: Սույն կետի նպատակներով համարվում է, որ մեկը վերահսկողություն է իրականացնում մյուսի նկատմամբ, եթե այդ առաջին անձն իրավաբանորեն կամ փաստացիորեն կարող է սահմանափակել կամ ուղղորդել մյուսի գործողությունները:

20. Մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ներմուծված ապրանքի նկատմամբ միաժամանակ չեն կիրառվում հակազնագցման ու փոխհատուցման միջոցներ՝ գնագցման կամ սուբսիդավորման միանման իրավիճակի փոխհատուցման նպատակով:

21. Կողմը մյուս Կողմից ներմուծման նկատմամբ չի կիրառում հակազնագցման կամ փոխհատուցման միջոցներ՝ մինչև քննության ընթացքում չհաստատվի, որ համապատասխանաբար գնագցման (հակազնագցման միջոցներ կիրառելու նպատակով) կամ սուբսիդավորման (փոխհատուցման միջոցներ կիրառելու նպատակով) արդյունքում իր տնտեսության ճյուղին հասցվում է կամ կարող է հասցվել նյութական վնաս, կամ այն կարող է զգալիորեն դանդաղեցնել տնտեսության ճյուղի զարգացումը: Վնասի առկայության հաստատումը հիմնվում է դրական ապացույցների վրա եւ ենթադրում է ա) գնագցող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) ծավալի եւ ներքին շուկայում համանման ապրանքների գների վրա այդպիսի ներմուծման ազդեցության օբյեկտիվ ուսումնասիրումը, ինչպես նաեւ բ) այդ ապրանքների հայրենական արտադրողների վրա այդպիսի ներմուծման հետագա ազդեցության օբյեկտիվ ուսումնասիրումը: Տնտեսության նշված ճյուղի վրա գնագցող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) ազդեցության ուսումնասիրումը ներառում է տվյալ ճյուղի վիճակի հետ կապված՝ գործին առնչվող բոլոր տնտեսական գործոնների ու ցուցանիշների գնահատումը՝ ներառյալ վաճառքի, շահույթի, արտադրանքի բացթողման, շուկայում մասնաբաժնի, արտադրողականության, ներդրումներից ստացվող եկամուտների կամ հզորությունների օգտագործման փաստացի կամ հնարավոր կրճատումը, ներքին շուկայի գների վրա ազդող գործոնները. գնագցման

չափի մեծությունը, կանխիկ գումարի շարժի վրա փաստացի կամ հնարավոր բացասական ազդեցությունը, ապրանքային պաշարները, զբաղվածությունը, աշխատավարձը, աճի տեմպերը, կապիտալ կամ ներդրումներ ներգրավելու հնարավորությունը: Տվյալ ցանկը սպառիչ չէ. նշված գործոններից ոչ մեկը եւ ոչ էլ մի քանիսը, իհարկե, չեն կարող որոշիչ նշանակություն ունենալ: Գնագրող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) եւ տնտեսության ճյուղին հասցված վնասի միջեւ պատճառահետեանքային կապի ցուցադրումը հիմնվում է իրավասու մարմնի տնօրինության տակ գտնվող՝ գործին առնչվող բոլոր ապացույցների ուսումնասիրման վրա: Գնագրող ներմուծումից (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծումից (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) բացի՝ իրավասու մարմինն ուսումնասիրում է նաեւ ցանկացած այլ հայտնի գործոն, որն այդ նույն ժամանակահատվածում վնաս է հասցնում տնտեսության ճյուղին, եւ այդ գործոններով հասցվող վնասը չպետք է դիտարկվի որպես գնագրող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) հետեանքով հասցվող վնաս: Նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության հաստատումը հիմնվում է փաստերի վրա, այլ ոչ թե պնդումների, ենթադրությունների կամ հեռավոր հնարավորության վրա: Այն հանգամանքների փոփոխությունը, որոնք հանգեցնում են այնպիսի իրավիճակի, որտեղ գնագցման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորման (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) հետեանքով կարող է վնաս հասցվել, պետք է հստակորեն կանխատեսվի եւ անխուսափելի լինի:

22. Նախնական միջոցներ կարող են ձեռնարկվել, եթե դա անհրաժեշտ է, եւ եթե վնաս հասցրած գնազգման (հակազնազգման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ հատուկ սուբսիդիայի (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) առկայության մասին տրվել է նախնական դրական եզրակացություն: Նախնական միջոցները չեն կիրառվում ավելի շուտ, քան քննությունն սկսելու օրվանից 60 օր հետո: Նախնական միջոցների կիրառումը սահմանափակվում է չորս ամիսը չգերազանցող՝ հնարավորինս կարճ ժամանակահատվածով, կամ առեւտրի զգալի մասը ներկայացնող արտահանողների խնդրանքի հիման վրա համապատասխան իրավասու մարմինների կողմից ընդունված որոշմամբ՝ վեց ամիսը չգերազանցող ժամանակահատվածով: Երբ քննության ընթացքում իրավասու մարմինն ուսումնասիրում է, թե արդյոք գնազգման չափից ավելի ցածր տուրքը բավարար է վնասի վերացման համար, այդ ժամանակահատվածները կարող են կազմել, համապատասխանաբար, վեց եւ ինը ամիս:

23. Մյուս Կողմի ներմուծման նկատմամբ փոխհատուցման մասով քննություն սկսելու մտադրություն ունեցող Կողմը, մինչեւ քննություն սկսելը, մյուս Կողմին հրավիրում է խորհրդակցությունների՝ իրավիճակը պարզաբանելու եւ երկու Կողմերի համար ընդունելի որոշում կայացնելու նպատակով: Բացի այդ, քննության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում այն Կողմին, որի ապրանքները ենթարկվում են քննության, տրամադրվում է խորհրդակցությունները շարունակելու ողջամիտ հնարավորություն՝ փաստացի հանգամանքները ճշտելու եւ փոխընդունելի որոշման հասնելու նպատակով: Առանց խախտելու խորհրդակցությունների համար ողջամիտ հնարավորություններ տրամադրելու պարտավորությունը՝ խորհրդակցություններին առնչվող դրույթներով նպատակ չի հետապնդվում խոչընդոտել Կողմի իրավասու մարմիններին՝ քննություն սկսելիս, նախնական կամ վերջնական դրական կամ բացասական եզրակացություններ տրամադրելիս կամ սույն Համաձայնագրի

դրույթներին համապատասխան նախնական կամ վերջնական միջոցներ կիրառելիս անհապաղ գործելու հարցում: Քննություն սկսելու մտադրություն ունեցող կամ այդպիսի քննություն անցկացնող Կողմը, այն Կողմի պահանջով, որի ապրանքները ենթարկվում են այդպիսի քննության, հասանելիություն է տրամադրում ոչ գաղտնի տեղեկատվությանը՝ ներառյալ քննություն սկսելու կամ անցկացնելու համար օգտագործվող գաղտնի տվյալների ոչ գաղտնի ամփոփագիրը:

24. Հակազնագցման տուրքի չափը չի գերազանցում գնագցման չափը: Փոխհատուցման տուրքի դրույքաչափը չի գերազանցում արտահանող Կողմի հատուկ սուբսիդիայի չափը, որը հաշվարկված է սուբսիդավորման պայմաններում սուբսիդավորվող եւ արտահանված ապրանքի միավորի համար:

25. Հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի գործողության ժամանակահատվածը չի գերազանցում այդ միջոցի կիրառման օրվանից հինգ տարին եւ շարունակվում է այն ժամանակահատվածի ընթացքում ու այն չափով, որոնք անհրաժեշտ են վնաս հասցնող գնագցմանը կամ սուբսիդավորմանը հակազդելու համար: Հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի գործողության ժամանակահատվածը ներառում է նախնական միջոցի կիրառման ժամանակահատվածը: Հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել գնագցում ու վնաս (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորում ու վնաս (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) ոլորտը ներառող վերջին վերանայման օրվանից կամ միջոցի գործողության ժամկետը լրանալու հետ կապված՝ վերանայումն ավարտելու օրվանից հինգ տարին չգերազանցող ժամանակահատվածով: Հակազնագցման կամ փոխհատուցման միջոցների գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել, եթե իրավասու մարմնի նախաձեռնությամբ՝ մինչեւ հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների գործողության լրանալու օրը կամ մինչեւ այդ օրը

ողջամիտ ժամկետի ընթացքում տնտեսության ճյուղի կողմից կամ դրա անունից ներկայացված՝ պատշաճորեն հիմնավորված հարցման հիման վրա սկսված վերանայման արդյունքներով իրավասու մարմինները սահմանեն, որ տուրքի գործողության ժամկետի դադարեցումը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնեի սուբսիդավորման (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ գնագցման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) եւ վնաս հասցնելու գործընթացի շարունակմանը կամ վերսկսմանը:

26. Քննություն անցկացնող Կողմը բոլոր շահագրգիռ անձանց տրամադրում է ապացույցներ եւ իրենց տեսակետը ներկայացնելու հնարավորություն՝ ներառյալ մյուս շահագրգիռ անձանց կողմից ներկայացված նյութերին արձագանքելու հնարավորությունը: Քննություն անցկացնող Կողմը, պահանջի դեպքում, բոլոր շահագրգիռ անձանց համար ապահովում է հակադիր շահեր ունեցող կողմերի հետ հանդիպելու հնարավորություն, որպեսզի ներկայացվեն հակադիր տեսակետներ եւ առաջարկվեն հերքումներ: Քննություն անցկացնող Կողմը շահագրգիռ անձանց ուղարկում է ծանուցում՝ նշելով այդ նիստերի ժամն ու վայրը, ինչպես նաեւ նիստերի ընթացքում քննարկման համար նախատեսված հարցերի ցանկը:

27. Քննության ընթացքում բոլոր շահագրգիռ անձանց ծանուցում են իրավասու մարմիններին անհրաժեշտ տեղեկատվության մասին, եւ նրանց ընձեռնվում է պատշաճ հնարավորություն՝ գրավոր ներկայացնելու այն բոլոր ապացույցները, որոնք, ըստ իրենց, վերաբերում են տվյալ քննությանը: Հաշվի առնելով գաղտնի տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջները՝ մի շահագրգիռ անձի կողմից գրավոր ներկայացված ապացույցներն անհապաղ տրամադրվում են քննությանը մասնակցող մյուս շահագրգիռ անձանց տնօրինմանը: Քննությունը սկսելուց անմիջապես հետո իրավասու մարմինները հայտնի արտահանողներին ու արտահանող Կողմի իշխանության մարմիններին ներկայացնում են գրավոր դիմումի ամբողջական տեքստը, եւ, պահանջի դեպքում, այն տրամադրում են մյուս

մասնակից շահագրգիռ անձանց տնօրինմանը: Պատշաճորեն հաշվի է առնվում գաղտնի տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջը՝ սույն հոդվածի 28-րդ կետով նախատեսված կարգով:

28. Ցանկացած տեղեկատվություն, որն իր բնույթով գաղտնի է (օրինակ՝ որովհետեւ դրա հրապարկման արդյունքում մրցակիցն էական մրցակցային արտոնություն կունենար կամ որովհետեւ դրա հրապարակումը կհանգեցնէր զգալի բացասական հետեւանքների տեղեկատվությունը տրամադրած անձի կամ այն անձի համար, որից տվյալ անձն ստացել է այդ տեղեկատվությունը) կամ որը քննության կողմերի կողմից ներկայացվում է գաղտնի ձեռով, բավարար հիմքերի առկայության դեպքում, Կողմերի կողմից դիտարկվում է որպես գաղտնի տեղեկատվություն: Այդպիսի տեղեկատվությունը չի հրապարակվում՝ առանց այն տրամադրող անձի հատուկ թույլտվության: Քննություն անցկացնող Կողմերը գաղտնի տեղեկատվություն տրամադրող շահագրգիռ անձանցից պահանջում են ներկայացնել դրա ոչ գաղտնի ամփոփագիրը: Այդպիսի ամփոփագրերում բավականին մանրամասն է ներկայացվում որպես գաղտնի տրամադրված տեղեկատվության էությունը: Բացառիկ հանգամանքներում այդ անձինք կարող են նշել, որ այդ տեղեկատվությունը չպետք է ներկայացվի կրճատ տարբերակով: Այդպիսի բացառիկ հանգամանքներում պետք է ներկայացվեն այն պատճառները, որոնց դեպքում ամփոփագիր կազմելն անհնար է:

29. Քննություն անցկացնող Կողմը բոլոր շահագրգիռ կողմերին ուղարկում է պաշտոնական ծանուցում՝ քննություն սկսելու, ցանկացած նախնական կամ վերջնական՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական որոշման, գնային պարտավորություններ ստանձնելու, այդ պարտավորությունները դադարեցնելու եւ վերջնական հակագնագցման տուրքի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ ցանկացած որոշման մասին:

30. Հակազնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մտադրություն ունեցող Կողմը, մինչև վերջնական որոշում ընդունելը, բոլոր շահագրգիռ անձանց տեղեկացնում է ուսումնասիրվող այն էական փաստերի մասին, որոնք վերջնական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ որոշում ընդունելու համար հիմք են ձեռավորում: Այդպիսի տեղեկատվությունը պետք է ժամանակին հրապարակվի, որպեսզի անձինք կարողանան պաշտպանել իրենց շահերը:

31. Քննություն սկսելու մասին հրապարակային ծանուցումը պարունակում է համապատասխան տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

- ա) քննություն սկսելու ամսաթիվը.
- բ) քննության առարկա հանդիսացող ապրանքի հստակ նկարագիրը եւ դրա դասակարգումը՝ Ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգին համապատասխան.
- գ) այն հիմնավորումը, համաձայն որի դիմումի մեջ ներկայացվում է գնագցման առկայության մասին պնդումը (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորման գործելակերպի կամ գործելակերպերի նկարագիրը (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով).
- դ) այն գործոնների կրճատ նկարագիրը, որոնց վրա հիմնվում է վնասի առկայության վերաբերյալ ենթադրությունը.
- ե) շահագրգիռ անձանց կողմից ապացույցներ ներկայացնելու, շահագրգիռ անձանց կողմից ներկայացված նյութերի վերաբերյալ մեկնաբանություններ անելու եւ դրանց արձագանքելու վերջնաժամկետները.

զ) այն հասցեն, որին Կողմը, որի ապրանքների առնչությամբ անցկացվում է քննությունը, եւ դրա շահագրգիռ անձինք կարող են ուղարկել տեղեկություններ.

է) քննություն անցկացնող մարմնի անվանումը, հասցեն եւ հեռախոսահամարը:

32. Կողմերը բոլոր շահագրգիռ անձանց ուղարկում են հրապարակային ծանուցում ցանկացած՝ թե՛ դրական եւ թե՛ բացասական, նախնական կամ վերջնական եզրակացության մասին՝ հրապարակելով առանձին հաշվետվություն, որում ներկայացվում են բոլոր նախնական եւ վերջնական որոշումներն ու եզրակացությունները՝ համապատասխան փաստացի ու իրավաբանական հարցերի վերաբերյալ:

33. Ցանկացած նախնական եզրակացության մասին հրապարակային ծանուցում, որում պատշաճորեն հաշվի են առնվում գաղտնի տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջները, *ի թիվս այլնի*, ներառում է՝

ա) քննության առարկա հանդիսացող ապրանքի հստակ նկարագիրը.

բ) գնագցող ներմուծման վերաբերյալ դրական եզրակացության համար հիմքերը՝ գնագցման չափի նշմամբ եւ օգտագործված մեթոդաբանության հիմքերի նկարագրով (հակագնագցման մասով քննություն անցկացնելու դեպքում).

գ) սուբսիդավորվող ներմուծման վերաբերյալ դրական եզրակացության համար հիմքերը՝ սուբսիդիայի էության նկարագրով եւ միավորի համար հաշվարկված՝ սուբսիդավորման չափի նշմամբ (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու դեպքում).

- դ) տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայությունը կամ տնտեսության ճյուղի ստեղծման զգալի դանդաղեցումը որոշելու համար հիմքերը.
- ե) գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման եւ տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու, այդպիսի վնաս հասցնելու վտանգի կամ համապատասխանաբար տնտեսության ճյուղի ստեղծումը զգալիորեն դանդաղեցնելու միջեւ պատճառահետեւանքային կապը հաստատելու համար հիմքերը:
- զ) այն պատճառները, որոնց հիման վրա կարելի է ընդունել, որ նախնական միջոցներն անհրաժեշտ են՝ քննությունն անցկացնելու ընթացքում հասցվող վնասը կանխելու համար:

34. Ցանկացած վերջնական եզրակացության մասին պաշտոնական ծանուցումը, որում պատշաճորեն հաշվի են առնվում գաղտնի տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջները, *ի թիվս այլնի*, ներառում է՝

- ա) պարզաբանումներ քննություն անցկացնող մարմնի կողմից քննության արդյունքների հիման վրա տրված վերջնական եզրակացության վերաբերյալ.
- բ) հղում այն փաստերին, որոնց հիման վրա տրվել է այդ եզրակացությունը.
- գ) սույն հոդվածի 33-րդ կետում նշված տեղեկատվությունը.
- դ) քննության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողների ու ներմուծողների փաստարկներն ու պահանջներն ընդունելու կամ մերժելու պատճառները:

Հոդված 3.3

Հատուկ պաշտպանական միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ կիրառում է հատուկ պաշտպանական միջոցներ՝ իր օրենսդրությանը համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխով:
2. Կողմն իրավունք ունի ապրանքի նկատմամբ կիրառելու հատուկ պաշտպանական միջոց միայն այն դեպքում, երբ այդ Կողմը սահմանել է, որ այդ ապրանքն իր տարածք է ներմուծվում այնպիսի աճող ծավալներով (արտադրության նկատմամբ բացարձակ կամ հարաբերական արտահայտմամբ) եւ այնպիսի պայմաններով, որոնք լուրջ վնաս են հասցնում կամ կարող են լուրջ վնաս հասցնել համանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքներ արտադրող տնտեսության ճյուղին:
3. Վնասի առկայությունը կամ վտանգը սահմանելու նպատակով՝ «տնտեսության ճյուղ» ասելով հասկանում ենք Կողմի տարածքում գործող՝ համանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքներ արտադրողների ամբողջությունը կամ այն արտադրողների ամբողջությունը, որոնց՝ համանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքների ընդհանուր արտադրությունն այդ ապրանքների ընդհանուր արտադրության զգալի մասն է կազմում:
4. Հատուկ պաշտպանական միջոցները ներմուծվող ապրանքի նկատմամբ կիրառվում են՝ անկախ արտահանող երկրից: Չնայած 2.7 եւ 2.3 հոդվածների դրույթներին՝ հատուկ պաշտպանական միջոցը կարող է կիրառվել ներմուծման քվոտայի ձեով: Եթե ներմուծման քվոտա է կիրառվում, ապա այդ միջոցի կիրառման արդյունքում ներմուծման ծավալը չպետք է կրճատվի այն նախորդ ժամանակահատվածի ծավալի համեմատ, որում ընդունվում է այն վերջին երեք ներկայացուցչական տարիների ներմուծման միջին ծավալը, որոնց վերաբերյալ կան վիճակագրական տվյալներ, եթե միայն չտրվի հստակ հիմնավորում՝ լուրջ վնասը

կանխարգելելու կամ վերացնելու համար այլ մակարդակ սահմանելու անհրաժեշտության համար: Այն դեպքերում, երբ քվոտան բաշխվում է մատակարար երկրների միջև, հատուկ պաշտպանական միջոց կիրառող Կողմը կարող է փորձել քվոտայի մասնաբաժինը բաշխելու հարցի վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերել տվյալ ապրանքի մատակարարման մեջ զգալի շահագրգռվածություն ունեցող մյուս Կողմի հետ: Այն դեպքերում, երբ, պրակտիկ նկատառումներից ելնելով, այդ մեթոդը կիրառելի չէ, տվյալ Կողմն այդ ապրանքի մատակարարման մեջ զգալի շահագրգռվածություն ունեցող մյուս Կողմերի միջև քվոտան բաշխում է այդ Կողմի՝ նախորդող եռամյա ժամանակահատվածում ապրանքի ներմուծման ընդհանուր քանակության կամ արժեքի մատակարարումներին բաժին ընկնող մասնաբաժիններին համապատասխան. ընդ որում, հաշվի է առնվում ցանկացած հատուկ գործոն, որը կարող էր կամ կարող է ազդել տվյալ ապրանքի առևտրի ընթացքի վրա: Այն դեպքում, երբ Իրանի Իսլամական Հանրապետությունը մտադրություն ունենա հատուկ պաշտպանական միջոցը կիրառել ներմուծման քվոտայի ձեռով, եւ այն բաշխել մատակարար երկրների միջև, այդ ներմուծման քվոտան պետք է հաշվարկվի եւ կիրառվի ԵԱՏՄ յուրաքանչյուր անդամ պետության համար առանձին:

5. «Լուրջ վնաս» ասելով հասկանում ենք տնտեսության ճյուղում իրավիճակի զգալի ընդհանուր վատթարացում: Կողմերը հատուկ պաշտպանական միջոցները կիրառում են միայն այն ծավալով, որն անհրաժեշտ է լուրջ վնասի կանխարգելման կամ փոխհատուցման համար: Հատուկ պաշտպանական միջոցի կիրառման ժամանակահատվածը չի գերազանցում չորս տարին եւ կարող է երկարաձգվել:

6. Սույն հոդվածի 5-րդ կետում նշված ժամանակահատվածը կարող է երկարաձգվել՝ պայմանով, որ ներմուծող Կողմի իրավասու մարմինները սահմանեն, որ հատուկ պաշտպանական միջոցի կիրառումը դեռ անհրաժեշտ է լուրջ վնասի կանխարգելման կամ փոխհատուցման համար, եւ որ առկա են ապացույցներ

տնտեսության ճյուղը հարմարեցնելու վերաբերյալ, ինչպես նաև սույն հոդվածի 8-12-րդ կետերի համապատասխան դրույթների պահպանման պայմանով:

7. Կողմերն իրավունք ունեն կիրառելու հատուկ պաշտպանական միջոց միայն իրավասու մարմնի կողմից քննություն անցկացնելուց հետո: Քննությունը ներառում է բոլոր շահագրգիռ անձանց հրապարակային ծանուցումը, եւ բոլոր շահագրգիռ անձանց ընձեռվում է ապացույցներ եւ իրենց տեսակետը ներկայացնելու հնարավորություն՝ ներառյալ մյուս կողմերի կողմից ներկայացված նյութերին արձագանքելու հնարավորությունը: Իրավասու մարմինը հրապարակում է հաշվետվություն, որում նշվում են բոլոր համապատասխան փաստացի եւ իրավաբանական հարցերի մասով արդյունքներն ու եզրակացությունները:

8. Կողմերն ապահովում են հատուկ պաշտպանական քննության արդար, թափանցիկ եւ արդյունավետ ընթացակարգերը:

9. Յուրաքանչյուր Կողմ անհապաղ ծանուցում է մյուս Կողմին, եթե՝

ա) սկսվում է հատուկ պաշտպանական քննություն.

բ) տրվում է նախնական եւ (կամ) վերջնական եզրակացություն՝ ներմուծման ավելացված ծավալի հետեւանքով առաջացած լուրջ վնասի կամ դրա վտանգի վերաբերյալ.

գ) ընդունվում է որոշում՝ հատուկ պաշտպանական միջոց կիրառելու կամ դրա գործողությունը երկարաձգելու վերաբերյալ:

10. Հատուկ պաշտպանական քննության վերաբերյալ տեղեկատվությունը, *ի թիվս այլնի*, ներառում է՝

ա) քննություն սկսելու ամսաթիվը.

- բ) քննության առարկա հանդիսացող ապրանքի հստակ նկարագիրը եւ դրա դասակարգումը՝ Ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգին համապատասխան.
- գ) քննություն անցկացնելու ժամանակահատվածը.
- դ) քննություն սկսելու պատճառների պարզաբանումը.
- ե) հանրային լսումների եւ (կամ) լսումներ անցկացնելու հարցումների վերջնաժամկետները.
- զ) շահագրգիռ անձանց կողմից ապացույցներ ներկայացնելու, շահագրգիռ անձանց կողմից ներկայացված նյութերի վերաբերյալ մեկնաբանություններ անելու եւ դրանց արձագանքելու ժամկետները.
- է) այն հասցեն, որին կարելի է ուղարկել դիմումը եւ քննությանն առնչվող մյուս փաստաթղթերը.
- ը) քննություն անցկացնող մարմնի անվանումը, հասցեն եւ հեռախոսահամարը:

11. Պաշտպանական միջոց կիրառելու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու մտադրություն ունեցող Կողմը մյուս Կողմին տրամադրում է քննությանն առնչվող ամբողջ տեղեկատվությունը, որը, *ի թիվս այլնի*, ներառում է՝

- ա) ապացույցներ ներմուծման ավելացված ծավալի հետեւանքով առաջացած լուրջ վնասի կամ դրա վտանգի վերաբերյալ.
- բ) ապրանքի հստակ նկարագիրը.
- գ) առաջարկված հատուկ պաշտպանական միջոցի հստակ նկարագիրը.
- դ) միջոցը ներդնելու ենթադրյալ ամսաթիվը.
- ե) փուլային ազատականացման ակնկալվող տեսողությունն ու գրաֆիկը.

- զ) այն զարգացող երկրների ցանկը, որոնց վրա հատուկ պաշտպանական միջոցի գործողությունը չի տարածվում (եթե կիրառելի է).
- է) ապացույցներ տնտեսության ճյուղը հարմարեցնելու վերաբերյալ (միջոցի գործողության ժամկետը երկարաձգելու դեպքում).
- ը) հիմքեր այնպիսի կրիտիկական հանգամանքների առկայությունը սահմանելու համար, որոնց դեպքում հետաձգումը կարող է հանգեցնել լուրջ վնասի, որը դժվար կլինի վերացնել (նախնական հատուկ պաշտպանական միջոցների դեպքում):

12. Հատուկ պաշտպանական միջոցներ կիրառելիս Կողմերը պահպանում են սույն Համաձայնագրով նախատեսված արտոնությունների չափը:

13. Կողմերն ապահովում են հատուկ պաշտպանական միջոցների կիրառման վերաբերյալ խորհրդակցություններ անցկացնելու հնարավորությունը:

Հոդված 3.4

Երկկողմ պաշտպանական միջոցները

1. Եթե, սույն Համաձայնագրին համապատասխան, մաքսատուրքի կրճատման կամ վերացման արդյունքում սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված՝ մի Կողմի ծագում ունեցող ցանկացած ապրանք մյուս Կողմի տարածք ներմուծվում է այնպիսի ավելացված քանակությամբ (այդ ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի համեմատ բացարձակ կամ հարաբերական ցուցանիշներով) եւ այնպիսի պայմաններով, որ դա լուրջ վնաս է հասցնում կամ լուրջ վնաս հասցնելու վտանգ է ստեղծում ներմուծող Կողմի տարածքում համանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանք արտադրող տնտեսության ճյուղի համար, ապա ներմուծող Կողմն այդ ապրանքի նկատմամբ կարող է կիրառել երկկողմ պաշտպանիչ միջոց՝ լուրջ վնասի

կամ դրա վտանգի կանխարգելման կամ վերացման համար անհրաժեշտ չափով՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Երկկողմ պաշտպանիչ միջոցները կիրառվում են միայն այնպիսի ապացույցների առկայության դեպքում, որոնք վկայում են, որ ներմուծման ծավալների ավելացումը հանգեցնում է լուրջ վնասի կամ ստեղծում է լուրջ վնաս հասցնելու վտանգ:

3. Սույն հոդվածին համապատասխան երկկողմ պաշտպանական միջոց կիրառելու մտադրություն ունեցող Կողմն անհապաղ եւ, ցանկացած դեպքում, մինչեւ միջոցը ներդնելն այդ մասին ծանուցում է մյուս Կողմին: Ծանուցման մեջ ներկայացվում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը, այդ թվում՝ ներմուծման ծավալի ավելացմամբ պայմանավորված՝ լուրջ վնասի կամ դրա վտանգի առկայության վերաբերյալ ապացույցները, ապրանքի եւ առաջարկվող միջոցի մանրամասն նկարագիրը, ինչպես նաեւ այն ներդնելու ենթադրյալ ամսաթիվը, կիրառման ժամկետը եւ, առկայության դեպքում, այն աստիճանաբար վերացնելու գրաֆիկը:

4. Կողմը, որի վրա կարող է ազդել տվյալ միջոցը, ստանում է փոխհատուցման առաջարկ՝ այդ Կողմից ներմուծման նկատմամբ առետրային ազատականացմանը գրեթե համարժեք ձեով: Այդ Կողմը սույն հոդվածի 3-րդ կետում նշված ծանուցումն ստանալու օրվանից 30-օրյա ժամկետում պետք է ուսումնասիրի ներկայացված տեղեկատվությունը՝ հարցի փոխընդունելի կարգավորմանը նպաստելու նպատակով: Այդպիսի որոշման բացակայության դեպքում ներմուծող Կողմը, հարցը կարգավորելու նպատակով, կարող է կիրառել երկկողմ պաշտպանական միջոց եւ, փոխադարձաբար համաձայնեցված փոխհատուցման բացակայության դեպքում, այն Կողմը, որի ապրանքի նկատմամբ կիրառվում է երկկողմ պաշտպանական միջոցը, կարող է փոխհատուցման միջոց կիրառել: Երկկողմ պաշտպանական միջոց եւ փոխհատուցման միջոց կիրառելու մասին անհրաժեշտ է անհապաղ ծանուցել մյուս

Կողմին: Փոխհատուցման միջոցը, որպես կանոն, առետորի վրա ազդեցության համարժեք աստիճան ունեցող զիջումների կասեցում եւ (կամ) երկկողմ պաշտպանական միջոցների կիրառումից ակնկալվող լրացուցիչ տուրքերին համարժեք գնային արտահայտություն ունեցող զիջումների կասեցում է: Փոխհատուցման միջոցը կիրառվում է առետորի վրա ազդեցության համարժեք աստիճանին հասնելու համար անհրաժեշտ նվազագույն ժամկետի ընթացքում եւ, ցանկացած դեպքում, միայն սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան ընդունված երկկողմ պաշտպանական միջոցի գործողության ժամկետի ընթացքում: Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանները կատարելու դեպքում ներմուծող Կողմը կարող է կիրառել երկկողմ պաշտպանական միջոց՝ դիտարկվող ապրանքի մաքսատուրքի կիրառվող դրույքաչափն ավելացնելով այդ ապրանքի ներմուծման ավելացված ծավալի հետեւանքով հասցված վնասը վերացնելու համար անհրաժեշտ չափով, որը, սակայն, չպետք է գերազանցի երկկողմ պաշտպանական միջոցի ներդրման պահին կիրառվող՝ առավել բարենպաստության ռեժիմի դրույքաչափը:

5. Երկկողմ պաշտպանական միջոցը կիրառվում է մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածի ընթացքում: Երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան մեկ տարով, եթե առկա են ապացույցներ այն մասին, որ դա անհրաժեշտ է՝ լուրջ վնասը կամ դրա վտանգը վերացնելու կամ կանխարգելելու եւ տնտեսության ճյուղը փոփոխվող տնտեսական պայմաններին հարմարեցնելու համար: Կողմը միեւնույն ապրանքի նկատմամբ կրկնակի չի կիրառում երկկողմ պաշտպանական միջոց այն ժամկետի ընթացքում, որը հավասարազոր է նախորդ երկկողմ պաշտպանական միջոցի գործողության ժամկետին:

6. Երկկողմ պաշտպանական միջոցի գործողությունն ավարտվելուց հետո մաքսատուրքի դրույքաչափը սահմանվում է այն մակարդակով, որը կգործեր միջոցի գործողության ավարտի օրվա դրությամբ:

7. Երկկողմ պաշտպանական միջոցները չեն կիրառվում սույն Համաձայնագրի գործողության առաջին վեց ամսվա ընթացքում:

8. Երկկողմ առետրի դեպքում Կողմերից ոչ մեկը միեւնույն ապրանքի նկատմամբ միեւնույն ժամանակ սույն Համաձայնագրի 3.3 հոդվածի իմաստով չի կիրառում՝

ա) երկկողմ պաշտպանական միջոց.

բ) հատուկ պաշտպանական միջոց:

Հոդված 3.5

Հակազնազցման ու փոխհատուցման միջոցների կիրառումը

Հակազնազցման եւ փոխհատուցման մասով քննությունների ու հետագա ընթացակարգերի անցկացման նպատակով՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը ԵԱՏՄ անդամ պետությունները դիտարկում է առանձին-առանձին, այլ ոչ թե ԵԱՏՄ-ն՝ որպես մեկ ամբողջություն, եւ չի կիրառում հակազնազցման ու փոխհատուցման միջոցներ ԵԱՏՄ-ից՝ որպես մեկ ամբողջություն ներմուծման նկատմամբ: Իրանի Իսլամական Հանրապետությունը կարող է ԵԱՏՄ-ն դիտարկել որպես մեկ ամբողջություն սույն Համաձայնագրի 3.2 հոդվածի իմաստով սուբսիդիաների առկայության դեպքում, որոնք ԵԱՏՄ-ի մակարդակով հասանելի են ԵԱՏՄ բոլոր անդամ պետությունների համար:

Հոդված 3.6

Ծանուցումները

1. Ամբողջ պաշտոնական թղթակցությունն ու բոլոր փաստաթղթերը, որոնք Կողմերը փոխանակում են այն հարցերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է սույն գլուխը, իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների միջեւ:

2. Կողմերը, սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում, փոխանակում են տեղեկատվություն իրավասու մարմինների անվանումների ու կոնտակտային տվյալների վերաբերյալ: Կողմերը միմյանց անհապաղ ծանուցում են իրավասու մարմինների առնչությամբ կատարված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 3.7

Համագործակցությունը

Կողմերը ձգտում են զարգացնել համագործակցությունը հետևյալ ոլորտներում՝

- ա) ներքին շուկայի պաշտպանության միջոցներին առնչվող հարցերի վերաբերյալ հաղորդակցության ուղիներ (ներառյալ քննությունը).
- բ) քննություն անցկացնող մարմինների միջև փոխգործակցություն եւ տեղեկատվության փոխանակում.
- գ) ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման ոլորտում օրենսդրություն եւ գործելակերպ:

ԳԼՈՒԽ 4.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ

Հոդված 4.1

Նպատակները

Սույն գլխի նպատակը Կողմերի միջև ապրանքների առետրի պարզեցումն է՝ հետևյալ միջոցներով՝

- ա) ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի ընդունման ու կիրառման մասով համագործակցության զարգացում՝ առետրում ավելորդ տեխնիկական խոչընդոտները վերացնելու նպատակով.
- բ) Կողմերից յուրաքանչյուրի ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի փոխադարձ ընկալման զարգացում.
- գ) Կողմերի միջև ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, ընդունման եւ կիրառման ոլորտում տեղեկատվության փոխանակման ամրապնդում.
- դ) ստանդարտացման եւ համապատասխանության գնահատման ոլորտում միջազգային մարմինների աշխատանքի ընթացքում Կողմերի միջև համագործակցության ամրապնդում.
- ե) տվյալ նպատակների իրագործման համար հիմքի ապահովում, եւ
- զ) առետրում տեխնիկական խոչընդոտների հետ կապված հարցերով համագործակցության զարգացում:

Հոդված 4.2

Գործողության ոլորտը

1. Սույն գլխի դրույթները տարածվում են սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում թվարկված ամբողջ արտադրանքի վրա:
2. Սույն գլուխը կիրառվում է Կողմերի բոլոր այն ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի նկատմամբ, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել Կողմերի միջեւ ապրանքների առեւտրի վրա՝ բացառությամբ
 - ա) կառավարական մարմինների՝ արտադրության եւ սպառման կարիքների համար գնումների նպատակով օգտագործվող՝ կառավարական մարմինների կողմից նախապատրաստվող հատկորոշումների.
 - բ) սույն Համաձայնագրի 5-րդ գլխում (Սանիտարական եւ բուսասանիտարական միջոցներ) սահմանված սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների:
3. Սույն գլխում տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտների եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի հետ կապված բոլոր հղումները մեկնաբանվում են այնպես, որ ներառեն դրանց ցանկացած փոփոխություն եւ կանոններում կամ արտադրանքի ցանկում ցանկացած լրացում՝ բացառությամբ ոչ էական փոփոխությունների եւ լրացումների:
4. Սույն գլխին համապատասխան՝ Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի մշակելու, ընդունելու եւ կիրառելու ստանդարտներ, տեխնիկական կանոնակարգեր եւ համապատասխանության գնահատման ընթացակարգեր:

Հոդված 4.3

Սահմանումները

1. Ստանդարտացման եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մասով կիրառելի ընդհանուր եզրույթները, որպես կանոն, ունեն այն սահմանումներով դրանց տրված իմաստը, որոնք ընդունվել են Միացյալ ազգերի կազմակերպության համակարգի շրջանակներում եւ ստանդարտացման միջազգային մարմինների կողմից՝ հաշվի առնելով դրանց համատեքստը, ինչպես նաեւ սույն գլխի առարկան եւ նպատակները:

2. Սույն գլխի նպատակներով կիրառվում են եզրույթներ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

ա) տեխնիկական կանոնակարգ՝ փաստաթուղթ, որով սահմանվում են արտադրանքի բնութագրերը կամ դրանց հետ կապված՝ արտադրության գործընթացներն ու մեթոդները՝ ներառյալ կիրառելի վարչական դրույթները, որոնց պահպանումը պարտադիր է: Այն նաեւ կարող է ներառել կամ բացառապես պարունակել եզրութաբանությանը, նշագրերին, փաթեթվածքին, մակնշմանը կամ պիտակավորմանը ներկայացվող պահանջներ՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են արտադրանքի, կամ արտադրության գործընթացի կամ մեթոդի նկատմամբ:

Բացադրական նշում

ԻՍՈ/ՄԷՎ 2-րդ ձեռնարկում ներկայացված սահմանումն ամբողջական չէ. այն հիմնված է, այսպես կոչված, «շինարարական բլոկի» համակարգի վրա:

բ) ստանդարտ՝ իրավասու մարմնի կողմից ընդունված փաստաթուղթ, որը ներառում է արտադրանքի կամ արտադրանքի հետ կապված արտադրության գործընթացների եւ մեթոդների նկատմամբ կիրառելի համընդհանուր եւ բազմակի կիրառման համար կանոններ, ցուցումներ կամ բնութագրեր, որոնց պահպանումը պարտադիր չէ: Այն նաեւ կարող է ներառել կամ բացառապես պարունակել եզրութաբանությանը, նշագրերին, փաթեթվածքին, մակնշմանը եւ պիտակավորմանը ներկայացվող պահանջներ՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են արտադրանքի կամ արտադրության գործընթացի կամ մեթոդի նկատմամբ:

Բացառական նշում

Այն եզրույթները, որոնց սահմանումները ներկայացված են ԻՍՈ/ՄԷՀ 2-րդ ձեռնարկում, վերաբերում են արտադրանքին, գործընթացներին ու ծառայություններին: Սույն գլուխը վերաբերում է միայն արտադրանքին կամ արտադրության գործընթացներին ու մեթոդներին վերաբերող տեխնիկական կանոնակարգերին, ստանդարտներին եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերին: ԻՍՈ/ՄԷՀ 2-րդ ձեռնարկում սահմանված ստանդարտները կարող են լինել պարտադիր կամ պահպանվել կամավոր հիմունքներով: Սույն գլխի նպատակներով ստանդարտները սահմանվում են որպես կամավոր հիմունքներով պահպանման համար նախատեսված, իսկ տեխնիկական կանոնակարգերը՝ որպես կատարման համար պարտադիր փաստաթղթեր: Ստանդարտացման միջազգային մարմինների կողմից մշակվող ստանդարտները հիմնվում են ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) վրա: Սույն գլուխը կիրառվում է նաեւ այն փաստաթղթերի նկատմամբ, որոնք հիմնված չեն ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) վրա:

- գ) համապատասխանության գնահատման ընթացակարգեր՝ ցանկացած ընթացակարգ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառվում է՝ պարզելու համար՝ արդյոք կատարվում են տեխնիկական կանոնակարգերում կամ ստանդարտներում պարունակվող համապատասխան պահանջները:

Բացառական նշում

Համապատասխանության գնահատման ընթացակարգերը, մասնավորապես, ներառում են նմուշառման, փորձարկման եւ տեսչական ստուգման ընթացակարգերը, համապատասխանության գնահատումը, ստուգումը եւ հաստատումը, գրանցումը, հավատարմագրումն ու հավանության արժանացնելը, ինչպես նաեւ դրանց համակցումները:

- դ) կենտրոնական կառավարական մարմին՝ կենտրոնական կառավարություն, դրա նախարարություններն ու վարչությունները կամ տվյալ գործունեության մասով կենտրոնական կառավարության կողմից հսկվող ցանկացած մարմին:

Հոդված 4.4

Տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի նախապատրաստումը, ընդունումը եւ կիրառումը

1. Կողմերից յուրաքանչյուրը տեխնիկական կանոնակարգերի մասով ապահովում է, որ մյուս Կողմի տարածքից ներմուծվող արտադրանքի նկատմամբ կիրառվի ռեժիմ, որը ոչ պակաս բարենպաստ է, քան ազգային ծագում ունեցող

նմանատիպ արտադրանքի եւ ցանկացած այլ երկրի ծագում ունեցող նմանատիպ արտադրանքի նկատմամբ կիրառվող ռեժիմը:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ տեխնիկական կանոնակարգերը մշակվեն, ընդունվեն կամ կիրառվեն այնպես, որ չստեղծեն ավելորդ խոչընդոտներ փոխադարձ առեստրում կամ չհանգեցնեն դրանց ստեղծմանը: Այդ նպատակով տեխնիկական կանոնակարգերը չեն սահմանափակում առեստրուն ավելի, քան անհրաժեշտ է օրինական նպատակներն իրագործելու համար՝ հաշվի առնելով այն ռիսկերը, որոնք կառաջանային այդ նպատակները չիրագործվելու դեպքում: Այդպիսի օրինական նպատակներ են, *ի թիվս այլնի*, ազգային անվտանգության պահանջները, խարդախ գործելակերպի կանխումը, մարդկանց առողջության կամ անվտանգության, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ անվտանգության կամ շրջակա միջավայրի պաշտպանությունը: Նման ռիսկերի գնահատման ժամանակ, *ի թիվս այլնի*, հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են առկա գիտական եւ տեխնիկական տեղեկատվությունը, համապատասխան տեխնոլոգիան կամ արտադրանքի ենթադրվող վերջնական օգտագործումը:

3. Տեխնիկական կանոնակարգերը չպետք է շարունակեն ուժի մեջ մնալ, եթե դրանց ընդունմանը հանգեցրած հանգամանքները կամ նպատակներն այլեւս գոյություն չունեն, կամ եթե փոխված հանգամանքներին կամ նպատակներին կարելի է լուծում տալ այնպիսի միջոցներով, որոնք ավելի քիչ են սահմանափակում առեստրուրը:

4. Եթե պահանջվում են տեխնիկական կանոնակարգեր եւ գոյություն ունեն համապատասխան միջազգային ստանդարտներ, կամ ավարտվում է դրանց մշակումը, ապա Կողմերն օգտագործում են դրանք կամ դրանց համապատասխան բաժինները՝ որպես իրենց տեխնիկական կանոնակարգերի հիմք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի միջազգային ստանդարտները կամ դրանց համապատասխան բաժիններն արդյունավետ չեն կամ անհամապատասխան

միջոցներ են օրինական նպատակներին հասնելու համար, օրինակ՝ էական կլիմայական կամ աշխարհագրական գործոնների կամ էական տեխնոլոգիական խնդիրների պատճառով:

5. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ այն դեպքերում, երբ պահանջվում է տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին համապատասխանության ուղղակի հաստատում, կենտրոնական կառավարական մարմինները մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող արտադրանքի նկատմամբ կիրառեն հետեւյալ դրույթները՝

5.1. համապատասխանության գնահատման ընթացակարգերը մշակվում, ընդունվում եւ կիրառվում են այնպես, որ այլ Կողմի տարածքի ծագում ունեցող նմանատիպ արտադրանքի մատակարարներին տրամադրվի հասանելիություն ոչ պակաս բարենպաստ պայմաններով, քան տրամադրվում են նմանատիպ իրավիճակում հայրենական արտադրության նմանատիպ արտադրանքի կամ ցանկացած այլ երկրի ծագում ունեցող արտադրանքի մատակարարներին. հասանելիությունը ներառում է մատակարարի՝ համապատասխանության գնահատման կանոնների պահպանմամբ այդ ընթացակարգի անցկացման իրավունքը, այդ թվում, նախատեսված լինելու դեպքում, արտադրական օբյեկտում համապատասխանության գնահատում անցկացնելու եւ համապատասխանության գնահատման համակարգի համապատասխանության նշան ստանալու հնարավորությունը.

5.2. համապատասխանության գնահատման ընթացակարգերը մշակվում, ընդունվում եւ կիրառվում են այնպես, որ փոխադարձ առեւտրում ավելորդ խոչընդոտներ չստեղծեն կամ չհանգեցնեն դրանց ստեղծմանը: Սա նշանակում է, *ի թիվս այլնի*, որ համապատասխանության գնահատման ընթացակարգերն ավելի խիստ չեն եւ չեն կիրառվում ավելի խստորեն, քան անհրաժեշտ է, որ ներմուծող Կողմը բավականաչափ վստահ լինի, որ արտադրանքը համապատասխանում է

կիրառվող տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին՝ հաշվի առնելով այն ռիսկերը, որոնք կառաջանային դրանց անհամապատասխանության դեպքում:

6. Սույն հոդվածի 5-րդ կետի դրույթները կիրառելիս յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ՝

- ա. համապատասխանության գնահատման ընթացակարգերն անցկացվեն եւ ավարտվեն հնարավորինս շուտ եւ մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող արտադրանքի նկատմամբ ոչ պակաս բարենպաստ հերթականությամբ, քան հայրենական համանման արտադրանքի համար,
- բ. հրապարակվեն տեղեկություններ համապատասխանության գնահատման յուրաքանչյուր գործընթացի ստանդարտ տեսողության մասին կամ դրա անցկացման ենթադրյալ տեսողությունը, ըստ հարցման, հաղորդվի հայտատուին. հայտ ստանալու դեպքում իրավասու մարմինը օպերատիվ կերպով ուսումնասիրի փաստաթղթերի ամբողջականությունն ու պարզ եւ սպառիչ կերպով տեղեկացնի հայտատուին բոլոր թերությունների մասին. իրավասու մարմինը հնարավորինս շուտ պարզի եւ սպառիչ կերպով տեղեկացնի հայտատուին համապատասխանության գնահատման արդյունքների մասին այնպես, որ անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի ուղղիչ միջոց ձեռնարկել. եթե նույնիսկ հայտն ունի թերություններ, իրավասու մարմինը, հայտատուի խնդրանքով, հնարավորինս իրականացնի համապատասխանության գնահատում, եւ հայտատուն, ըստ հարցման, տեղեկացվի այդ ընթացակարգի իրականացման փուլի մասին՝ ցանկացած ուշացում բացատրելու միջոցով.
- գ. տեղեկատվության նկատմամբ պահանջները ներկայացվեն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է համապատասխանության գնահատման եւ վճարման չափի սահմանման համար:

- դ. մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող արտադրանքի մասին այն տեղեկատվության գաղտնիությունը, որը բացահայտվում կամ տրամադրվում է համապատասխանության գնահատման այդպիսի ընթացակարգերի հետ կապված, պահպանվի ճիշտ այնպես, ինչպես հայրենական ծագում ունեցող արտադրանքի նկատմամբ, եւ այնպես, որ ապահովվի օրինական կոմերցիոն շահերի պաշտպանությունը.
- ե. մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող արտադրանքի համապատասխանության գնահատման հետ կապված ցանկացած վճար եւ պարգեավճար հավասար լինի ցանկացած վճարի եւ պարգեավճարի, որը գանձվում է հայրենական ծագում ունեցող համանման արտադրանքի կամ ցանկացած այլ երկրի ծագում ունեցող արտադրանքի համապատասխանության գնահատման համար՝ հաշվի առնելով կապի, տրանսպորտի ծախսերն ու այլ ծախսեր, որոնք պայմանավորված են հայտատուի արտադրական օբյեկտի եւ համապատասխանության գնահատման մարմնի գտնվելու վայրի տարբերությամբ.
- զ. համապատասխանության գնահատման ընթացակարգերում օգտագործվող օբյեկտների տեղակայումը եւ նմուշառման ընթացակարգը հայտատուների կամ նրանց ներկայացուցիչների համար չառաջացնեն ավելորդ անհարմարություններ.
- է. ամեն անգամ, երբ արտադրանքի՝ կիրառելի տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին համապատասխանության հաստատումից հետո դրա բնութագրերում կատարվեն փոփոխություններ, փոփոխված արտադրանքի մասով համապատասխանության գնահատման ընթացակարգը սահմանափակվի նրանով, ինչ անհրաժեշտ է՝ վստահ լինելու համար, որ տվյալ արտադրանքը դեռեւս

համապատասխանում է տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին.

ը. գոյություն ունենա համապատասխանության գնահատման ընթացակարգի իրականացման հետ կապված բողոքների ուսումնասիրման եւ, բողոքը հիմնավորված լինելու դեպքում, ուղղիչ միջոցի ձեռնարկման ընթացակարգ:

7. Սույն հոդվածի 5-րդ եւ 6-րդ կետերում ոչինչ չի խոչընդոտում նրան, որ Կողմերը տեղում, իրենց տարածքի սահմաններում անցկացնեն ողջամիտ ստուգումներ:

8. Այն դեպքերում, երբ պահանջվում է տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին արտադրանքի համապատասխանության դրական հաստատում, եւ գոյություն ունեն ստանդարտացման միջազգային մարմինների կողմից հրապարակված համապատասխան ուղեցույցներ ու ցուցումներ կամ դրանց մշակումը մոտ է ավարտին, Կողմերն ապահովում են, որ կենտրոնական կառավարական մարմիններն օգտագործեն դրանք կամ դրանց համապատասխան բաժինները՝ որպես համապատասխանության գնահատման իրենց ընթացակարգերի հիմք՝ բացառությամբ հարցմամբ պատշաճորեն պարզաբանվող այն դեպքերի, երբ այդպիսի ուղեցույցները կամ ցուցումները կամ դրանց համապատասխան բաժինները անհամապատասխան են Կողմերի համար, մասնավորապես, այնպիսի պատճառներով, ինչպիսիք են ազգային անվտանգության պահանջները, խարդախ գործելակերպի կանխումը, մարդկանց առողջության կամ անվտանգության, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության, շրջակա միջավայրի պաշտպանությունը, էական կլիմայական կամ մյուս աշխարհագրական գործոնները, էական տեխնոլոգիական կամ ենթակառուցվածքային խնդիրները:

Հոդված 4.5

Համապատասխանության գնահատման ճանաչումը

1. Առանց խախտելու սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի դրույթները՝ յուրաքանչյուր Կողմ հնարավորինս ապահովում է, որ մյուս Կողմի՝ համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդյունքները ճանաչվեն՝ նույնիսկ եթե նման ընթացակարգերը տարբերվում են իրենց սեփական ընթացակարգերից՝ պայմանով, որ նրանք հավաստիանան, որ տվյալ ընթացակարգերը նույնչափ համապատասխանում են կիրառվող տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին, որքան իրենց սեփական ընթացակարգերը: Ընդունվում է, որ կարող է պահանջվել անցկացնել նախնական խորհրդակցություններ՝ փոխընդունելի պայմանավորվածության ձեռքբերման նպատակով, մասնավորապես՝ հետեւյալի առնչությամբ՝

- ա) արտահանող Կողմի՝ համապատասխանության գնահատման համապատասխան մարմինների պատշաճ եւ կայուն տեխնիկական կարողություններ, որպեսզի առկա լինի մշտական վստահություն նրանց կողմից համապատասխանության գնահատման արդյունքների հուսալիության մեջ. այս առնչությամբ, ստանդարտացման միջազգային մարմինների կողմից հրապարակված ուղեցույցներին կամ ցուցումներին համապատասխանությունը, որը հաստատվել է, օրինակ, հավատարմագրման միջոցով, համարվում է բավարար տեխնիկական կարողությունների ապացույց.
- բ) համապատասխանության գնահատման արդյունքների ճանաչման սահմանափակում միայն այն արդյունքներով, որոնք ստացվել են արտահանող Կողմի որոշակի մարմինների կողմից:

2. Կողմերն ապահովում են, որ համապատասխանության գնահատման իրենց ընթացակարգերը, որքանով դա իրագործելի է, հնարավոր դարձնեն սույն հոդվածի 1-ին կետի դրույթների կիրարկումը:

3. Կողմին առաջարկվում է բարյացակամորեն քննարկել մյուս Կողմի՝ իրենց համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդյունքների փոխադարձ ճանաչման մասին համաձայնագրերի կնքման նպատակով բանակցություններ անցկացնելու մասին խնդրանքները: Կողմերը կարող են պահանջել, որ այդպիսի համաձայնագրերը համապատասխանեն սույն հոդվածի 1-ին կետի չափորոշիչներին եւ լինեն փոխադարձաբար գոհացուցիչ՝ համապատասխան արտադրանքի առետրին նպաստելու մասով իրենց հնարավորությունների տեսանկյունից:

4. Կողմերից յուրաքանչյուրին առաջարկվում է թույլ տալ մյուս Կողմի տարածքում տեղակայված համապատասխանության գնահատման մարմիններին մասնակցել համապատասխանության գնահատման իրենց ընթացակարգերին՝ իրենց տարածքներում կամ ցանկացած երրորդ Կողմի տարածքում տեղակայված մարմիններին տրամադրվող պայմաններից ոչ պակաս բարենպաստ պայմաններով:

Հոդված 4.5bis

Թափանցիկությունը

1. Կողմերն ընդունում են ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, ընդունման եւ կիրառման թափանցիկության կարելիությունը:

2. Յուրաքանչյուր Կողմ, որը մշակում, ընդունում կամ կիրառում է տեխնիկական կանոնակարգ, որը կարող է էական ազդեցություն ունենալ մյուս Կողմի առետրի

վրա, մյուս Կողմի խնդրանքով պարզաբանում է այդպիսի տեխնիկական կանոնակարգի անհրաժեշտությունը՝ 4.4 հոդվածի 2-4-րդ կետերի դրույթների տեսանկյունից: Եթե տեխնիկական կանոնակարգը մշակվում, ընդունվում կամ կիրառվում է 4.4 հոդվածի 2-րդ կետում ուղղակիորեն նշված օրինական նպատակներից որեւէ մեկի իրագործման համար եւ համապատասխանում է այդ ոլորտում առկա միջազգային ստանդարտներին, ապա ենթադրվում է, որ այն փոխադարձ առեւտրում ավելորդ խոչընդոտներ չի ստեղծում:

3. Կողմերը, հնարավորության դեպքում, ընդունում են տեխնիկական կանոնակարգեր, որոնք առաջին հերթին հիմնված են արտադրանքի բնութագրերին ներկայացվող պահանջների, եւ ոչ թե դրա կառուցվածքին կամ նկարագրությանը ներկայացվող պահանջների վրա:

4. Այն դեպքերում, երբ համապատասխան միջազգային ստանդարտ գոյություն չունի կամ մշակվող տեխնիկական կանոնակարգի տեխնիկական բովանդակությունը չի համապատասխանում համապատասխան միջազգային ստանդարտների տեխնիկական բովանդակությանը, եւ եթե տեխնիկական կանոնակարգը կարող է էական ազդեցություն ունենալ մյուս Կողմի փոխադարձ առեւտրի վրա, ապա յուրաքանչյուր Կողմ՝

- ա) համապատասխան սկզբնական փուլում հրապարակում է ծանուցում կոնկրետ տեխնիկական կանոնակարգը ենթադրյալ ներկայացնելու մասին՝ մյուս Կողմի շահագրգիռ անձանց դրան ծանոթանալու հնարավորություն ընձեռելու համար.
- բ) կապի ապահովման կենտրոնների միջոցով մյուս Կողմին ծանուցում է այն արտադրանքի մասին, որին վերաբերում է մշակվող տեխնիկական կանոնակարգը՝ ծանուցման մեջ հակիրճ նշելով մշակվող տեխնիկական կանոնակարգի նպատակները եւ հիմնավորումները: Այդպիսի

ծանուցումները հրապարակվում են համապատասխան սկզբնական փուլում, երբ դեռ հնարավոր է ուղղումներ կատարել և հաշվի առնել դիտողությունները.

գ) ըստ հարցման՝ մյուս Կողմին տրամադրում է մշակվող տեխնիկական կանոնակարգի մանրամասն նկարագրությունները կամ տեքստերը, և, հնարավորության դեպքում, նշում է այն բաժինները, որոնք էապես տարբերվում են համապատասխան միջազգային ստանդարտներից.

դ) «ա» ենթակետով նախատեսված ծանուցման հրապարակումից հետո առանց խտրականության մյուս Կողմին տրամադրում է 60 օր՝ գրավոր դիտողություններ նախապատրաստելու, ըստ հարցման այդ դիտողությունները քննարկելու և այդ գրավոր դիտողությունները, ինչպես նաև տվյալ քննարկումների արդյունքները հաշվի առնելու համար:

5. Եթե ստանդարտացման միջազգային մարմնի համապատասխան ուղեցույց կամ առաջարկություն գոյություն չունի, կամ մշակվող տեխնիկական կանոնակարգի տեխնիկական բովանդակությունը չի համաձայնեցվում ստանդարտացման միջազգային մարմինների կողմից հրապարակված համապատասխան ուղեցույցների կամ առաջարկությունների հետ, և եթե համապատասխանության գնահատման այդ ընթացակարգը կարող է էական ազդեցություն ունենալ մյուս Կողմի առետորի վրա, ապա յուրաքանչյուր Կողմ՝

ա) համապատասխան սկզբնական փուլում հրապարակում է ծանուցում համապատասխանության գնահատման կոնկրետ ընթացակարգը ենթադրյալ ներկայացնելու մասին՝ մյուս Կողմի շահագրգիռ անձանց դրան ծանոթանալու հնարավորություն ընձեռելու համար.

բ) կապի ապահովման կենտրոնների միջոցով մյուս Կողմին ծանուցում է այն արտադրանքի մասին, որի նկատմամբ կիրառվում է

համապատասխանության գնահատման մշակվող ընթացակարգը՝ ծանուցման մեջ հակիրճ նշելով դրա նպատակները եւ հիմնավորումը: Այդպիսի ծանուցումները հրապարակվում են համապատասխան սկզբնական փուլում, երբ դեռ հնարավոր է ուղղումներ կատարել եւ հաշվի առնել դիտողությունները:

- գ) ըստ հարցման՝ մյուս Կողմին տրամադրում է մշակվող ընթացակարգի մանրամասն նկարագրությունները կամ տեքստերը, եւ, հնարավորության դեպքում, նշում է այն բաժինները, որոնք էապես տարբերվում են ստանդարտացման միջազգային մարմինների կողմից հրապարակված համապատասխան ուղեցույցներից եւ առաջարկություններից:
- դ) «ա» ենթակետում նախատեսված ծանուցման հրապարակումից հետո առանց խտրականության մյուս Կողմին տրամադրում է 60 օր՝ գրավոր դիտողություններ նախապատրաստելու, ըստ հարցման այդ դիտողությունները քննարկելու եւ այդ գրավոր դիտողություններն ու այդ քննարկումների արդյունքները հաշվի առնելու համար:

6. Սույն հոդվածի 4-5-րդ կետերի դրույթների պահպանման պայմանով՝ Կողմը, անվտանգության, առողջության, շրջակա միջավայրի պաշտպանության կամ ազգային անվտանգության ապահովման անհետաձգելի խնդիրների առաջացման կամ դրանց առաջացման վտանգի առկայության դեպքում, կարող է, անհրաժեշտ համարելու դեպքում, չդիմել սույն հոդվածի 4-5-րդ կետերում թվարկված միջոցներին՝ պայմանով, որ այդ Կողմը, տեխնիկական կանոնակարգը եւ (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգն ընդունելուց հետո՝

- ա) կապի ապահովման կենտրոնների միջոցով մյուս Կողմին անհապաղ տեղեկացնում է կոնկրետ տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգի ու այն

արտադրանքի մասին, որի նկատմամբ այն կիրառելի է՝ ծանուցման մեջ հակիրճ նշելով տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգի ներդրման նպատակն ու պատճառները, այդ թվում՝ շարադրելով անհետաձգելի խնդիրների էությունը.

բ) ըստ հարցման մյուս Կողմին տրամադրում է տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգի տեքստերի պատճենները.

գ) առանց խտրականության մյուս Կողմին հնարավորություն է տալիս գրավոր ներկայացնելու իր դիտողությունները, ըստ հարցման քննարկում է այդ դիտողությունները եւ հաշվի առնում այդ գրավոր դիտողությունները, ինչպես նաեւ տվյալ քննարկումների արդյունքները:

7. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ բոլոր ընդունված տեխնիկական կանոնակարգերը եւ (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգերը անհապաղ հրապարակվեն կամ այլ կերպ հասանելի դառնան՝ մյուս Կողմի շահագրգիռ անձանց դրանց ծանոթանալու հնարավորություն ընձեռելու համար:

8. Բացառությամբ անհետաձգելի հանգամանքների՝ Կողմերը տեխնիկական կանոնակարգերը հրապարակելուց հետո առնվազն 180-օրյա ժամկետ են նախատեսում դրանք ուժի մեջ մտնելու համար՝ արտահանող Կողմի արտադրողներին իրենց արտադրանքը կամ արտադրության մեթոդները ներմուծող Կողմի պահանջներին համապատասխանեցնելու համար ժամանակ տրամադրելու նպատակով:

9. Բացառությամբ անհետաձգելի հանգամանքների՝ Կողմերը նախատեսում են ողջամիտ ժամանակահատված՝ համապատասխանության գնահատման

ընթացակարգերին վերաբերող պահանջների հրապարակման եւ դրանք ուժի մեջ մտնելու միջեւ՝ արտահանող Կողմի արտադրողներին իրենց արտադրանքը կամ արտադրության մեթոդները ներմուծող Կողմի պահանջներին համապատասխանեցնելու համար ժամանակ տրամադրելու նպատակով:

10. Յուրաքանչյուր Կողմ տեղեկացնում է մյուս Կողմին սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում թվարկված՝ ներկրվող արտադրանքին ներկայացվող պարտադիր պահանջների մասին՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրվա ընթացքում:

11. Կողմերը հնարավորինս ձգտում են տեղեկատվության փոխանակումն իրականացնել անգլերենով: Հիմնական օրենքները եւ նորմատիվ ակտերը կամ դրանց հետ կապված հակիրճ տեղեկանքներն ըստ հարցման տրամադրվում են անգլերենով:

Հոդված 4.6

Խորհրդակցությունները

1. Այն դեպքերում, երբ ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի ամենօրյա կիրառումը ազդում է Կողմերի միջեւ առետորի վրա, Կողմը կարող է պահանջ ներկայացնել՝ այդ հարցը լուծելու նպատակով խորհրդակցություններ անցկացնելու մասին: Խորհրդակցություններ անցկացնելու մասին պահանջը պետք է ուղարկվի սույն գլխի 4.8 հոդվածին համապատասխան սահմանված՝ մյուս Կողմի կապի ապահովման կենտրոն:

2. Յուրաքանչյուր Կողմ գործադրում է բոլոր ջանքերը մյուս Կողմի՝ սույն գլխի իրականացման հետ կապված հարցերի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու

վերաբերյալ ցանկացած պահանջ արագ եւ կառուցողական կերպով ուսումնասիրելու համար:

3. Այն դեպքերում, երբ սույն գլխին վերաբերող հարցը չի կարող պարզաբանվել կամ լուծվել խորհրդակցությունների միջոցով, Կողմերը կարող են ստեղծել ժամանակավոր աշխատանքային խումբ՝ ընդունելի եւ գործնականում կիրառելի այնպիսի լուծում գտնելու նպատակով, որը կպարզեցնի առեւտուրը: Աշխատանքային խմբի կազմի մեջ մտնում են Կողմերի ներկայացուցիչները:

4. Եթե Կողմը մերժում է մյուս Կողմի՝ աշխատանքային խումբ ստեղծելու խնդրանքը, ապա այն, ըստ հարցման, պարզաբանում է իր որոշման պատճառները:

Հոդված 4.7

Համագործակցությունը

1. Ապահովելու համար, որ ստանդարտները, տեխնիկական կանոնակարգերը եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերը Կողմերի միջեւ ապրանքների առեւտրում ավելորդ խոչընդոտներ չստեղծեն, Կողմերը հնարավորինս համագործակցում են ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի ոլորտում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համագործակցությունը կարող է ներառել հետեւյալը՝

ա) համատեղ սեմինարների անցկացում՝ Կողմերից յուրաքանչյուրի ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի փոխադարձ ընկալումը բարելավելու նպատակով.

- բ) Կողմերի պաշտոնատար անձանց փոխայցեր՝ որակավորումը բարձրացնելու նպատակով.
- գ) ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում.
- դ) Կողմերից յուրաքանչյուրի՝ ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի համար պատասխանատու մարմինների՝ փոխադարձ շահ ներկայացնող հարցերի հետ կապված համագործակցությանն աջակցում.
- ե) գիտատեխնիկական համագործակցության ապահովում՝ տեխնիկական կանոնակարգերի որակը բարձրացնելու նպատակով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի իրագործումը կախված է հատկացված միջոցների եւ Կողմերից յուրաքանչյուրի համապատասխան օրենսդրության եւ նորմատիվ ակտերի առկայությունից:

4. Առեստրում տեխնիկական խոչընդոտների ոլորտում համագործակցությունը կարող է իրականացվել, *ի թիվս այլնի*, համապատասխան կապի ուղիներով իրականացվող երկխոսության, համատեղ նախագծերի եւ տեխնիկական աջակցության միջոցով:

5. Կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ առանձին ոլորտներում իրականացնել համատեղ նախագծեր, ցուցաբերել տեխնիկական աջակցություն եւ համագործակցել ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի հետ կապված հարցերի շուրջ:

6. Կողմերը պայմանավորվել են կարծիքներ փոխանակել առետրում տեխնիկական խոչընդոտների հետ կապված այն հարցերի շուրջ, որոնք վերաբերում են շուկայի նկատմամբ վերահսկողությանը եւ իրավակիրառ պրակտիկային տվյալ ոլորտում՝ առետրում տեխնիկական խոչընդոտներին վերաբերող մասով:

7. Կողմը, ըստ հարցման, պատշաճորեն դիտարկում է մյուս Կողմի կողմից ներկայացվող՝ սույն գլխի շրջանակներում համագործակցելու առաջարկները:

8. Սույն գլխի շրջանակներում համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով Կողմերը կարող են սույն գլխում ներկայացված հարցերի վերաբերյալ հատուկ (*ad hoc*) պայմանավորվածություններ կնքել:

Հոդված 4.8

Իրավասու մարմինները եւ կապի ապահովման կենտրոնները

1. Կողմերը նշանակում են իրավասու մարմիններ եւ կապի ապահովման կենտրոններ, ինչպես նաեւ փոխանակվում են նշանակված իրավասու մարմինների եւ կապի ապահովման կենտրոնների անվանումների, ինչպես նաեւ այդ իրավասու մարմինների եւ կապի ապահովման կենտրոնների համապատասխան պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալների, այդ թվում՝ հեռախոսի, ֆաքսի համարների, էլեկտրոնային փոստի հասցեների եւ այլ անհրաժեշտ տվյալների վերաբերյալ տեղեկատվությամբ:

2. Կողմերն անհապաղ միմյանց տեղեկացնում են իրավասու մարմինների եւ կապի ապահովման կենտրոնների հետ կապված ցանկացած փոփոխության, ինչպես նաեւ համապատասխան պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկատվության փոփոխության մասին:

3. Կապի ապահովման կենտրոնի գործառույթներն են՝

- ա) նպաստել Կողմերի միջև ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մասին տեղեկատվության փոխանակմանը՝ ի պատասխան այդպիսի տեղեկատվություն տրամադրելու մասին մյուս Կողմի բոլոր հիմնավորված հարցումների. եւ
- բ) փոխանցել մյուս Կողմի հարցումները համապատասխան կարգավորող մարմիններին:

4. Իրավասու մարմինների գործառույթներն են՝

- ա) իրականացնել սույն գլխի իրագործման մոնիթորինգ.
- բ) նպաստել համագործակցությանը, տեղին լինելու դեպքում՝ սույն Համաձայնագրի 4.7 հոդվածին համապատասխան.
- գ) օպերատիվ կերպով քննարկել մյուս Կողմի՝ ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, ընդունման, կիրառման եւ պահպանման ապահովման հետ կապված ցանկացած հարց.
- դ) Կողմի հարցմամբ օժանդակել սույն գլխի շրջանակներում առաջացող ցանկացած հարցի մասով խորհրդակցությունների անցկացմանը.
- ե) կատարել ցանկացած այլ գործողություն, որը, Կողմերի կարծիքով, կօգնի իրենց՝ սույն գլխի իրագործման հարցում, եւ
- զ) կատարել Համատեղ կոմիտեի կողմից պատվիրակվող այլ գործառույթներ:

ԳԼՈՒԽ 5.

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հոդված 5.1

Նպատակները

Սույն գլխի նպատակն է Կողմերի տարածքներում մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանությունը հետեցյալի հետ համատեղ՝

- ա) սանիտարական եւ բուսասանիտարական միջոցներին առնչվող խնդիրների լուծումների որոնում.
- բ) Կողմերի միջեւ եւ նրանց իրավասու մարմինների շրջանում համագործակցության ամրապնդում, այդ թվում՝ սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների զարգացման եւ կիրառման ոլորտում.
- գ) սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների ոլորտում տեղեկությունների փոխանակման ոլորացում եւ Կողմերից յուրաքանչյուրի կարգավորող համակարգի մասին գիտելիքների եւ դրա ընկալման բարելավում:

Հոդված 5.2

Սահմանումները²⁶

1. Սույն գլխի նպատակներով՝

²⁶ Տվյալ սահմանումների նպատակներով՝ «կենդանի» ներառում են ձկներն ու վայրի կենդանական աշխարհը, «բույսը» ներառում են անտառներն ու վայրի բուսական աշխարհը, «վնասատուները» ներառում են մոլախոտերը, իսկ «աղտոտող նյութերը» ներառում են թունաքիմիկատները, անասնաբուժական դեղամիջոցների մնացորդները եւ կողմնակի նյութերը:

- ա) Սանիտարական կամ բուսասանիտարական միջոցը ցանկացած միջոց է, որը կիրառվում է՝
- i. Կողմի տարածքում կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը վնասատուների, հիվանդությունների, հիվանդություն փոխանցող վնասակար օրգանիզմների կամ ախտածին օրգանիզմների ներթափանցման, արմատավորման կամ տարածման հետեանքով առաջացող ռիսկերից պաշտպանելու համար.
 - ii. Կողմի տարածքում մարդկանց կամ կենդանիների կյանքը կամ առողջությունը սննդամթերքում, ըմպելիքներում կամ կերերում հավելումներից, աղտոտող նյութերից, տոքսիններից կամ ախտածին օրգանիզմներից առաջացող ռիսկերից պաշտպանելու համար.
 - iii. Կողմի տարածքում մարդու կյանքը կամ առողջությունը կենդանիների, բույսերի կամ դրանցից պատրաստված արտադրանքի միջոցով փոխանցվող հիվանդությունների, կամ վնասատուների ներթափանցման, արմատավորման կամ տարածման հետեանքով առաջացող ռիսկերից պաշտպանելու համար, կամ
 - iv. Կողմի տարածքում վնասատուների ներթափանցման, արմատավորման եւ տարածման հետեանքով առաջացող այլ վնասներ կանխելու կամ սահմանափակելու համար.
- բ) Սանիտարական կամ բուսասանիտարական միջոցները ներառում են բոլոր համապատասխան օրենքները, որոշումները, կանոնակարգերը, կանոնները, պահանջներն ու ընթացակարգերը՝ ներառյալ, *ի թիվս այլնի,* վերջնական արտադրանքին ներկայացվող պահանջները, մշակման եւ արտադրության մեթոդները, փորձարկումների, տեսչական ստուգման,

սերտիֆիկացման ու հավանություն տալու ընթացակարգերը, մշակման կարանտինային մեթոդները՝ ներառյալ կենդանիների կամ բույսերի փոխադրման կամ փոխադրման ընթացքում դրանց կենսագործունեությունը պահպանելու համար անհրաժեշտ նյութերին առնչվող համապատասխան պահանջները, համապատասխան վիճակագրական մեթոդների, փորձանմուշներ վերցնելու ընթացակարգերի եւ դիսկը գնահատելու մեթոդների վերաբերյալ դրույթները, ինչպես նաեւ սննդամթերքի անվտանգության հետ ուղղակիորեն կապված փաթեթավորմանն ու մակնշմանը ներկայացվող պահանջները.

- գ) Վնասատուներից կամ հիվանդություններից զերծ գոտին այն գոտին է, որը Կողմի ամբողջ տարածքը, Կողմի տարածքի մի մասը կամ մի քանի Կողմերի տարածքների մասերը կամ տարածքներն են ամբողջությամբ, ինչպես դա սահմանված է իրավասու մարմինների կողմից, եւ որտեղ կոնկրետ վնասատուն կամ հիվանդությունը չի հանդիպում.
- դ) Վնասատուներից կամ հիվանդություններից զերծ գոտին կարող է շրջապատել, շրջապատված լինել կամ սահմանակից լինել որեւէ գոտու՝ ինչպես Կողմի տարածքի մի մասի սահմաններում, այնպես էլ աշխարհագրական տարածաշրջանում, որն ընդգրկում է երկու Կողմերի տարածքների մասերը կամ այդ տարածքներն ամբողջությամբ, որտեղ հայտնաբերվել է կոնկրետ վնասատուն կամ հիվանդությունը, սակայն որում ձեռնարկվում են տեղական հսկողության այնպիսի միջոցներ, ինչպիսիք են պաշտպանության, վերահսկման եւ բուֆերային գոտիների սահմանումը, որոնք կսահմանափակեն տվյալ վնասատուի կամ հիվանդության տարածումը կամ կոչնչացնեն դրանք.

- ե) Վնասատուների կամ հիվանդությունների աննշան տարածմամբ գոտին այն գոտին է, որը ներառում է Կողմի ամբողջ տարածքը կամ Կողմի տարածքի մի մասը կամ երկու Կողմերի տարածքներն ամբողջությամբ կամ դրանց մասերը՝ ինչպես դա սահմանված է իրավասու մարմինների կողմից, որտեղ կոնկրետ վնասատուների կամ հիվանդությունների տարածվածության մակարդակը ցածր է, եւ որտեղ իրականացվում են վերահսկողության, հսկողության եւ ոչնչացման արդյունավետ միջոցառումներ.
- զ) Սանիտարական եւ բուսասանիտարական կանոնները սանիտարական եւ բուսասանիտարական այնպիսի միջոցներ են, ինչպիսիք են համընդհանուր կիրառության օրենքները, որոշումներն ու կարգադրությունները.
- է) Միջազգային այնպիսի կազմակերպությունների կողմից մշակված համապատասխան սահմանումները, ինչպիսիք են Կողեքս Ալիմենտարիոս հանձնաժողովը, Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպությունը (այսուհետ՝ ԿԱՀԿ) եւ Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիայի (այսուհետ՝ ԲՊՄԿ) շրջանակներում գործող միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպություններն են, կիրառվում են սույն գլխի իրականացման ընթացքում, համապատասխան փոփոխություններով:

2. Միջազգային ստանդարտների, ձեռնարկների եւ առաջարկությունների շարքին են դասվում՝

- ա) սննդամթերքի անվտանգության մասով՝ Կողեքս Ալիմենտարիոս հանձնաժողովի կողմից սահմանված ստանդարտները, ձեռնարկներն ու առաջարկությունները, որոնք վերաբերում են սննդամթերքի մեջ

հավելումներին, անասնաբուժական պատրաստուկներին և թունաքիմիկատների մնացորդներին, աղտոտող նյութերին, վերլուծության և փորձանմուշներ վերցնելու մեթոդներին, ինչպես նաև հիգիենայի նորմերին վերաբերող կանոններն ու ձեռնարկները.

բ) կենդանիների առողջության և կենդանիներից փոխանցվող հիվանդությունների մասով՝ ԿԱՀԿ հովանու ներքո մշակված ստանդարտները, ձեռնարկներն ու առաջարկությունները.

գ) բույսերի առողջության մասով՝ ԲՊՄԿ հովանու ներքո՝ ԲՊՄԿ շրջանակներում գործող տարածաշրջանային կազմակերպությունների հետ համատեղ մշակված միջազգային ստանդարտները, ձեռնարկներն ու առաջարկությունները, և

դ) վերը նշված կազմակերպությունների կողմից չկարգավորվող հարցերի մասով՝ համապատասխան ստանդարտները, ձեռնարկներն ու առաջարկությունները, որոնք հրապարակվել են համապատասխան այլ միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք մասնակցության համար բաց են բոլոր Կողմերի համար:

3. Ռիսկի գնահատումը վնասատուի կամ հիվանդության՝ ներմուծող Կողմի տարածք ներթափանցման, արմատավորման կամ տարածման հավանականության գնահատումն է սանիտարական կամ բուսասանիտարական այն միջոցներին համապատասխան, որոնք կարող էին կիրառվել, և դրա հետ կապված հնարավոր կենսաբանական և տնտեսական հետեանքների գնահատումը, կամ մարդկանց կամ կենդանիների առողջության վրա բացասական այն ազդեցություն ունենալու հնարավորության գնահատումը, որն առաջանում է սննդամթերքում, ըմպելիքներում կամ կերերում հավելումների, աղտոտող նյութերի, տոքսինների կամ ախտածին օրգանիզմների առկայության հետեանքով:

4. Սանիտարական կամ բուսասանիտարական պաշտպանության պատշաճ մակարդակը պաշտպանության այն մակարդակն է, որը համարվում է պատշաճ այն Կողմի կողմից, որը ձեռնարկում է սանիտարական կամ բուսասանիտարական միջոցն իր տարածքի սահմաններում մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար: Այլ դեպքերում Կողմերն այս հայեցակարգն անվանում են «ռիսկի թույլատրելի մակարդակ»:

Հոդված 5.3

Գործողության ոլորտը

Սույն գլխի կիրառությունը տարածվում է Կողմերի սանիտարական եւ բուսասանիտարական այն միջոցների վրա, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում թվարկված արտադրանքի մասով Կողմերի միջեւ առետրի վրա:

Հոդված 5.4

Ընդհանուր դրույթներ

1. Կողմերն իրավունք ունեն ձեռնարկելու սանիտարական եւ բուսասանիտարական միջոցներ, որոնք անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար՝ պայմանով, որ այդպիսի միջոցները չեն հակասում սույն գլխի դրույթներին:

2. Կողմերն ապահովում են, որ՝

ա) ցանկացած սանիտարական կամ բուսասանիտարական միջոց կիրառվի միայն այնքանով, որքանով անհրաժեշտ է մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար, եւ հիմնված

լինի գիտական սկզբունքների վրա, եւ ուժի մեջ չմնա առանց բավարար գիտական հիմնավորման՝ հաշվի առնելով համապատասխան գիտական տվյալների հասանելիությունը եւ տարածաշրջանային պայմանները.

- բ) ցանկացած սանիտարական կամ բուսասանիտարական միջոց հիմնված լինի, հանգամանքերին համապատասխան, մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության համար ռիսկերի գնահատման վրա՝ հաշվի առնելով համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից մշակված՝ ռիսկերի գնահատման մեթոդները.
- գ) համապատասխան գիտական հիմնավորումը բավարար չլինելու դեպքում, համապատասխան Կողմերը կարող են ժամանակավորապես ձեռնարկել սանիտարական կամ բուսասանիտարական արտակարգ միջոցներ՝ հիմք ընդունելով առկա պատշաճ տեղեկությունները՝ ներառյալ համապատասխան միջազգային կազմակերպություններից ստացված տեղեկությունները, ինչպես նաեւ այլ Կողմերի կողմից կիրառվող սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների մասին տեղեկությունները: Կողմերն այդպիսի հանգամանքներում պետք է ձգտեն ստանալ ռիսկերի ավելի օբյեկտիվ գնահատման համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ եւ, համապատասխանաբար, վերանայեն սանիտարական կամ բուսասանիտարական միջոցը ողջամիտ ժամանակահատվածում.
- դ) իրենց սանիտարական եւ բուսասանիտարական միջոցները չճանայեն որպես կամայական կամ չարդարացված խտրականության միջոց Կողմերի միջեւ, եթե դրանք գտնվում են միեւնույն կամ նմանատիպ պայմաններում, այդ թվում՝ իր սեփական տարածքի եւ մյուս Կողմի տարածքի միջեւ:

3. Սույն գլխում ոչինչ չի ազդում 4-րդ գլխին (Առեսարում տեխնիկական խոչընդոտներ) համապատասխան Կողմերի իրավունքների վրա՝ սույն գլխի գործողության ոլորտից դուրս միջոցների մասով:

Հոդված 5.5

Համարժեքությունը

1. Ներմուծող Կողմը ճանաչում է արտահանող Կողմի սանիտարական կամ բուսասանիտարական միջոցները որպես համարժեք, նույնիսկ եթե այդ միջոցները տարբերվում են իր սեփական միջոցներից կամ այն միջոցներից, որոնք օգտագործում են նույն արտադրանքի առեստուրն իրականացնող երրորդ երկրները, եթե արտահանող Կողմը օբյեկտիվ կերպով ցույց է տալիս ներմուծող Կողմին, որ իր միջոցները հասնում են ներմուծող Կողմի սանիտարական կամ բուսասանիտարական պաշտպանության համապատասխան մակարդակին: Այդ նպատակով ներմուծող Կողմին հարցման դեպքում տրամադրվում է ողջամիտ հասանելիություն՝ տեսչական ստուգման, փորձարկումների եւ այլ համապատասխան ընթացակարգերի իրականացման համար:

2. Հարցման դեպքում Կողմերն անցկացնում են խորհրդակցություններ՝ կոնկրետ սանիտարական կամ բուսասանիտարական միջոցների համարժեքությունը ճանաչելու վերաբերյալ երկկողմ համաձայնության հասնելու նպատակով:

Հոդված 5.6

Թափանցիկությունը

1. Կողմերն ընդունում են թափանցիկության կարեւորությունը սանիտարական եւ բուսասանիտարական միջոցները կիրառելիս, այդ թվում, բայց

չսահմանափակվելով, իրենց սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների մասին տեղեկությունների՝ ժամանակին փոխանակելու միջոցով:

2. Կողմերն ապահովում են, որ ընդունված սանիտարական եւ բուսասանիտարական կանոնները հրապարակված լինեն Կողմերի իրավասու մարմինների կայքէջերում այնպես, որ շահագրգիռ կողմերը հնարավորություն ունենան դրանց ծանոթանալու:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է կապի ապահովման մեկական կենտրոնի առկայությունը ԵԱՏՄ յուրաքանչյուր անդամ պետությունում, Եվրասիական տնտեսական հանձնաժողովում եւ Իրանի Իսլամական Հանրապետությունում, որը պատասխանատու է շահագրգիռ Կողմերի բոլոր ողջամիտ հարցերին պատասխաններ տրամադրելու, ինչպես նաեւ հետեցյալի վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր տրամադրելու համար՝

- ա) իր տարածքի սահմաններում ընդունված կամ մշակված սանիտարական կամ բուսասանիտարական ցանկացած կանոն.
- բ) իր տարածքի սահմաններում գործող հսկողության եւ տեսչական ստուգման ցանկացած ընթացակարգ, արտադրության կամ կարանտինի կանոն, թունաքիմիկատների եւ սննդային հավելումների թույլատրելի մակարդակի հաստատման ընթացակարգ.
- գ) ռիսկի գնահատման ընթացակարգեր, այդ ժամանակ հաշվի առնվող գործոններ, ինչպես նաեւ սանիտարական կամ բուսասանիտարական պաշտպանության պատշաճ մակարդակի որոշում.
- դ) Կողմի կամ իր տարածքում գտնվող համապատասխան մարմինների անդամակցություն եւ մասնակցություն միջազգային ու տարածաշրջանային սանիտարական եւ բուսասանիտարական կազմակերպություններում եւ համակարգերում, ինչպես նաեւ երկկողմ եւ

բազմակողմ համաձայնագրերում եւ պայմանավորվածություններում՝ սույն Համաձայնագրի եւ այդպիսի համաձայնագրերի ու պայմանավորվածությունների տեքստերի գործողության ոլորտի շրջանակներում:

4. Կողմերն ապահովում են, որ շահագրգիռ Կողմի կողմից փաստաթղթերի տեքստերը պահանջելու դեպքում դրանք տրամադրվեն նույն գնով (եթե դրանք տրամադրվում են հատուցելի հիմքով), որով տրամադրվում են տվյալ Կողմի անձանց համար²⁷ առանց առաքման արժեքը հաշվի առնելու:

5. Եթե միջազգային ստանդարտները, ձեռնարկները կամ առաջարկությունները բացակայում են, կամ մշակվող սանիտարական կամ բուսասանիտարական միջոցի բովանդակությունը տարբերվում է միջազգային ստանդարտի, ձեռնարկի կամ առաջարկության բովանդակությունից, եւ եթե այդ միջոցը կարող է զգալի ազդեցություն ունենալ մյուս Կողմի կամ Կողմերի առեստրի վրա, ապա Կողմը՝

- ա) կապի ապահովման կենտրոնների միջոցով մյուս Կողմին ծանուցում է ուղարկում այդպիսի միջոցի մասին.
- բ) հարցման դեպքում մյուս Կողմին տրամադրում է տեղեկություններ կամ մշակվող փաստաթղթի տեքստերը եւ, հնարավորության դեպքում, նշում է այն մասերը, որոնք էապես տարբերվում են միջազգային ստանդարտներից, ձեռնարկներից կամ առաջարկություններից.
- գ) մյուս Կողմին առանց խտրականության տրամադրում է ողջամիտ ժամանակ՝ գրավոր դիտողություններ նախապատրաստելու համար,

²⁷ Առանձին մաքսային տարածքների մասով սույն Համաձայնագրում «անձինք» եզրույթը օգտագործելիս պետք է հասկանալ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք մշտապես բնակվում են կամ ունեն իրական ու գործող արդյունաբերական կամ առեստրային ձեռնարկություն այդ մաքսային տարածքում:

հարցման դեպքում քննարկում է այդ դիտողությունները եւ հաշվի է առնում մեկնաբանություններն ու քննարկումների արդյունքները:

6. Բացառությամբ արտակարգ հանգամանքների՝ Կողմերը տրամադրում են ողջամիտ ժամանակահատված՝ սանիտարական կամ բուսասանիտարական միջոցի հրապարակման եւ դրա ուժի մեջ մտնելու միջեւ, որպեսզի արտահանող Կողմի արտադրողները կարողանան հարմարվել ներմուծող Կողմի պահանջներին:

7. Սակայն այն դեպքերում, երբ Կողմը բախվում է կամ կարող է բախվել առողջության պաշտպանության հետ կապված անհետաձգելի խնդիրների, այդ Կողմը, իր հայեցողությամբ, կարող է չկատարել սույն հոդվածի 6-րդ կետում թվարկված ընթացակարգերը՝ պայմանով, որ այդ Կողմը՝

ա) կապի ապահովման կենտրոնների միջոցով անմիջապես ծանուցում է մյուս Կողմին կոնկրետ միջոցի եւ այն արտադրանքի մասին, որի նկատմամբ կիրառվում է այդ միջոցը՝ ծանուցման մեջ հակիրճ նշելով միջոցի կիրառման նպատակները եւ պատճառները՝ ներառյալ անհետաձգելի խնդրի (խնդիրների) բնույթը.

բ) ըստ հարցման տրամադրում է կանոնի կամ նորմի պատճենները մյուս Կողմերին.

գ) մյուս Կողմերին թույլատրում է ուղարկել գրավոր մեկնաբանություններ, ըստ հարցման քննարկում է այդ մեկնաբանությունները եւ հաշվի առնում քննարկումների արդյունքները:

8. Կողմերը միմյանց տրամադրում են տեղեկություններ գործող կամ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրվա ընթացքում ուժի մեջ մտնող սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների մասին:

9. Կողմերը ձգտում են իրականացնել տեղեկությունների փոխանակումն անգլերենով:

10. Հիմնական օրենքները եւ նորմատիվ ակտերը կամ դրանց հակիրճ բովանդակությունն ըստ հարցման տրամադրվում են անգլերենով:

Հոդված 5.7

Տարածաշրջանային պայմաններին հարմարեցումը

1. Կողմերն ընդունում են տարածաշրջանային պայմաններին հարմարեցման հայեցակարգը՝ ներառյալ վնասատուներից կամ հիվանդություններից զերծ գոտիները, վնասատուների կամ հիվանդությունների աննշան տարածմամբ գոտիները՝ որպես առեստրի դյուրացման կարեւոր միջոց:
2. Այդպիսի գոտիները որոշելիս Կողմերը դիտարկում են այնպիսի գործոններ, ինչպիսիք Կողմերից ստացվող տեղեկություններն են, որոնք հաստատում են վնասատուներից կամ հիվանդություններից զերծ գոտիների, ինչպես նաեւ վնասատուների կամ հիվանդությունների աննշան տարածմամբ գոտիների կարգավիճակը, աուդիտի արդյունքները, տեսչական հսկողության արդյունքները, ԿԱՀԿ-ի եւ ԲՊՄԿ-ի կողմից տրամադրված տեղեկությունները եւ այլ գործոններ:
3. Արտահանող այն Կողմը, որը պնդում է, որ իր տարածքում գտնվող գոտիները վնասատուներից կամ հիվանդություններից զերծ գոտիներ են կամ վնասատուների կամ հիվանդությունների աննշան տարածմամբ գոտիներ, տրամադրում է այդպիսի պնդման անհրաժեշտ հաստատում՝ օբյեկտիվ կերպով ցույց տալու համար ներմուծող Կողմին, որ այդպիսի գոտիներն իսկապես, համապատասխանաբար, վնասատուներից կամ հիվանդություններից զերծ գոտիներ են կամ վնասատուների կամ հիվանդությունների աննշան տարածմամբ գոտիներ եւ, ամենայն հավանականությամբ, պահպանելու են այդ կարգավիճակը: Այդ նպատակով ներմուծող անդամին հարցման դեպքում տրամադրվում է ողջամիտ հասանելիություն տեսչական ստուգում, փորձարկումներ եւ այլ համապատասխան ընթացակարգեր անցկացնելու համար:

Հոդված 5.8

Աուդիտը եւ տեսչական ստուգումները

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է անցկացնել աուդիտ եւ (կամ) տեսչական ստուգում՝ արտադրանքի (ապրանքների) անվտանգությունն ապահովելու նպատակով:
2. Կողմերը համաձայնում են ընդլայնել հետագա համագործակցությունն աուդիտի եւ տեսչական ստուգման ոլորտում:
3. Աուդիտ եւ (կամ) տեսչական ստուգում անցկացնելիս յուրաքանչյուր Կողմ հաշվի է առնում համապատասխան միջազգային ստանդարտները եւ առաջարկությունները:
4. Աուդիտ կամ տեսչական ստուգում անցկացնող Կողմը ստուգվող Կողմին հնարավորություն է ընձեռում մեկնաբանելու աուդիտի եւ (կամ) տեսչական ստուգման արդյունքները:
5. Աուդիտ կամ տեսչական ստուգում անցկացնող Կողմի կրած ծախսերը հոգում է աուդիտ կամ տեսչական ստուգում անցկացնող Կողմը, եթե Կողմերն այլ համաձայնության չեն եկել:

Հոդված 5.9

Անվտանգությունը հաստատող փաստաթղթերը

1. Ներմուծող Կողմն ապահովում է, որ այն փաստաթղթերի նկատմամբ պահանջները, որոնք հաստատում են այն արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը, որի առեստուրն իրականացվում է Կողմերի միջեւ, կիրառվեն միայն մարդկանց, կենդանիների կամ բույսերի առողջության կամ կյանքի պաշտպանության համար անհրաժեշտ սահմաններում:

2. Արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերը մշակելիս Կողմերը հաշվի են առնում համապատասխան միջազգային ստանդարտները եւ առաջարկությունները՝ ելնելով հանգամանքներից:
3. Կողմերը կարող են պայմանավորվել այն որոշակի արտադրանքի (ապրանքների) կամ արտադրանքի (ապրանքների) խմբերի անվտանգությունը հաստատելու համար երկկողմ փաստաթղթերի մշակման մասին, որոնց առեստուրն իրականացվում է Կողմերի միջեւ:
4. Առեստուրի դյուրացման նպատակով Կողմերը նպաստում են էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառմանը՝ արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի մասով:

Հոդված 5.10

Ժամանակավոր արտակարգ միջոցները

1. Եթե Կողմը, սույն Համաձայնագրի 5.4 հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետին համապատասխան, ձեռնարկում է մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի եւ առողջության պաշտպանության համար անհրաժեշտ ժամանակավոր արտակարգ միջոցներ, ապա այդ Կողմը հնարավորինս կարճ ժամկետներում տեղեկացնում է մյուս Կողմին այդպիսի միջոցների մասին: Արտակարգ միջոցներ ձեռնարկած Կողմը հաշվի է առնում մյուս Կողմի կողմից տրամադրված համապատասխան տեղեկությունները:
2. Ցանկացած Կողմի հարցմամբ հնարավորինս կարճ ժամկետներում համապատասխան իրավասու մարմինների հետ անցկացվում են խորհրդակցություններ արտակարգ միջոցների հետ կապված հարցերի շուրջ, եթե Կողմերն այլ համաձայնության չեն եկել:

Հոդված 5.11

Կապի ապահովման կենտրոնները եւ տեղեկությունների փոխանակումը

1. Կողմերը միմյանց տեղեկացնում են սույն գլխին համապատասխան տեղեկություններ հաղորդելու համար նախատեսված կապի ապահովման կենտրոնների, ինչպես նաեւ սույն գլխին առնչվող հարցերի համար պատասխանատու լիազորված իրավասու մարմինների եւ դրանց միջեւ պարտավորությունների բաշխման մասին:
2. Կողմերը միմյանց տեղեկացնում են կապի ապահովման կենտրոնների հետ կապված ցանկացած փոփոխության եւ իրենց իրավասու մարմինների կառուցվածքի կամ իրավասության հետ կապված ցանկացած էական փոփոխության մասին:
3. Կողմերն իրենց կապի ապահովման կենտրոնների միջոցով միմյանց ժամանակին ուղարկում են գրավոր ծանուցում հետեւյալի վերաբերյալ՝
 - ա) ցանկացած էական հարց՝ կապված սննդամթերքի անվտանգության հետ, կամ փոփոխություն՝ կապված կենդանիների կամ բույսերի առողջության, իրենց տարածքում հիվանդացության վիճակի կամ վնասատուների տարածման հետ, որոնք ազդեցություն են գործում Կողմերի միջեւ առետրի վրա. եւ
 - բ) օրենսդրության մեջ կամ սանիտարական կամ բուսասանիտարական միջոցներում կատարված ցանկացած փոփոխություն:
4. Կողմերը կապի ապահովման կենտրոնների միջոցով միմյանց տեղեկացնում են սանիտարական եւ բուսասանիտարական միջոցները չպահպանելու պարբերական կամ էական դեպքերի մասին, ինչպես նաեւ փոխանակում են այդպիսի չպահպանումը հաստատող համապատասխան փաստաթղթեր:

Հոդված 5.12

Համագործակցությունը

1. Կողերը համաձայնում են համագործակցել՝ սույն գլխի իրականացումը դյուրացնելու նպատակով:
2. Կողմերն ուսումնասիրում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների հետ կապված հարցերի շուրջ համագործակցության, փոխգործակցության եւ տեղեկությունների փոխանակման ընդլայնման հնարավորությունները՝ սույն գլխի դրույթներին համապատասխան: Այդպիսի հնարավորություններ կարող են համարվել առետրի դյուրացմանն ուղղված նախաձեռնություններն ու տեխնիկական աջակցությունը:
3. Սույն գլխի շրջանակներում համագործակցությունը խթանելու նպատակով Կողմերը կարող են ժամանակավոր պայմանավորվածություններ ձեռք բերել սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների հետ կապված հարցերի շուրջ:

Հոդված 5.13

Խորհրդակցությունները

1. Եթե Կողմը համարում է, որ սանիտարական կամ բուսասանիտարական միջոցն ազդում է մյուս Կողմի հետ իր առետրի վրա, ապա այն կարող է տվյալ խնդրի լուծման նպատակով խորհրդակցություններ անցկացնելու մասին հարցում ներկայացնել համապատասխան կապի ապահովման կենտրոնների միջոցով:
2. Կողմը, մյուս Կողմի հարցմամբ, դիտարկում է տվյալ գլխի համատեքստում խորհրդակցություններ անցկացնելու հնարավորությունը՝ սույն գլխի մասով առաջացող հարցերը լուծելու նպատակով:

3. Եթե Կողմերից որեւէ մեկը համարում է, որ այդպիսի խնդիրը չի կարող լուծվել խորհրդակցությունների միջոցով՝ սույն հոդվածին համապատասխան, ապա այդ Կողմն իրավունք ունի դիմելու՝ խնդիրը սույն Համաձայնագրի 8-րդ գլխով (Վեճերի կարգավորումը) նախատեսված վեճերի կարգավորման մեխանիզմի միջոցով լուծելու համար:

ԳԼՈՒԽ 6.

ԾԱԳՈՒՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 6.1

Գործողության ոլորտը

Սույն գլխով նախատեսված՝ ծագումը որոշելու կանոնները կիրառվում են սույն Համաձայնագրին համապատասխան սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու նպատակներով:

Հոդված 6.2

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

- ա) **«ակվակուլտուրա»** նշանակում է ջրային օրգանիզմների, այդ թվում՝ ձկան, կակղամորթների, խեցգետնանմանների, ջրային այլ անողնաշարավորների եւ ջրային բույսերի աճեցում այնպիսի հումքից, ինչպիսիք են ձուն, մանրաձկնիկը, մատղաշ ձկները եւ թրթուրները, արտադրության ծավալների ավելացման նպատակով ազդեցություն գործելով զարգացման եւ աճի գործընթացների վրա, օրինակ՝ ձկների քանակի պարբերական ավելացման, կերակրման կամ գիշատիչներից պաշտպանության միջոցով.

- բ) **«լիազորված մարմին»** նշանակում է իրավասու մարմին, որը Կողմի կողմից լիազորված է սույն Համաձայնագրի համաձայն ծագման սերտիֆիկատներ տրամադրելու համար.
- գ) **«արժեքը CIF մատակարարման պայմաններով»** նշանակում է ապրանքների արժեքը ներմուծման ժամանակ, որը ներառում է փոխադրման եւ ապահովագրության արժեքը մինչեւ նավահանգիստ կամ ներմուծման երկրի ներմուծման վայր՝ Առետրային եզրույթների մեկնաբանման գործող միջազգային կանոններին («Ինկոթերմս») համապատասխան՝ բացառությամբ ներքին հարկերի, որոնք կարող էին փոխհատուցվել տվյալ ապրանքների արտահանման ժամանակ.
- դ) **«խմբաքանակ»** նշանակում է ապրանքներ, որոնք ուղարկվում են միաժամանակ մեկ կամ մի քանի տրանսպորտային փաստաթղթերով արտահանողից բեռն ստացողին, ինչպես նաեւ ապրանքներ, որոնք առաքվում են մեկ փոստային բեռնագրով կամ որպես ուղեբեռ տեղափոխվում են սահմանը հատող անձի կողմից.
- ե) **«արտահանող»** նշանակում է անձ, որը գրանցված է այն Կողմի տարածքում, որտեղից տվյալ անձի կողմից արտահանվում են ապրանքները.
- զ) **«արժեքը EXW մատակարարման պայմաններով»** նշանակում է ապրանքների արժեք, որը ենթակա է վճարման արտադրողին այն Կողմում, որի տարածքում կատարվել է դրանց վերջին մշակումը կամ վերամշակումը, Առետրային եզրույթների մեկնաբանման գործող միջազգային կանոններին («Ինկոթերմս») համապատասխան՝ բացառությամբ ներքին հարկերի, որոնք կարող էին փոխհատուցվել տվյալ ապրանքների արտահանման ժամանակ.
- է) **«ներմուծող»** նշանակում է անձ, որը գրանցված է այն Կողմի տարածքում, ուր տվյալ անձի կողմից ներմուծվում են ապրանքները.

- ը) **«նյութ»** նշանակում է ցանկացած նյութ կամ նյութեղեն՝ ներառյալ ապրանքի արտադրության մեջ օգտագործվող կամ կիրառվող բաղադրիչը, հումքը, բաղադրամասը կամ մասը, որոնք ֆիզիկապես ներառված են ապրանքի մեջ կամ ենթարկվում են մշակման այլ ապրանքի արտադրության մեջ.
- թ) **«ծագում չունեցող ապրանքներ»** կամ **«ծագում չունեցող նյութեր»** նշանակում է ապրանքներ կամ նյութեր, որոնք չեն համապատասխանում սույն գլխով սահմանված ծագման չափանիշներին.
- ժ) **«ծագում ունեցող ապրանքներ»** կամ **«ծագում ունեցող նյութեր»** նշանակում է ապրանքներ կամ նյութեր, որոնք համապատասխանում են սույն գլխով սահմանված ծագման չափանիշներին.
- ժա) **«արտադրող»** նշանակում է անձ, որն իրականացնում է ապրանքների արտադրությունը Կողմի տարածքում.
- ժբ) **«արտադրություն»** նշանակում է ապրանքների ստացման եղանակներ՝ ներառյալ աճեցնելը, արդյունահանելը, բերքահավաքը, պահելը, բուծելը, լուծամզման միջոցով ստանալը, քաղելը, բռնելը, ձկնորսությունը, որսորդությունը, վերամշակելը, մշակելը կամ հավաքելը.
- ժգ) **«ստուգող մարմին»** նշանակում է իրավասու պետական մարմին, որը Կողմի կողմից լիազորված է ստուգման ընթացակարգեր իրականացնելու համար:

Հոդված 6.3

Ծագման չափորոշիչները

Սույն գլխի նպատակներով ապրանքները համարվում են Կողմի ծագում ունեցող, եթե դրանք՝

- ա) ամբողջությամբ ստացված կամ արտադրված են այդ Կողմում՝ սույն Համաձայնագրի 6.4 հոդվածին համապատասխան, կամ
- բ) ամբողջությամբ արտադրված են Կողմերից մեկում կամ երկու Կողմերում՝ բացառապես տվյալ Կողմերի ծագում ունեցող նյութերից, կամ
- գ) արտադրված են որեւէ Կողմում՝ ծագում չունեցող նյութերի օգտագործմամբ՝ պայմանով, որ ավելացված արժեքի մասնաբաժինը կազմում է EXW մատակարարման պայմաններով ապրանքի արժեքի առնվազն 50 տոկոսը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի ապրանքների համար սահմանված են ծագման հատուկ չափորոշիչներ՝ սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածին համապատասխան:

Հոդված 6.4

Ամբողջությամբ ստացված կամ արտադրված ապրանքները

Սույն Համաձայնագրի 6.3 հոդվածի նպատակներով Կողմում ամբողջությամբ ստացված կամ արտադրված են համարվում հետևյալ ապրանքները՝

- ա) բույսերը եւ բուսական ծագման արտադրանքը՝ ներառյալ մրգերը, հատապտուղները, ծաղիկները, բանջարեղենը, ծառերը, ջրիմուռները, սնկերը եւ կենդանի բույսերը, որոնք աճեցված կամ հավաքված են Կողմի տարածքում.
- բ) կենդանի կենդանիները, որոնք ծնվել եւ աճեցվել են Կողմի տարածքում.
- գ) արտադրանքը, որն ստացվել է կենդանի կենդանիներից Կողմի տարածքում.

- դ) արտադրանքը, որն ստացվել է Կողմի տարածքում հավաքման, որսորդության, ձկնորսության, արդյունագործության, աճեցման, բուծման, ակվակուլտուրայի արդյունքում.
- ե) հանքային արտադրանքը եւ այլ օգտակար հանածոներ, որոնք Կողմի տարածքում ստացված կամ արդյունահանված են օդից, հողից, ջրից կամ ծովի հատակից եւ դրա ընդերքից.
- զ) ծովային ձկնորսական արդյունագործական արտադրանքը եւ Կողմում գրանցված կամ կցագրված եւ դրա դրոշի ներքո նավարկող նավի կողմից միջազգային իրավունքի նորմերին համապատասխան բաց ծովում ստացված ծովային արդյունագործական այլ արտադրանք.
- է) արտադրանքը, որն ստացվել է բացառապես սույն հոդվածի «զ» կետում նշված արտադրանքից, Կողմում գրանցված կամ կցագրված եւ դրա դրոշի ներքո նավարկող վերամշակող նավի վրա.
- ը) թափոնները եւ ջարդոնը, որոնք ստացվել են Կողմի տարածքում արտադրման եւ սպառման արդյունքում՝ պայմանով, որ այդպիսի արտադրանքը պիտանի է միայն հումքի վերամշակման համար.
- թ) օգտագործված արտադրատեսակները, որոնք հավաքվել են Կողմի տարածքում՝ պայմանով, որ այդպիսի արտադրանքը պիտանի է միայն հումքի վերամշակման համար.
- ժ) արտադրանքը, որն ստացվել է բաց տիեզերքում՝ Կողմում գրանցված տիեզերանավերի վրա.
- ժա) ապրանքները, որոնք արտադրվել կամ ստացվել են Կողմի տարածքում՝ բացառապես սույն հոդվածի «ա»-ից «է» կետերում նշված ապրանքներից:

Հոդված 6.5

Ավելացված արժեքի մասնաբաժինը

Սույն գլխի եւ սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված՝ առանձին արտադրատեսակներին առնչվող կանոնների նպատակներով ավելացված արժեքի մասնաբաժինը (այսուհետ՝ ԱԱՄ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Արժեքը EXW մատակարարման պայմաններով} - \text{Ծագում չունեցող նյութերի արժեքը}}{\text{Արժեքը EXW մատակարարման պայմաններով}} \times 100\%$$

որտեղ՝ ծագում չունեցող նյութերի արժեքը՝

- ա) CIF մատակարարման պայմաններով արժեքն է՝ նյութերը Կողմի տարածք ներմուծելու պահին, կամ
- բ) ամենավաղ սահմանված գինն է, որը վճարված է կամ ենթակա է վճարման ծագում չունեցող ապրանքների համար այն Կողմի տարածքում, որտեղ կատարվում է ապրանքի մշակումը կամ վերամշակումը:

Եթե արտադրողը ձեռք է բերում ծագում չունեցող նյութեր այն Կողմի տարածքում, որտեղ իրականացվելու է դրանց հետագա վերամշակումը, ապա այդպիսի նյութերի արժեքի մեջ չեն ներառվում փոխադրման, ապահովագրության, փաթեթավորման եւ այլ ծախսեր, որոնք կապված են մատակարարի կողմից այդ նյութերն արտադրության վայր փոխադրելու հետ:

Հոդված 6.6

Ոչ բավարար մշակումը կամ վերամշակումը

1. Հետեւյալ գործողությունները, որոնք իրականացվում են առանձին կամ միաժամանակ, համարվում են ոչ բավարար՝ սույն Համաձայնագրի 6.3 հոդվածի պահանջների կատարման համար՝

- ա) ապրանքի պահպանման կամ տրանսպորտային փոխադրման ժամանակ դրա պահպանվածության ապահովմանն ուղղված գործողություններ.
- բ) սառեցում եւ ապասառեցում.
- գ) փաթեթավորում եւ վերափաթեթավորում.
- դ) փոշու, թթվուկի, յուղի, ներկի կամ այլ պատվածքների լվացում, մաքրում, հեռացում.
- ե) տեքստիլի արդուկում կամ մամլում.
- զ) ներկում, փայլեցում, լաքապատում, յուղով պատում (տոգորում).
- է) հացահատիկների եւ բրնձի թեփահանում, մասնակի կամ ամբողջական սպիտակեցում, հղկում ու ողորկում.
- ը) շաքարի գունավորման կամ կտոր շաքարի ստացման հետ կապված գործողություններ.
- թ) մրգերի, բանջարեղենի եւ ընկուզեղենի կեղեւահանում, կորիզների եւ կլեպի հեռացում.
- ժ) սրում, հղկում, աղում.
- ժա) կտրատում.
- ժբ) մաղում, ընտրում, տեսակավորում, դասակարգում.

ժգ) շների, բանկաների, սրվակների, պարկերի, արկղերի, տոսիերի մեջ լցնում, չափաճրարում, մակերեսին ամրացում եւ փաթեթավորման մյուս բոլոր գործողությունները.

ժդ) մականշվածքի, պիտակի, լոգոտիպի եւ նման այլ ապրանքային նշանների զետեղում կամ տպագրում արտադրանքի կամ դրա փաթեթվածքի վրա.

ժե) արտադրանքի (բաղադրամասերի) խառնում, ինչի արդյունքում ստացված արտադրանքն էապես չի տարբերվում ելակետային բաղադրամասերից.

ժզ) ապրանքի պարզ հավաքում կամ ապրանքի կազմատում մասերի.

ժէ) կենդանիների սպանդ, մսի տեսակավորում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի նպատակներով «պարզ» բառը բնութագրում է այն աշխատանքները, որոնց կատարման համար չեն պահանջվում հատուկ կարողություններ (հմտություններ), հատկապես այդպիսի աշխատանքների կատարման համար նախատեսված մեքենաներ, սարքեր կամ սարքավորումներ:

Հոդված 6.7

Հավաքական ծագման կանոններ

Չհակասելով սույն Համաձայնագրի 6.3 հոդվածին՝ մի Կողմի ծագում ունեցող ապրանքները կամ նյութերը, որոնք որպես նյութեր օգտագործվում են ապրանքի արտադրության մեջ մյուս Կողմում, համարվում են այն Կողմի ծագում ունեցող, որտեղ իրականացվել են վերջին գործողությունները՝ բացառությամբ սույն Համաձայնագրի 6.6 հոդվածի 1-ին կետում նշված գործողությունների: Այդպիսի նյութերի ծագումը հաստատվում է լիազորված մարմնի կողմից տրամադրված՝ ծագման սերտիֆիկատով (Ձեւ CT-3):

Հոդված 6.8

De Minimis (ոչ էական)

1. Այն ապրանքները, որոնք սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի համաձայն, սակագնային դասակարգման փոփոխության չեն ենթարկվում, այնուամենայնիվ, համարվում են ծագում ունեցող, եթե՝

ա) ծագում չունեցող բոլոր նյութերի արժեքը, որոնք օգտագործվում են ապրանքների արտադրության մեջ եւ չեն ենթարկվում սակագնային դասակարգման անհրաժեշտ փոփոխության, չի գերազանցում EXW մատակարարման պայմաններով ապրանքի արժեքի 5 տոկոսը, եւ այդպիսի նյութերն անհրաժեշտ են տվյալ ապրանքների արտադրության համար.

բ) ապրանքները բավարարում են սույն գլխի՝ դրանց նկատմամբ կիրառելի մյուս բոլոր պահանջները:

2. Սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված նյութերի արժեքը ներառվում է ծագում չունեցող նյութերի արժեքի մեջ՝ ԱԱՄ-ի հաշվարկման նպատակով:

Հոդված 6.9

Անմիջական փոխադրումը

1. Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմը, սույն գլխին համապատասխան, ծագում ունեցող ապրանքների համար տրամադրվում է՝ պայմանով, որ դրանք արտահանող Կողմի տարածքից անմիջապես փոխադրվեն ներմուծող Կողմի տարածք:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ ծագում ունեցող ապրանքները կարող են փոխադրվել երրորդ երկրների տարածքով՝ պայմանով, որ՝

- ա) երրորդ երկրների տարածքով տարանցումը հիմնավորված լինի աշխարհագրական պատճառներով կամ պայմանավորված լինի բացառապես փոխադրմանն առնչվող պահանջներով.
- բ) ապրանքներն առետրի կամ սպառման օբյեկտ չեն եղել.
- գ) ապրանքները չեն ենթարկվել որեւէ գործողության՝ բացառությամբ բեռնաթափման, փոխաբեռնման, պահման եւ այլ անհրաժեշտ գործողությունների, որոնք ուղղված են դրանց պահպանվածության ապահովմանը:

3. Հայտարարատուն ներմուծող Կողմի մաքսային մարմիններ ներկայացնում է սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջների կատարման համապատասխան փաստաթղթային ապացույցներ: Այդպիսի ապացույցները ներկայացվում են ներմուծող Կողմի մաքսային մարմիններ հետեւյալ փաստաթղթերի ներկայացման միջոցով՝

- ա) ապրանքները մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխելու ընթացքի վերաբերյալ տրանսպորտային փաստաթղթեր, որոնք պարունակում են հետեւյալ տեղեկությունները՝
 - i. ապրանքների հստակ նկարագրությունը.
 - ii. ապրանքների բեռնաթափման եւ փոխաբեռնման ամսաթվերը (եթե տրանսպորտային փաստաթղթերը չեն պարունակում տեղեկություններ ապրանքների բեռնաթափման եւ փոխաբեռնման ամսաթվերի մասին, ապա, ի լրումն դրանց, ներկայացվում են այդպիսի տեղեկություններ պարունակող այլ փաստաթղթեր), եւ

iii. կիրառելիության դեպքում,

- նավերի կամ օգտագործվող այլ տրանսպորտային միջոցների անվանումները.
- բեռնարկերի համարները.
- ապրանքները տարանցման երկրում պատշաճ վիճակում պահելու պայմանները.
- տարանցման երկրի մաքսային մարմինների նշումները.

բ) համապատասխան ապրանքների մասով կոմերցիոն հաշիվ-ապրանքագրերը:

4. Հայտարարատուն կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են սույն հոդվածի 2-րդ կետի պահանջների կատարումը:

5. Եթե հնարավոր չէ ներկայացնել տրանսպորտային փաստաթղթերը, ապա ներկայացվում են փաստաթղթեր, որոնք տրամադրված են այն երրորդ երկրների մաքսային մարմինների կողմից, որոնց տարածքով իրականացվել է տարանցումը, եւ որոնք պարունակում են սույն հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետում նշված բոլոր տեղեկությունները:

6. Եթե հայտարարատուն ներմուծող Կողմի մաքսային մարմիններ չի ներկայացնում անմիջական փոխադրման փաստը հաստատող փաստաթղթային ապացույցներ, ապա սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ չի տրամադրվում:

Հոդված 6.10

Մանրածախ առևտրի համար նախատեսված փաթեթավորման նյութերը

1. Փաթեթավորման նյութերը եւ տարաները, որոնցում ապրանքները փաթեթավորված են մանրածախ առևտրի նպատակով, ապրանքների հետ

դասակարգվելու դեպքում հաշվի չեն առնվում՝ որոշելու համար այն հարցը, թե արդյոք այդ ապրանքների արտադրության մեջ օգտագործված՝ ծագում չունեցող բոլոր նյութերը ենթարկվել են սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված սակագնային դասակարգման անհրաժեշտ փոփոխության:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ որոշելու համար, թե արդյոք ապրանքները բավարարում են ԱԱՄ-ի վերաբերյալ պահանջը, ապրանքների ԱԱՄ-ն հաշվարկելու նպատակով մանրաձախ առետրի համար օգտագործվող փաթեթվածքի արժեքը հաշվի է առնվում ապրանքների արտադրության մեջ օգտագործվող ծագում ունեցող կամ ծագում չունեցող նյութերի արժեքը հաշվարկելիս:

Հոդված 6.11

Տրանսպորտային փոխադրման համար նախատեսված փաթեթավորման նյութերը

Փաթեթավորման նյութերը եւ բեռնարկղերը, որոնք նախատեսված են բացառապես ապրանքների տրանսպորտային փոխադրման համար, ապրանքների ծագումը որոշելիս հաշվի չեն առնվում:

Հոդված 6.12

Պարագաները, պահեստամասերը, գործիքները, հրահանգչական կամ տեղեկատվական նյութերը

1. Որոշելու համար, թե արդյոք ապրանքները համապատասխանում են սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածում նշված սակագնային դասակարգման պահանջների փոփոխությանը, պարագաները, պահեստամասերը, գործիքները,

հրահանգչական կամ տեղեկատվական նյութերը, որոնք սարքավորումների լրակազմի սովորական մաս են կազմում եւ մտնում են ապրանքի արժեքի մեջ՝ ըստ EXW մատակարարման պայմանների, կամ որոնց վերաբերյալ չեն ներկայացվել առանձին հաշիվ-ապրանքագրեր, դիտարկվում են որպես տվյալ ապրանքների մի մաս եւ ապրանքը որպես ծագում ունեցող որակելի վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի չեն առնվում:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ որոշելու համար, թե արդյոք ապրանքները բավարարում են ԱԱՄ-ի վերաբերյալ պահանջը, ապրանքների ԱԱՄ-ն հաշվարկելու նպատակով պարագաների, պահեստամասերի, գործիքների, հրահանգչական կամ տեղեկատվական նյութերի արժեքը հաշվի է առնվում ապրանքների արտադրության մեջ օգտագործվող՝ ծագում ունեցող կամ ծագում չունեցող նյութերի արժեքը հաշվարկելիս:

3. Սույն հոդվածը կիրառվում է միայն հետեւյալ պայմանները կատարելու դեպքում՝

- ա) ապրանքների հետ ներկայացվող հարմարանքների, պարագաների, պահեստամասերի ու գործիքների, հրահանգչական կամ տեղեկատվական նյութերի համար ներկայացված չեն առանձին հաշիվ-ապրանքագրեր, եւ
- բ) ապրանքների հետ ներկայացվող պարագաների, պահեստամասերի, գործիքների, հրահանգչական կամ տեղեկատվական նյութերի քանակը եւ արժեքը սովորական են տվյալ ապրանքների համար:

Հոդված 6.13

Հավաքածուները

Այն ապրանքները, որոնք Ներդաշնակեցված համակարգի մեկնաբանության ընդհանուր կանոնների 3-րդ կանոնին համապատասխան դասակարգվում են

որպես հավաքածուներ, դիտարկվում են որպես ծագում ունեցող, եթե դրանց բաղադրամասեր հանդիսացող բոլոր ապրանքները ծագում ունեցող են: Այնուամենայնիվ, ծագում ունեցող եւ ծագում չունեցող ապրանքներից կազմված հավաքածուն ճանաչվում է ծագում ունեցող, եթե ծագում չունեցող ապրանքների արժեքը չի գերազանցում հավաքածուի արժեքի 15 տոկոսը՝ ըստ EXW մատակարարման պայմանների:

Հոդված 6.14

Անուղղակի նյութերը

Ապրանքների ծագումը որոշելիս հաշվի չի առնվում հետեւյալ անուղղակի նյութերի ծագումը, որոնք կարող են օգտագործվել արտադրության մեջ եւ չներառվել ապրանքի կազմում՝

- ա) վառելիք եւ էլեկտրական էներգիա.
- բ) գործիքներ, դրոշմահատոցներ եւ մամլակաղապարներ.
- գ) պահեստամասեր եւ նյութեր, որոնք օգտագործվում են սարքավորումների եւ շենքերի տեխնիկական սպասարկման ժամանակ.
- դ) քսանյութեր, հավելանյութեր եւ այլ նյութեր, որոնք օգտագործվում են արտադրության մեջ կամ սարքավորումների եւ շենքերի շահագործման համար.
- ե) ձեռնոցներ, ակնոցներ, կոշիկեղեն, հագուստ, անվտանգության սարքավորումներ.
- զ) սարքավորումներ, սարքվածքներ, որոնք օգտագործվում են ապրանքների փորձարկման կամ տեսչական ստուգման համար.

- է) կատալիզատորներ եւ լուծիչներ.
- ը) ցանկացած այլ ապրանք, որը տվյալ ապրանքի մաս չի կազմում, բայց որի օգտագործումն այդպիսի ապրանքի արտադրության մեջ կարող է ներկայացվել որպես արտադրական գործընթացի մաս:

ԲԱԺԻՆ II.

ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐ

Հոդված 6.15

Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման հայցումը

1. Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ ստանալու համար հայտարարատուն ներմուծող Կողմի մաքսային մարմին է ներկայացնում ծագման սերտիֆիկատ՝ սույն բաժնի պահանջներին համապատասխան:
2. Ներմուծող Կողմի մաքսային մարմիններ ներկայացված ծագման սերտիֆիկատը պետք է լինի բնօրինակ, վավեր, կազմված սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածով սահմանված ձեաչափին համապատասխան, ինչպես նաև լրացված սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան:
3. Արտահանող Կողմի լիազորված մարմինն ապահովում է ծագման սերտիֆիկատների համապատասխանությունը սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածով սահմանված՝ դրանց լրացման պահանջներին:
4. Ծագման սերտիֆիկատը վավերական է դրա տրամադրման օրվանից 12 ամիս ժամկետով եւ պետք է ներկայացվի ներմուծող Կողմի մաքսային մարմիններ այդ ժամանակահատվածի ընթացքում, սակայն ներմուծման մաքսային հայտարարագիր ներկայացնելուց ոչ ուշ՝ բացառությամբ սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքերի:
5. Եթե Կողմերը մշակում եւ կիրառում են սույն Համաձայնագրի 6.27 հոդվածում նշված Ծագման ստուգման էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ ԾՍԷՀ), ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինները, համապատասխան ներպետական

օրենքների եւ կարգավորումների համաձայն, կարող են չպահանջել ներկայացնել ծագման սերտիֆիկատի բնօրինակը թղթային կրիչով: Այդ դեպքում այդպիսի սերտիֆիկատի ամսաթիվը եւ համարը պետք է նշվեն մաքսային հայտարարագրում: Եթե ներմուծող Կողմի մաքսային մարմինն ունի հիմնավոր կասկածներ՝ կապված այն ապրանքների ծագման հետ, որոնց համար հայցվում է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը, եւ (կամ) կան անհամապատասխանություններ ԾՍԷՀ-ում պարունակվող տեղեկությունների հետ, ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինը կարող է պահանջել ներկայացնել ծագման սերտիֆիկատի բնօրինակը թղթային կրիչով:

6. Եթե ներմուծման պահին ներմուծողի մոտ առկա չէ ծագման սերտիֆիկատը, ապա ներմուծող Կողմը գանձում է մաքսատուրքերն առավել բարենպաստության ռեժիմի շրջանակներում նախատեսված դրույքաչափերով, կամ, կիրառելի լինելու դեպքում, պահանջում է տրամադրել այդպիսի տուրքերի վճարման ապահովում: Այդ դեպքում ներմուծողն իրավունք ունի հայցելու սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրում եւ ավելի վճարված ներմուծման մաքսատուրքերի կամ այդպիսի տուրքերի վճարման ապահովման վերադարձ՝ ներմուծող Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան մաքսային հայտարարագիրը գրանցելու պահից 12 ամսվա ընթացքում՝ սույն Համաձայնագրի 6.22 հոդվածի բոլոր պահանջները կատարելու պայմանով:

Հոդված 6.16

Հանգամանքներ, որոնց դեպքում ծագման սերտիֆիկատը ներկայացնել չի պահանջվում

Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ ստանալու համար ծագման սերտիֆիկատը ներկայացնել չի պահանջվում ծագում ունեցող այն ապրանքների

ներմուծման համար, որոնց մաքսային արժեքը չի գերազանցում 200 եվրոն կամ ներմուծող Կողմի արժույթով համարժեք գումարը՝ պայմանով, որ տվյալ ներմուծումը մեկ կամ մեկից ավելի խմբաքանակների մաս չէ, ինչը կարող է հիմնավորված կերպով դիտարկվել որպես ծագման սերտիֆիկատ ներկայացնելուց խուսափելու միջոց:

Հոդված 6.17

Ծագման սերտիֆիկատի տրամադրումը

1. Ապրանքներն արտադրողը կամ արտահանողը կամ նրանց լիազորված ներկայացուցիչը գրավոր կամ, կիրառելի լինելու դեպքում, կապի էլեկտրոնային միջոցներով դիմում է լիազորված մարմին՝ ծագման սերտիֆիկատը տրամադրելու համար:
2. Ծագման սերտիֆիկատը լիազորված մարմնի կողմից տրամադրվում է արտահանող Կողմի արտադրողին, արտահանողին կամ նրանց լիազորված ներկայացուցչին մինչև ապրանքների ներմուծումը կամ ապրանքների ներմուծման օրը բոլոր այն դեպքերում, երբ արտահանվող ապրանքները կարող են համարվել Կողմի ծագում ունեցող՝ սույն գլխի դրույթներին համապատասխան:
3. Ծագման սերտիֆիկատը տրամադրվում է ապրանքի մեկ խմբաքանակի համար:
4. Ծագման յուրաքանչյուր սերտիֆիկատ պետք է ունենա լիազորված մարմնի կողմից տրված եզակի գրանցման համար:
5. Եթե ծագման սերտիֆիկատում նշված բոլոր ապրանքները չեն կարող թվարկվել մեկ էջի վրա, ապա օգտագործվում են սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածով նախատեսված լրացուցիչ թերթեր:

6. Ծագման սերտիֆիկատը (Ձեւ CT-3) պետք է պարունակի մեկ բնօրինակ եւ երկու օրինակ:
7. Սերտիֆիկատի մեկ օրինակը պահվում է արտահանող Կողմի լիազորված մարմնի մոտ: Երկրորդ օրինակը մնում է արտահանողի մոտ:
8. Չհակասելով սույն Համաձայնագրի 6.15 հոդվածի 4-րդ կետին՝ բացառիկ դեպքերում, երբ ծագման սերտիֆիկատը (Ձեւ CT-3) չի տրամադրվել մինչեւ ապրանքի ներմուծումը կամ ապրանքի ներմուծման օրը, այն կարող է տրամադրվել հետադարձ ուժով՝ սերտիֆիկատում կատարելով «ՏՐԱՄԱԴՐՎԱԾ Է ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺՈՎ» (“ISSUED RETROACTIVELY”) նշումը:
9. Ծագման սերտիֆիկատի ներկայացված բնօրինակը պահվում է ներմուծող Կողմի մաքսային մարմինների մոտ՝ բացառությամբ համապատասխան ներպետական օրենքներով եւ կարգավորումներով նախատեսված դեպքերի:

Հոդված 6.18

Աննշան անհամապատասխանությունները

1. Եթե ապրանքների ծագումը կասկածներ չի առաջացնում, ապա ծագման սերտիֆիկատում պարունակվող տեղեկությունների եւ ներմուծող Կողմի մաքսային մարմիններ ներկայացված փաստաթղթերի միջեւ աննշան անհամապատասխանությունների հայտնաբերումն ինքնին հիմք չէ՝ ծագման սերտիֆիկատն անվավեր ճանաչելու համար, եթե դրանում նշված տեղեկությունները փաստացի համապատասխանում են ներկայացված ապրանքներին:
2. Եթե ծագման սերտիֆիկատում հայտագրված է մի քանի ապրանք, ապա ապրանքներից մեկի առնչությամբ առաջացած խնդրի կարգավորումը չպետք է

ազդեցություն ունենա ծագման այդպիսի սերտիֆիկատում նշված մյուս ապրանքների համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման վրա կամ հետաձգի դրա տրամադրումը:

Հոդված 6.19

Ծագման սերտիֆիկատի տրամադրման հատուկ դեպքերը

1. Ծագման սերտիֆիկատի գողության, կորստի կամ ոչնչացման դեպքում արտադրողը, արտահանողը կամ նրանց լիազորված ներկայացուցիչը կարող է ծագման սերտիֆիկատի՝ պաշտոնապես վավերացված կրկնօրինակի տրամադրման դիմում ներկայացնել լիազորված մարմին՝ նշելով այդպիսի դիմում ներկայացնելու պատճառները: Կրկնօրինակը պետք է կազմված լինի նախկինում տրամադրված ծագման սերտիֆիկատի եւ ուղեկցող փաստաթղթերի հիման վրա: Վավերացված կրկնօրինակը պետք է պարունակի «__ ԱՄՍԱԹՎՈՎ ԹԻՎ __ ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿ» (“DUPLICATE OF THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER_DATE_”) բառերը: Ծագման սերտիֆիկատի կրկնօրինակը վավերական է ծագման սերտիֆիկատի բնօրինակի տրամադրման օրվանից 12 ամսից ոչ ավելի ժամկետով:

2. Ծագման սերտիֆիկատի բնօրինակում տեղ գտած պատահական սխալների կամ բացթողումների դեպքում լիազորված մարմնի կողմից տրամադրվում է ծագման սերտիֆիկատի բնօրինակին փոխարինող ծագման սերտիֆիկատ: Այդ դեպքում ծագման սերտիֆիկատը պետք է պարունակի հետեյալ նշումը՝ «ՏՐԱՄԱԴՐՎԱԾ Է __ ԱՄՍԱԹՎՈՎ ԹԻՎ __ ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՓՈԽԱՐԵՆ» (“ISSUED IN SUBSTITUTION FOR THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER__DATE__”): Ծագման այդպիսի սերտիֆիկատը վավերական է ծագման սերտիֆիկատի բնօրինակի տրամադրման օրվանից 12 ամսից ոչ ավելի ժամկետով:

Հոդված 6.20

Ծագման սերտիֆիկատում կատարվող ուղղումները

Ծագման սերտիֆիկատում չի թույլատրվում կատարել ջնջումներ կամ վրայից ուղղումներ: Ցանկացած փոփոխություն կատարվում է սխալ տվյալների վրա գիծ քաշելու եւ ցանկացած պահանջվող լրացուցիչ տեղեկություն ավելացնելու միջոցով: Այդպիսի փոփոխությունը պետք է վավերացվի ծագման սերտիֆիկատը ստորագրելու համար լիազորված անձի կողմից եւ համապատասխան լիազորված մարմնի պաշտոնական կնիքով:

Հոդված 6.21

Փաստաթղթերը պահելուն ներկայացվող պահանջները

1. Ծագման սերտիֆիկատի տրամադրման դիմում ներկայացրած արտադրողը եւ (կամ) արտահանողը պետք է իրենց մոտ պահեն բոլոր փաստաթղթերը եւ լիազորված մարմին ներկայացված փաստաթղթերի պատճենները՝ ծագման սերտիֆիկատի տրամադրման օրվանից հետո ոչ պակաս, քան երեք տարի ժամկետով:
2. Այն ներմուծողը, որին տրամադրվել է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ, պետք է իր մոտ պահի ծագման սերտիֆիկատի պատճենը, որի հիման վրա տրամադրվել է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմը՝ այդպիսի ռեժիմի տրամադրման օրվանից հետո ոչ պակաս, քան երեք տարի ժամկետով:
3. Ծագման սերտիֆիկատի տրամադրման դիմումը եւ դրան կից բոլոր փաստաթղթերը լիազորված մարմնի կողմից պահվում են ծագման այդպիսի սերտիֆիկատի տրամադրման օրվանից հետո ոչ պակաս, քան երեք տարի ժամկետով:

ԲԱԺԻՆ III.

ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՈՒՄՆԵՐԻ ՌԵԺԻՄԸ

Հոդված 6.22

Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը

1. Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմը սույն Համաձայնագրի շրջանակներում կիրառվում է սույն գլխի պահանջներին համապատասխան ծագում ունեցող ապրանքների նկատմամբ:
2. Ներմուծող Կողմի մաքսային մարմինները արտահանող Կողմի ծագում ունեցող ապրանքների համար տրամադրում են սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ՝ հետեւյալ պայմանները կատարելու դեպքում՝
 - ա) ներմուծվող ապրանքները համապատասխանում են սույն Համաձայնագրի 6.3 հոդվածում նշված ծագման չափանիշներին.
 - բ) հայտարարատուն ապահովում է սույն գլխի պահանջների կատարումը.
 - գ) ներմուծող Կողմի մաքսային մարմիններ է ներկայացվել գործող եւ սույն գլխի «Ծագման փաստաթղթային ապացույցներ» վերնագրված II բաժնի պահանջներին համապատասխան լրացված ապրանքի ծագման սերտիֆիկատի բնօրինակը: Եթե Կողմերը կիրառում են սույն Համաձայնագրի 6.15 հոդվածի 5-րդ կետով նախատեսված ԾՍԷՀ-ն, ապա ապրանքի ծագման սերտիֆիկատի բնօրինակը կարող է չներկայացվել:
3. Չնայած սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներին, եթե ներմուծող Կողմի մաքսային մարմիններն ունեն հիմնավոր կասկածներ՝ կապված այն ապրանքի ծագման հետ, որի համար հայցվում է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի

տրամադրում, եւ (կամ) կապված ապրանքի ծագման սերտիֆիկատի իսկության հետ, ապա նշված մաքսային մարմինները կարող են մերժել սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը կամ կասեցնել դրա կիրառումը համապատասխան ապրանքների նկատմամբ: Այնուամենայնիվ, ապրանքները կարող են բաց թողնվել ազատ շրջանառության համար՝ տվյալ Կողմի ազգային օրենսդրության եւ նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Հոդված 6.23

Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը մերժելը

1. Եթե ապրանքները չեն համապատասխանում սույն գլխի պահանջներին կամ ապրանքներ ներմուծողը կամ արտահանողը չի ապահովում սույն գլխի դրույթների պահպանումը, ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինը կարող է ազգային օրենսդրությանը համապատասխան մերժել սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը եւ գանձել չվճարված մաքսատուրքերը:

2. Ներմուծող Կողմի մաքսային մարմիններն իրավունք ունեն մերժելու սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը, եթե՝

ա) ապրանքները չեն համապատասխանում սույն գլխի պահանջներին, որի հետեանքով դրանք չեն կարող դիտարկվել որպես արտահանող Կողմի ծագում ունեցող, եւ (կամ)

բ) չեն կատարվում սույն գլխի այլ պահանջներ, այդ թվում՝

i. սույն Համաձայնագրի 6.9 հոդվածի պահանջները.

ii. ներկայացված՝ ապրանքի ծագման սերտիֆիկատը լրացված չէ սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածով նախատեսված պահանջներին համապատասխան.

- գ) սույն Համաձայնագրի 6.28 հոդվածի համաձայն իրականացված ստուգման ընթացակարգերը թույլ չեն տալիս որոշել ապրանքների ծագումը կամ վկայում են ապրանքի՝ ծագման չափանիշներին անհամապատասխանության մասին.
- դ) արտահանող Կողմի ստուգող մարմինը հաստատել է, որ ապրանքի ծագման սերտիֆիկատ չի տրամադրվել (այսինքն՝ այն կեղծ է) կամ չեղարկվել է (հետ է կանչվել).
- ե) ներմուծող Կողմի մաքսային մարմինը ստուգման հարցում կատարելու օրվանից վեց ամսվա ընթացքում չի ստացել արտահանող Կողմի ստուգող մարմնի պատասխանը կամ ստացված պատասխանը չի պարունակում ապրանքի ծագումը որոշելու համար բավարար տեղեկություններ:

3. Եթե ներմուծող Կողմը ստուգման ընթացակարգերի ընթացքում պարզում է, որ արտահանողը կամ արտադրողը տրամադրել է ոչ հավաստի եւ (կամ) ոչ ամբողջական տեղեկություններ ապրանքի ծագման սերտիֆիկատներ ստանալու համար, ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինները կարող են այդ արտահանողին կամ արտադրողին տրված ապրանքի ծագման սերտիֆիկատներում նույնական ապրանքների համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը մերժել՝ համապատասխան ազգային օրենսդրության համաձայն:

4. Սույն հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետում նշված դեպքերում սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը մերժելու մասին որոշում կայացնելու համար ներմուծող Կողմի մաքսային մարմինները կարող են լիազորված մարմին չուղարկել սույն Համաձայնագրի 6.28 հոդվածով նախատեսված ստուգման հարցումը:

ԲԱԺԻՆ IV.

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 6.24

Վարչական համագործակցության լեզուն

Կողմերի միջև ցանկացած ծանուցում եւ փոխգործակցություն սույն բաժնի շրջանակներում պետք է իրականացվի համապատասխան մարմինների միջոցով անգլերենով:

Հոդված 6.25

Լիազորված եւ ստուգող մարմինները

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից Կողմերի կառավարությունները պետք է նշանակեն կամ պահպանեն լիազորված եւ ստուգող մարմիններ:

Հոդված 6.26

Ծանուցումները

1. Լիազորված մարմնի կողմից սույն Համաձայնագիրն համապատասխան ապրանքի ծագման որեւէ սերտիֆիկատ տրամադրելուց առաջ Կողմերից յուրաքանչյուրը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Իրանի Իսլամական Հանրապետության արդյունաբերության, հանքերի եւ առետրի նախարարություն միջոցով, համապատասխանաբար, միմյանց ուղարկում է լիազորված եւ ստուգող

բոլոր մարմինների անվանումների եւ հասցեների վերաբերյալ տեղեկություններ՝ նրանց կողմից օգտագործվող կնիքների դրոշմվածքների բնօրինակ եւ ընթեռնելի նմուշների, ապրանքի ծագման սերտիֆիկատի օգտագործվող ձեւաթղթի նմուշի, ինչպես նաեւ ապրանքի ծագման այդպիսի սերտիֆիկատի պաշտպանության առանձնահատկությունների մասին տեղեկությունների հետ միասին:

2. Իրանի Իսլամական Հանրապետությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողով է ներկայացնում սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները վեց օրինակից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովն իրավունք ունի պահանջելու Իրանի Իսլամական Հանրապետությունից ներկայացնել այդպիսի տեղեկությունների լրացուցիչ փաթեթներ:

3. Իրանի Իսլամական Հանրապետությունը եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը Ինտերնետ ցանցում հրապարակում են տեղեկություններ Կողմերից յուրաքանչյուրի լիազորված եւ ստուգող մարմինների անվանումների եւ հասցեների մասին:

4. Նշված տեղեկությունների մեջ ցանկացած փոփոխության մասին պետք է համապատասխան կերպով նախապես ծանուցվի սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմինների միջոցով:

5. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան տրամադրված տեղեկությունները պետք է կիրառվեն այդ տեղեկություններին կից նամակի բնօրինակը համապատասխանաբար Իրանի Իսլամական Հանրապետության արդյունաբերության, հանքերի եւ առետրի նախարարության ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ստանալու օրվանից:

Հոդված 6.27

Ծագման ստուգման էլեկտրոնային համակարգի մշակումն ու ներդրումը

1. Կողմերը ջանքեր են գործադրելու ԾՍԷՀ-ի ներդրման համար:
2. ԾՍԷՀ-ի նպատակն է հնտերնետ ցանցում լիազորված մարմինների կողմից տրված՝ ապրանքների ծագման բոլոր սերտիֆիկատների մասին տեղեկություններ պարունակող տվյալների բազայի ստեղծումն է, որը հասանելի կլինի մյուս Կողմի մաքսային մարմիններին՝ ապրանքի ծագման ցանկացած սերտիֆիկատի եւ դրա բովանդակության իսկությունն ստուգելու համար:
3. ԾՍԷՀ-ի կիրառության հետ կապված բոլոր պահանջները եւ տեխնիկական պայմանները պետք է սահմանվեն Կողմերի միջեւ առանձին արձանագրությամբ:
4. Այդ նպատակով Կողմերը պետք է ստեղծեն աշխատանքային խումբ, որը ջանքեր կգործադրի ԾՍԷՀ-ի մշակման եւ ներդրման համար:

Հոդված 6.28

Ծագման ստուգումը

1. Ապրանքի ծագման սերտիֆիկատի իսկության եւ (կամ) ապրանքի ծագման սերտիֆիկատում հայտարարագրված ապրանքների՝ սույն Համաձայնագրի 6.3 հոդվածում սահմանված ծագման չափանիշներին համապատասխանության հետ կապված հիմնավոր կասկածների դեպքում, ինչպես նաեւ հասարակ ընտրանքային ստուգում անցկացնելիս ներմուծող Կողմի մաքսային մարմինները կարող են դիմել արտահանող Կողմի լիազորված կամ ստուգող մարմին՝ ապրանքի ծագման սերտիֆիկատի իսկությունը եւ (կամ) ծագման չափանիշներին ապրանքների համապատասխանությունը հաստատելու եւ (կամ), անհրաժեշտության դեպքում, ապրանքներ արտահանողի եւ (կամ) արտադրողի կողմից փաստաթղթային ապացույցներ տրամադրելու խնդրանքով:

2. Ստուգման բոլոր հարցումներին կից անհրաժեշտ է ներկայացնել տվյալ ապրանքը նույնականացնելու համար բավարար տեղեկություններ: Արտահանող Կողմի ստուգող մարմինն ուղարկված հարցումը պետք է ներառի տեղեկություններ դրա նախաձեռնման հանգամանքների եւ պատճառների մասին, ինչպես նաեւ ապրանքի ծագման սերտիֆիկատի պատճեն:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հարցումն ստացողը պետք է պատասխանի ներմուծող Կողմի մաքսային մարմիններին ստուգման տվյալ հարցումն ստանալու օրվանից վեց ամսվա ընթացքում:

4. Ի պատասխան սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցման՝ արտահանող Կողմի ստուգող մարմինը պետք է նշի՝ արդյոք ապրանքի ծագման սերտիֆիկատն իսկական է, եւ (կամ) արդյոք ապրանքները կարող են համարվել այդ Կողմի ծագում ունեցող, այդ թվում՝ ապրանքներ արտահանողի եւ (կամ) արտադրողի կողմից ստացված անհրաժեշտ փաստաթղթային ապացույցները տրամադրելով: Մինչեւ ստուգման հարցմանը պատասխան ստանալը կարող են կիրառվել սույն Համաձայնագրի 6.22 հոդվածի 3-րդ կետի դրույթները: Այդ դեպքում վճարված մաքսատուրքերը պետք է վերադարձվեն, եթե ստուգման գործընթացի արդյունքները միանշանակ վկայում են այն մասին, որ տվյալ ապրանքները համարվում են ծագում ունեցող եւ համապատասխանում են սույն գլխի մյուս բոլոր պահանջներին:

Հոդված 6.29

Գաղտնիությունը

Սույն գլխին համապատասխան տրամադրված բոլոր տեղեկությունները Կողմերի կողմից պետք է դիտարկվեն որպես գաղտնի՝ համապատասխան ազգային օրենսդրության համաձայն: Այդ տեղեկությունները չպետք է բացահայտվեն՝ առանց

դրանք տրամադրած Կողմի անձի կամ մարմնի թույլտվության՝ բացառությամբ դատավարական նպատակներով անհրաժեշտ չափով բացահայտման:

Հոդված 6.30

Խաբեության համար տուգանքներ կամ այլ պատժամիջոցներ

Յուրաքանչյուր Կողմ պետք է սույն գլխի հետ կապված համապատասխան օրենսդրության եւ նորմատիվ ակտերի խախտման համար ապահովի քրեական կամ վարչական պատասխանատվության միջոցների կիրառման հնարավորություն:

Հոդված 6.31

Ծագման կանոնների հարցերով ենթակոմիտեն

1. Սույն գլխի արդյունավետ կիրառման եւ իրագործման նպատակներով ստեղծվում է Ծագման կանոնների հարցերով ենթակոմիտե:

2. Ծագման կանոնների հարցերով ենթակոմիտեն իրականացնում է հետեւյալ գործառույթները՝

ա) Համատեղ կոմիտեի եւ Ապրանքների կոմիտեի համար հետեւյալի վերաբերյալ առաջարկությունների քննարկում եւ ընդունում՝

i. Սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի վերանայում՝ ՆՀ-ում փոփոխություններ կատարելու մասով: Այդպիսի վերանայումը պետք է իրականացվի ժամանակին՝ առանց խախտելու առկա պարտավորությունները.

ii. սույն գլխի կիրառում եւ իրագործում, այդ թվում՝ պայմանավորվածությունների կատարման ապահովման վերաբերյալ առաջարկների մասով.

- iii. Կողմերի կողմից սույն բաժնով սահմանված պարտավորությունների չկատարում.
 - iv. սույն գլխում կատարվող տեխնիկական ուղղումներ.
 - v. սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածում ուղղումների կատարում.
 - vi. սույն գլխի իրագործման ընթացքում Կողմերի միջև առաջացող վեճեր. եւ
 - vii. սույն գլխի դրույթներում եւ սույն Համաձայնագրի 2-րդ, 3-րդ հավելվածներում կատարվող ցանկացած ուղղում.
- բ) Ցանկացած Կողմի կողմից առաջարկված՝ սույն գլխի հետ կապված ցանկացած այլ հարցի քննարկում.
- գ) Ծագման կանոնների հարցերով ենթակոմիտեի հաշվետվությունները ներկայացնելը Ապրանքների կոմիտե. եւ
- դ) այլ գործառույթների կատարում, որոնք կարող են պատվիրակվել Համատեղ կոմիտեի կողմից՝ սույն Համաձայնագրի 1.5 հոդվածին համապատասխան:

3. Ծագման կանոնների հարցերով ենթակոմիտեն կազմված է Կողմերի ներկայացուցիչներից եւ, Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, կարող է հարցերի քննարկմանը մասնակից դարձնել Կողմերի այլ կազմակերպությունների՝ անհրաժեշտ իրավասությամբ օժտված ներկայացուցիչներին:

4. Ծագման կանոնների հարցերով ենթակոմիտեի նիստերը գումարվում են Կողմերի պայմանավորվածությամբ որոշված ժամանակ եւ վայրում, սակայն ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ:

5. Յուրաքանչյուր նիստի նախնական օրակարգն ուղարկվում է Կողմերին, որպես կանոն, ոչ ուշ, քան նիստից մեկ ամիս առաջ:

Հողված 6.32

Փոխադրման կամ պահպանման գործընթացում գտնվող ապրանքները

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում ծագում ունեցող այն ապրանքների նկատմամբ, որոնք գտնվում են արտահանող Կողմից ներմուծող Կողմ փոխադրման կամ ներմուծող Կողմում ժամանակավոր պահպանման գործընթացում, կիրառվում է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ՝ սույն Համաձայնագրի 6.22 հոդվածով նախատեսված բոլոր պահանջները պահպանելու պայմանով:

ԳԼՈՒԽ 7

ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԶԵՑՈՒՄԸ

Հոդված 7.1

Կիրառության ոլորտը

Սույն գլուխը կիրառվում է մաքսային վարչարարության միջոցների եւ Կողմերի միջեւ առետրային շրջանառության մեջ գտնվող ապրանքների բացթողման համար անհրաժեշտ մաքսային գործառնություններն իրականացնելու նկատմամբ՝ խթանելու համար՝

- ա) մաքսային ընթացակարգերի եւ մաքսային ձեակերպումների թափանցիկությունը.
- բ) առետրային ընթացակարգերի պարզեցումը եւ մաքսային գործառնությունների ներդաշնակեցումը.
- գ) մաքսային համագործակցությունը, այդ թվում՝ Կողմերի կենտրոնական մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակումը:

Հոդված 7.2

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

- ա) «**մաքսային վարչարարություն**» նշանակում է Կողմերի մաքսային մարմինների կազմակերպչական եւ կառավարչական գործունեություն, ինչպես նաեւ մաքսային ոլորտում նպատակներն իրագործելիս նորմատիվ իրավական բազայի շրջանակներում իրականացվող գործունեություն.

- բ) **«մաքսային օրենսդրություն եւ նորմատիվ ակտեր»** նշանակում է Կողմերի մաքսային մարմինների կողմից կիրառվող ցանկացած նորմ եւ դրույթ, այդ թվում՝ օրենքներ, որոշումներ, հրամանագրեր, կարգադրագրեր, կանոններ եւ այլն.
- գ) **«էքսպրես-բեռներ»** նշանակում է ապրանքներ, որոնք մատակարարվում են արագընթաց տրանսպորտային համակարգերով՝ ցանկացած տրանսպորտային միջոցով՝ տեղեկատվության կառավարման եւ երթուղու հետազոծման էլեկտրոնային համակարգի օգտագործմամբ՝ առանձին վճարային փաստաթղթին համապատասխան բեռն ստացողին հնարավոր նվազագույն եւ (կամ) սահմանված ժամկետում հասցնելու նպատակով՝ բացառությամբ միջազգային փոստային առաքանիով առաքվող ապրանքների.
- դ) **«մաքսային տարածքում վերամշակում»** նշանակում է մաքսային ընթացակարգ, որի դեպքում օտարերկրյա ապրանքները Կողմի մաքսային տարածք կարող են ներմուծվել մաքսատուրքերի եւ հարկերի վճարումից պայմանական ազատմամբ՝ պայմանով, որ տվյալ ապրանքները նախատեսված են վերամշակման կամ վերանորոգման եւ պայմանավորված ժամանակահատվածում տվյալ Կողմի մաքսային տարածքից հետագայում արտահանելու համար.
- ե) **«մաքսային տարածքից դուրս վերամշակում»** նշանակում է մաքսային ընթացակարգ, որի դեպքում Կողմի մաքսային տարածքում ազատ շրջանառության մեջ գտնվող ապրանքները կարող են ժամանակավորապես արտահանվել արտասահմանում վերամշակման նպատակով, այնուհետեւ հետ ներմուծվել՝ մաքսատուրքերի եւ հարկերի վճարումից լրիվ ազատմամբ:

զ) «**Ժամանակավոր ներմուծում**» նշանակում է մաքսային ընթացակարգ, որի դեպքում օտարերկրյա ապրանքները կարող են ներմուծվել Կողմի մաքսային տարածք մաքսատուրքերի եւ հարկերի վճարումից լրիվ կամ մասնակի պայմանական ազատմամբ՝ պայմանով, որ այդ ապրանքները պետք է վերաարտահանվեն որոշակի ժամանակահատվածի ընթացքում՝ այդ Կողմի մաքսային օրենսդրությանը եւ նորմատիվ ակտերին համապատասխան:

Հոդված 7.3

Մաքսային վարչարարության միջոցների պարզեցումը

1. Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է, որ տվյալ Կողմի մաքսային մարմինների կողմից կիրառվող մաքսային վարչարարության միջոցները լինեն կանխատեսելի, անկողմնակալ, հետետողական եւ թափանցիկ:
2. Յուրաքանչյուր Կողմի մաքսային վարչարարության միջոցները պետք է հնարավորինս եւ այդ Կողմի մաքսային օրենսդրությամբ եւ նորմատիվ ակտերով թույլատրելի սահմաններում հիմնված լինեն Համաշխարհային մաքսային կազմակերպության ստանդարտների եւ հանձնարարելի գործելակերպի վրա:
3. Կողմերից յուրաքանչյուրի կենտրոնական մաքսային մարմինները պետք է ձգտեն վերանայել մաքսային վարչարարության միջոցները՝ դրանք առետորային ընթացակարգերի պարզեցմանը նպաստելու նպատակով պարզեցնելու համար:
4. Կողմերը պետք է ձգտեն մշակել կամ շարունակել իրականացնել Լիազորված տնտեսական օպերատորների (LSO) վերաբերյալ համապատասխան օրենսդրական ծրագրերը եւ LSO-ների փոխադարձ ճանաչման նպատակով կարող են բանակցություններ սկսել:

Հոդված 7.4

Ապրանքների բացթողումը

1. Կողմերից յուրաքանչյուրը սահմանում կամ շարունակում է իրականացնել մաքսային ընթացակարգեր եւ գործառնություններ՝ ապրանքների արդյունավետ բացթողման համար՝ Կողմերի միջեւ առեւտրային ընթացակարգերը պարզեցնելու նպատակով: Դրանով Կողմը չի պարտավորվում իրականացնել ապրանքների բացթողում, եթե տվյալ ապրանքների բացթողման համար սահմանված պահանջները պահպանված չեն:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան եւ հնարավորության սահմաններում՝ յուրաքանչյուր Կողմ՝

ա) ապահովում է ապրանքների բացթողումը մաքսային հայտարարագրի գրանցման պահից 48 ժամը չգերազանցող ժամանակահատվածում՝ բացառությամբ Կողմերի մաքսային օրենսդրությամբ եւ նորմատիվ ակտերով նախատեսված դեպքերի, եւ

բ) ձգտում է ստեղծել կամ պահպանել մինչեւ ապրանքների ժամանումը նախնական մաքսային տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու եւ մշակելու հնարավորությունը՝ ապրանքների ժամանումից հետո դրանց բացթողումն արագացնելու համար:

3. Եթե ներմուծող Կողմի մաքսային մարմինը երկարաձգում է ապրանքների բացթողման ժամկետը Կողմի մաքսային օրենսդրությանը եւ նորմատիվ ակտերին համապատասխան, ապա համապատասխան մաքսային մարմինը պետք է տեղեկացնի հայտարարատուին տվյալ երկարաձգման պատճառների եւ իրավական հիմքերի մասին:

Հոդված 7.5

Ռիսկերի կառավարումը

Կողմերի մաքսային մարմինները պետք է կիրառեն ռիսկերի կառավարման համակարգ՝ ռիսկերի կանոնավոր գնահատման միջոցով կենտրոնանալով բարձր ռիսկայնություն ունեցող ապրանքների ստուգման վրա, եւ պարզեցնեն մաքսային գործառնությունների կատարումը ցածր ռիսկայնություն ունեցող ապրանքների նկատմամբ:

Հոդված 7.6

Մաքսային համագործակցությունը

1. Սույն Համաձայնագրի արդյունավետ իրագործմանը նպաստելու նպատակով Կողմերի կենտրոնական մաքսային մարմիններն ամրապնդում են փոխադարձ համագործակցությունը Կողմերի միջեւ առեստրային շրջանառության վրա ազդող՝ մաքսային ոլորտի առանցքային հարցերի շուրջ:
2. Եթե Կողմի կենտրոնական մաքսային մարմինը, այդ Կողմի համապատասխան օրենսդրությանը եւ նորմատիվ ակտերին համապատասխան, ունի հիմնավոր կասկածներ ապօրինի գործունեության հետ կապված, ապա այդ կենտրոնական մաքսային մարմինն իրավունք ունի հարցում կատարելու մյուս Կողմի կենտրոնական մաքսային մարմին՝ ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման ժամանակ սովորաբար հավաքվող կոնկրետ գաղտնի տեղեկություններն ստանալու նպատակով:
3. Կողմի՝ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան կատարվող հարցումը պետք է գրավոր լինի, ներկայացնի այն նպատակը, որի համար հարցվում են տեղեկությունները, ինչպես նաեւ պարունակի այն ապրանքների նույնականացման

համար բավարար տեղեկություններ, որոնց վերաբերյալ կատարվում է տվյալ հարցումը:

4. Այն Կողմը, որին ուղղված է հարցումը սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, տրամադրում է հարցվող տեղեկությունները պարունակող գրավոր պատասխան, եթե այդպիսի տեղեկությունների տրամադրումը չի հակասում հարցում ստացած Կողմի օրենսդրությանը եւ նորմատիվ ակտերին:

5. Այն Կողմի կենտրոնական մաքսային մարմինը, որին ուղղված է հարցումը, պետք է ձգտի հարցում կատարած Կողմի կենտրոնական մաքսային մարմնին տրամադրել ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է օգնել այդ կենտրոնական մաքսային մարմնին որոշել՝ արդյոք այդ Կողմ ներմուծվող եւ (կամ) այդ Կողմից արտահանվող օբյեկտները համապատասխանում են իր համապատասխան օրենսդրության եւ նորմատիվ ակտերի պահանջներին:

6. Կողմերի կենտրոնական մաքսային մարմինները միջոցներ են ձեռնարկում մաքսային համագործակցության համար կապուղիներ ստեղծելու կամ պահպանելու համար՝ ներառյալ կապի ապահովման այնպիսի կենտրոնների ստեղծումը, որոնք կնպաստեն տեղեկատվության արագ եւ անվտանգ փոխանակմանն ու մաքսային հարցերով համակարգման բարելավմանը:

Հոդված 7.7

Տեղեկությունների փոխանակումը

1. Մաքսային գործառնությունների կատարումը դյուրացնելու, ապրանքների բացթողումն արագացնելու եւ մաքսային օրենսդրության ու նորմատիվ ակտերի խախտումները կանխելու նպատակով Կողմերը հնարավորության դեպքում ստեղծում եւ կանոնավոր կերպով կիրառում են տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգ բոլոր այն ապրանքների համար, որոնք ներգրավված են

Կողմերի միջև առեստրային շրջանառության մեջ (այսուհետ՝ տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգ)՝ տեղեկատվական անվտանգության բոլոր միջոցներն ապահովելու պայմանով:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ԵԱՏՄ-ի անունից ապահովում է տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգի ստեղծման գործընթացի համակարգումը եւ նպաստում դրա գործարկմանը:

3. Սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ «տեղեկություններ» ասելով հարկավոր է հասկանալ մաքսային հայտարարագրերում եւ տրանսպորտային փաստաթղթերում պարունակվող համապատասխան ելակետային տեղեկություններ:

4. Սույն հոդվածի 1-ին կետի նպատակներից ելնելով՝ ԵԱՏՄ անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովը եւ Իրանի Իսլամական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինը խորհրդակցություններ են սկսում՝ տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգը մշակելու նպատակով:

5. Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգը գործարկելու համար անհրաժեշտ բոլոր պահանջներն ու տեխնիկական պայմանները, ինչպես նաեւ փոխանցվող տեղեկությունների կազմը սահմանվում են ԵԱՏՄ անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Իրանի Իսլամական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմնի միջև առանձին արձանագրություններով: Այդ տեղեկությունները պետք է բավարար լինեն՝ փոխադրվող ապրանքները նույնականացնելու եւ արդյունավետ մաքսային հսկողություն իրականացնելու համար:

6. Սույն գլխին համապատասխան տրամադրվող բոլոր տեղեկությունները պետք է համարվեն գաղտնի եւ կարող են օգտագործվել միայն մաքսային նպատակներով:

Հոդված 7.8

Սահմանային հսկողության մարմինների համագործակցությունը

Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ սահմանին հսկողության եւ ապրանքների ներմուծմանը, արտահանմանը եւ տարանցմանն առնչվող ընթացակարգերի համար պատասխանատու իր լիազորված մարմիններն ու հաստատությունները համագործակցեն միմյանց հետ եւ համակարգեն իրենց գործունեությունը՝ առեւտրին նպաստելու եւ չհիմնավորված վարչական ընթացակարգերը կրճատելու նպատակով:

Հոդված 7.9

Հրապարակումը

1. Կողմերը հնարավորության սահմաններում պետք է ձգտեն ընդհանուր կիրառության մաքսային օրենսդրությունը եւ նորմատիվ ակտերը հրապարակել անգլերենով: Հարցման դեպքում, առանց խախտելու հարցում ստացած Կողմի ազգային օրենսդրությունը, պետք է տրամադրվի առեւտրի ոլորտում նշանակություն ունեցող ենթաօրենսդրական եւ նորմատիվ ակտերի կրճատ բովանդակությունը:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 8 ամսվա ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի իրավասու մարմինները պետք է ստեղծեն կամ պահպանեն կապի ապահովման մեկ կամ մի քանի կենտրոններ՝ մաքսային հարցերի վերաբերյալ շահագրգիռ անձանց հարցումներն ուսումնասիրելու համար, եւ Ինտերնետ ցանցում պետք է կապի ապահովման այդ կենտրոնների մասին տվյալներ հրապարակեն:
3. Կողմերի իրավասու մարմինները միմյանց ուղարկում են կապի ապահովման ստեղծված կենտրոնների կոնտակտային տվյալները: Հնարավորության դեպքում

Կողմերից յուրաքանչյուրի կապի ապահովման կենտրոնը մյուս Կողմի իրավասու մարմինների հարցմամբ անգլերենով տրամադրում է սույն Համաձայնագրի գործողությանը վերաբերող տեղեկություններ հետեւյալ հարցերի շուրջ՝

- ա) առկա ոչ սակագնային միջոցները, այդ թվում՝ ապրանքների արտահանման եւ ներմուծման մասով արգելքները եւ սահմանափակումները.
- բ) մաքսատուրքերի վերադարձը կամ դրանց վճարումից ազատումը, մաքսատուրքերի, վճարների եւ հարկերի վճարման հետաձգումը.
- գ) ապրանքների մաքսային ձեակերպման վրա ազդող տեխնիկական խոչընդոտների, սանիտարական եւ բուսասանիտարական պահանջների կիրառումը.
- դ) սակագնային քվոտաների կիրառմանը վերաբերող պահանջները.
- ե) ապրանքների ծագման երկրի մակնշումը, եթե դա պահանջվում է ներմուծման համար, եւ
- զ) Կողմերի որոշմամբ՝ այլ հարցեր՝ իրենց օրենսդրությանը եւ նորմատիվ ակտերին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Կողմ հնարավորության սահմաններում նախապես հրապարակում է ընդունման համար նախատեսված՝ մաքսային ոլորտում ընդհանուր կիրառման իր օրենսդրությունը եւ նորմատիվ ակտերը, եւ շահագրգիռ անձանց ընձեռում է հնարավորություն ներկայացնելու իրենց մեկնաբանությունները՝ մինչեւ այդպիսի օրենքներն ու նորմատիվ ակտերն ընդունելը:

Հոդված 7.10

Նախնական որոշումները

1. Կողմերի մաքսային մարմինները ներմուծող Կողմում գրանցված ցանկացած դիմումատուի գրավոր տրամադրում են սակագնային դասակարգման, ապրանքների ծագման, ինչպես նաև Կողմի կողմից գործին առնչվող համարվող ցանկացած լրացուցիչ հարցի վերաբերյալ նախնական որոշումները:
2. Յուրաքանչյուր Կողմ ստեղծում կամ պահպանում է նախնական որոշումների ընդունման մեխանիզմներ, որոնցով՝
 - ա) նախատեսված է, որ դիմումատուն կարող է դիմել նախնական որոշում ստանալու համար՝ նախքան ապրանքների ներմուծումը.
 - բ) պահանջվում է, որ դիմումատուն նախնական որոշում ստանալու համար նախապես տրամադրի ապրանքների մանրամասն նկարագրությունը եւ այդպիսի նախնական որոշման տրամադրման համար անհրաժեշտ այլ համապատասխան տեղեկություններ.
 - գ) նախատեսված է, որ Կողմի մաքսային մարմինը կարող է դիմումը ներկայացնելու օրվանից 30 օրվա ընթացքում դիմումատուից պահանջել ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ.
 - դ) նախատեսված է, որ ցանկացած նախնական որոշում պետք է հիմնված լինի դիմումատուի կողմից ներկայացված փաստերի եւ հանգամանքների, ինչպես նաև մաքսային մարմինների համար հասանելի այլ տեղեկությունների վրա.
 - ե) նախատեսված է, որ նախնական որոշումը դիմումատուին տրամադրվում է հնարավորինս կարճ ժամկետներում կամ բոլոր դեպքերում դիմումը ներկայացնելու պահից ոչ ուշ, քան 90 օրվա ընթացքում, կամ սույն կետի

«գ» ենթակետին համապատասխան հարցված անհրաժեշտ բոլոր լրացուցիչ տեղեկություններն ստանալու պահից ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում:

3. Կողմի մաքսային մարմինը կարող է մերժել նախնական որոշում ստանալու մասին դիմումը, եթե իր կողմից սույն հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետին համապատասխան հարցված լրացուցիչ տեղեկությունները չեն ներկայացվել նշված ժամկետում:

4. Նախնական որոշումը գործում է տրամադրման պահից առնվազն մեկ տարվա ընթացքում, եթե դրա տրամադրման հիմքում ընկած օրենսդրությունը, փաստերը եւ հանգամանքները չեն փոխվել:

5. Մաքսային մարմինը կարող է փոփոխել կամ չեղյալ ճանաչել նախնական որոշումը, եթե՝

- ա) պարզվել է, որ նախնական որոշումը հիմնված է կեղծ կամ ոչ ճշգրիտ տեղեկությունների վրա.
- բ) փոփոխություններ են կատարվել սույն Համաձայնագրին առնչվող մաքսային օրենսդրությունում եւ նորմատիվ ակտերում. կամ
- գ) փոխվել են նախնական որոշման հիմքում ընկած էական փաստեր կամ հանգամանքներ:

6. Կողմը կարող է մերժել նախնական որոշման տրամադրումը դիմումատուին, եթե դիմումի մեջ պարունակվող հարցը՝

- ա) արդեն քննության են առնված դիմումատուի՝ որեւէ պետական հաստատությունում կամ վերաքննիչ տրիբունալում կամ դատարանում հարուցված գործով. կամ
- բ) դրանց վերաբերյալ արդեն առկա է վերաքննիչ տրիբունալի կամ դատարանի որոշում:

Հոդված 7.11

Մաքսային արժեքի որոշումը

Կողմերի միջև առետորային շրջանառության մեջ գտնվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է ներմուծող Կողմի մաքսային օրենսդրությանը եւ նորմատիվ ակտերին համապատասխան, որոնք հիմնված են, *ի թիվս այլոց*, սույն Համաձայնագրի 4-րդ հավելվածով նախատեսված դրույթների վրա:

Հոդված 7.12

Սակագնային դասակարգումը

Կողմերը միմյանց միջև առետորային շրջանառության մեջ գտնվող ապրանքների համար կիրառում են ապրանքային անվանացանկեր, որոնք հիմնված են ընթացիկ խմբագրությամբ Ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի վրա:

Հոդված 7.13

Ապրանքների տարանջումը

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ջանքեր գործադրի՝ պարզեցնելու համար այն մաքսային գործառնությունները, որոնք կիրառվում են Կողմերի՝ երրորդ երկրներ (երրորդ երկրներից) տարանջվող ապրանքների նկատմամբ:
2. Կողմերը կարող են փոխադարձաբար ճանաչել տարանջվող ապրանքների եւ նավերի, ինչպես նաեւ այլ տրանսպորտային միջոցների վերահսկման համար անհրաժեշտ՝ Կողմերի կողմից կիրառվող նույնականացման միջոցներն ու փաստաթղթերը:

Հողված 7.14

Էքսպրես-բեռները

1. Կողմերի մաքսային մարմիններն ապահովում են էքսպրես-բեռների արագացված մաքսազերծում՝ միաժամանակ պահպանելով մաքսային հսկողության համապատասխան մակարդակ:

2. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ներդնի կամ պահպանի ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս իրականացնել արագացված բացթողում: Այդ ընթացակարգերը պետք է թույլ տան՝

- ա) տրամադրել էքսպրես-բեռների բացթողման համար անհրաժեշտ տեղեկություններ՝ նախքան բեռների ժամանումը այդ տեղեկությունները ներկայացնելու եւ մշակելու նպատակով.
- բ) իրականացնել էքսպրես-բեռների բացթողում՝ մեկ խմբաքանակի մեջ մտնող բոլոր ապրանքների մասին տեղեկությունները մեկ անգամ ներկայացնելու միջոցով, օրինակ, եթե դա հնարավոր է, էլեկտրոնային կապի միջոցներով ուղարկվող մանիֆեստի տեսքով.
- գ) հնարավորինս նվազեցնել էքսպրես-բեռների բացթողման համար պահանջվող փաստաթղթերի քանակը.
- դ) սովորական պայմաններում էքսպրես-բեռների ժամանումից հետո ապահովել դրանց բացթողումը՝ անհրաժեշտ մաքսային փաստաթղթերը ներկայացնելուց հետո հնարավորինս արագ.
- ե) կիրառել այդ ընթացակարգերը ցանկացած քաշի եւ արժեքի առաքումների նկատմամբ՝ ընդունելով, որ Կողմը կարող է թույլ տալ պահանջել ներմուծման լրացուցիչ ընթացակարգեր, այդ թվում՝ հայտարարագրեր եւ հաստատող փաստաթղթեր, ինչպես նաեւ

մաքսատուրքերի եւ հարկերի վճարում՝ ելնելով ապրանքի քաշից կամ արժեքից:

Հոդված 7.15

Շուտ փչացող ապրանքները

Շուտ փչացող ապրանքներն ավելորդ կորուստներից եւ դրանց փչացումից խուսափելու նպատակով, Կողմի մաքսային օրենսդրության բոլոր պահանջների պահպանման պայմանով՝ Կողմերն ապահովում են շուտ փչացող ապրանքների բացթողումն առաջնահերթ կարգով:

Հոդված 7.16

Ապրանքների ժամանակավոր ներմուծումը, մաքսային տարածքում եւ մաքսային տարածքից դուրս վերամշակումը

Միջազգային ստանդարտներին համապատասխան՝ Կողմերի մաքսային մարմինները ձգտում են պարզեցնել մաքսային գործառնությունները ապրանքների ժամանակավոր ներսբերման, եւ երկրի ներսում վերամշակման կամ երկրից դուրս վերամշակման համար ապրանքների ժամանակավոր ներմուծման կամ ապրանքների ժամանակավոր արտահանման նպատակով:

Հոդված 7.17

Նախաառաքումային ստուգումները

1. Նախաառաքումային ստուգման գործունեությունը Կողմի տարածք արտահանման ենթակա ապրանքների հետ կապված որակի, քանակի, գնի, այդ

թվում՝ փոխարժեքի եւ ֆինանսական պայմանների ստուգման հետ կապված գործունեությունն է:

2. Կողմերը չպետք է պահանջեն նախաառաքումային ստուգման կիրառում սակագնային դասակարգման եւ մաքսային արժեքի որոշման նկատմամբ:

3. Առանց խախտելու Կողմերի՝ սույն հոդվածի 2-րդ կետով չնախատեսված նախաառաքումային ստուգման այլ տեսակներ օգտագործելու իրավունքը, Կողմերին առաջարկվում է չներկայացնել կամ չկիրառել նոր պահանջներ նախաառաքումային ստուգման նկատմամբ եւ հնարավորության սահմաններում ու Կողմերի միջեւ առեւտրային ընթացակարգերը պարզեցնելու նպատակով՝ վերացնել գոյություն ունեցող պահանջները:

Հոդված 7.18

Մաքսային գործակալները

Կողմերի մաքսային օրենսդրությամբ եւ նորմատիվ ակտերով պետք է ապահովվի հայտարարատուների՝ առանց մաքսային գործակալների ծառայություններին դիմելու անհրաժեշտության մաքսային հայտարարագրերն ինքնուրույն ներկայացնելու իրավունքը:

Հոդված 7.19

Ավտոմատացումը

1. Կողմերի մաքսային մարմինները հնարավորության սահմաններում ապահովում են մաքսային գործառնությունների իրականացումը տեղեկատվական համակարգերի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում՝ կապի էլեկտրոնային միջոցների վրա հիմնված համակարգերի ու տեխնոլոգիաների

օգտագործմամբ՝ տեղեկատվական անվտանգության բոլոր միջոցներն ապահովելու պայմանով:

2. Կողմերի կենտրոնական մաքսային մարմինները հնարավորության սահմաններում հայտարարատուներին հնարավորություն են ընձեռում ապրանքները հայտարարագրել էլեկտրոնային եղանակով և ապահովում են օգտատերերի մուտքը էլեկտրոնային համակարգեր:

Հոդված 7.20

Գաղտնիությունը

Սույն գլխին համապատասխան տրամադրված բոլոր տեղեկությունները, բացառությամբ վիճակագրական տվյալների, Կողմերի կողմից պետք է դիտարկվեն որպես գաղտնի՝ Կողմերի օրենսդրությանը և նորմատիվ ակտերին համապատասխան: Այդ տեղեկությունները չպետք է բացահայտվեն Կողմերի իրավասու մարմինների կողմից՝ առանց դրանք տրամադրած Կողմի անձի կամ մարմնի թույլտվության՝ բացառությամբ այն տեղեկությունների, որոնց բացահայտումը կարող է անհրաժեշտ լինել դատավարական նպատակներով:

Հոդված 7.21

Վերանայումը և բողոքարկումը

Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է մաքսային մարմինների կողմից ընդունվող և շահագրգիռ անձանց իրավունքներին առնչվող որոշումների վարչական վերանայման և այդպիսի որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն՝ համապատասխան Կողմի օրենսդրությանն ու նորմատիվ ակտերին համապատասխան:

Հոդված 7.22

Տուգանքները

1. Կողմերից յուրաքանչյուրն ընդունում կամ պահպանում է այնպիսի միջոցներ, որոնք թույլ են տալիս վարչական տուգանքներ կիրառել ապրանքների ներմուծման կամ արտահանման ժամանակ իր մաքսային օրենսդրությունը եւ նորմատիվ ակտերը, այդ թվում՝ սույն Համաձայնագրի շրջանակներում սակագնային դասակարգման, մաքսային արժեքի որոշման, ծագման երկրի որոշման եւ սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ ստանալու մասին դրույթները խախտելու համար:
2. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի, որ մաքսային օրենսդրության, նորմատիվ ակտերի կամ ընթացակարգային պահանջների խախտման համար տուգանքներ նշանակվեն միայն այն անձի (անձանց) նկատմամբ, որը (որոնք), իր օրենսդրությանը համապատասխան, պատասխանատու է (են) խախտման համար:
3. Նշանակված տուգանային պատժամիջոցները պետք է պայմանավորված լինեն գործի փաստերով եւ հանգամանքներով ու համապատասխանեն խախտման աստիճանին եւ ծանրությանը:
4. Կողմերից յուրաքանչյուրը պետք է երաշխավորի, որ միջոցներ է ձեռնարկում խուսափելու համար՝
 - ա) շահերի բախումից տուգանքների եւ տուրքերի գնահատման ու գանձման ժամանակ, եւ
 - բ) տուգանքների գնահատման կամ գանձման համար խթան ստեղծելուց, ինչն անհամատեղելի է սույն հոդվածի 3-րդ կետի հետ:
5. Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է, որ մաքսային օրենսդրության, նորմատիվ ակտերի կամ ընթացակարգային պահանջների խախտման համար

տուգանք նշանակելիս այն անձին (անձանց), որի (որոնց) նկատմամբ նշանակվում է տուգանքը, տրամադրվի գրավոր պարզաբանում՝ խախտման բնույթի եւ կիրառելի այն օրենքի, դրույթի կամ ընթացակարգի նշմամբ, որոնց հիման վրա որոշվել է տուգանքի գումարը կամ չափը:

6. Եթե որեւէ անձ Կողմի մաքսային մարմնին տեղեկացնում է մաքսային օրենսդրության, դրույթի կամ ընթացակարգային պահանջի խախտման մասին մինչեւ մաքսային մարմնի կողմից խախտումը հայտնաբերելը, ապա Կողմն այդ անձի նկատմամբ տուգանք նշանակելիս ձգտում է հնարավորության դեպքում դիտարկել այդ փաստը որպես հնարավոր մեղմացնող հանգամանք:

Հոդված 7.23

Հատուկ անցումային շրջան

Իրանի Իսլամական Հանրապետության համար

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 12 ամսվա ընթացքում ԵԱՏՄ անդամ պետությունները եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ձեռնպահ են մնում սույն գլխի 7.10, 7.11, 7.14 հոդվածների մասով որեւէ պահանջ ներկայացնելուց:

ԳԼՈՒԽ 8.

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Հոդված 8.1

Նպատակները

Սույն գլխի նպատակը սույն Համաձայնագրի շրջանակներում ծագող վեճերի լուծման արդյունավետ եւ թափանցիկ գործընթացի ապահովումն է:

Հոդված 8.2

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով օգտագործվում են հետեւյալ սահմանումները՝

- ա) **«վեճի Կողմեր»**՝ հայցվոր Կողմ (Հայցվոր) եւ պատասխանող Կողմ (Պատասխանող): ԵԱՏՄ անդամ պետությունները եւ ԵԱՏՄ-ն կարող են հանդես գալ որպես վեճի Կողմ՝ համատեղ կամ առանձին: Երկրորդ դեպքում, եթե միջոցը ձեռնարկվում է ԵԱՏՄ-ի կողմից, ապա վեճի Կողմ է համարվում ԵԱՏՄ-ն, իսկ եթե միջոցը ձեռնարկվում է ԵԱՏՄ անդամ պետության կողմից, ապա վեճի Կողմ է համարվում միայն ԵԱՏՄ տվյալ անդամ պետությունը:
- բ) **«Հայցվոր»**՝ վեճի Կողմ, որը պահանջ է ներկայացրել սույն Համաձայնագրի 8.5 հոդվածի կամ 8.6 հոդվածի համաձայն վեճի լուծման ընթացակարգ սկսելու համար.
- գ) **«Պատասխանող»**՝ վեճի Կողմ, որին պահանջ է ներկայացվել սույն Համաձայնագրի 8.5 հոդվածի կամ 8.6 հոդվածի համաձայն վեճի լուծման ընթացակարգ սկսելու մասին.

դ) «Ծանուցագիր»՝ ընթացիկ դեպքերի եւ ընթացակարգերի մասին տեղեկատվություն պարունակող պաշտոնական փաստաթուղթ, որը Կողմերն ուղարկում են սույն գլխի դրույթներով նախատեսված դեպքերում:

Հոդված 8.3

Կիրառության ոլորտը եւ շրջանակները

1. Եթե սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա սույն գլխի դրույթները կիրառվում են այն վեճերի լուծման նկատմամբ, որոնք ծագում են սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման, այլ Կողմի կողմից սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների չկատարման հետ կապված:
2. Սույն Համաձայնագրի 4-րդ (Տեխնիկական խոչընդոտներն առեւտրում) եւ 5-րդ (Սանիտարական եւ բուսասանիտարական միջոցները) գլուխների դրույթները չեն կիրառվում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում, իսկ 7-րդ (Մաքսային համագործակցությունը եւ առեւտրային ընթացակարգերի պարզեցումը) գլխի դրույթները՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 7 ամսվա ընթացքում:

Հոդված 8.4

Տեղեկությունների փոխանակումը եւ դատարանի բարեկամը

(amicus curiae)

1. ԵԱՏՄ անդամ պետությունների եւ ԵԱՏՄ-ի միջեւ սույն Համաձայնագրի շրջանակներում առաջացող ցանկացած վեճի հետ կապված որեւէ ընթացակարգային եւ տեղեկատվական փաստաթղթի տարածում չի դիտարկվում

որպես գաղտնիության վերաբերյալ դրույթների խախտում՝ սույն Համաձայնագրին եւ (կամ) ԵԱՏՄ-ի եւ ԵԱՏՄ անդամ պետությունների միջազգային պարտավորություններին համապատասխան:

2. ԵԱՏՄ ցանկացած անդամ պետություն եւ ԵԱՏՄ-ն վեճի առարկայի մասով էապես շահագրգռված լինելու դեպքում կարող են իրավունք ստանալ լսվելու եւ արբիտրաժային խմբին գրավոր մեկնաբանություններ ներկայացնելու՝ դատարանի բարեկամի (*amicus curiae*) կարգավիճակով:

Հոդված 8.5

Բարի ծառայությունները, հաշտեցման ընթացակարգը կամ միջնորդությունը

1. Վեճի Կողմերը կարող են ցանկացած ժամանակ պայմանավորվել բարի ծառայությունների ընթացակարգ, հաշտեցման ընթացակարգ կամ միջնորդություն օգտագործելու մասին: Բարի ծառայությունները, հաշտեցման ընթացակարգը կամ միջնորդությունը կարող են սկսվել եւ դադարեցվել ցանկացած ժամանակ ցանկացած Կողմի պահանջով:

2. Վեճի Կողմերի համապատասխան պայմանավորվածության դեպքում բարի ծառայությունները, հաշտեցման ընթացակարգը եւ միջնորդությունը կարող են շարունակվել սույն գլխով նախատեսված՝ արբիտրաժային խմբի կողմից անցկացվող քննությունն սկսվելուց հետո:

3. Բարի ծառայությունների, հաշտեցման ընթացակարգի կամ միջնորդության օգտագործմամբ քննությունները, մասնավորապես, այդ քննությունների ընթացքում վեճի Կողմերի զբաղեցրած դիրքորոշումները, գաղտնի են եւ հետագա որեւէ քննության դեպքում չեն սահմանափակում վեճի Կողմերից ոչ մեկի իրավունքները:

Հոդված 8.6

Խորհրդակցությունները

1. Ցանկացած Կողմ կարող է ցանկացած այլ Կողմի հետ սույն Համաձայնագրի շրջանակներում ծագած ցանկացած այնպիսի հարցի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու պահանջ ներկայացնել, որի վրա տարածվում են 8.3 (Կիրառության ոլորտը եւ շրջանակները) հոդվածի դրույթները: Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր ջանքերը՝ սույն գլխին համապատասխան ծագած ցանկացած հարցի վերաբերյալ փոխադարձաբար ընդունելի լուծումը խորհրդակցությունների միջոցով գտնելու համար:

2. Խորհրդակցություններ անցկացնելու մասին պահանջը գրավոր է ձեռնարկվում՝ սույն Համաձայնագրին համապատասխան նշանակված կապի ապահովման կենտրոնի միջոցով, ինչպես նաեւ ուղարկվում է Համատեղ կոմիտե: Պահանջ ներկայացնող Կողմը պահանջն ուղարկում է մյուս Կողմերին, համապատասխանաբար, նշանակված կապի ապահովման կենտրոնների միջոցով: Պահանջի մեջ նշվում են պահանջը ներկայացնելու պատճառները, այդ թվում՝ վիճահարույց բոլոր միջոցները կամ մյուս հարցերը, ինչպես նաեւ պահանջի իրավական հիմքը (սույն Համաձայնագրի համապատասխան դրույթները):

3. Խորհրդակցություններ անցկացնելու մասին պահանջ ստանալուց հետո պատասխանող Կողմը պարտավորվում է՝

- ա) գրավոր պատասխանել պահանջին կապի ապահովման կենտրոնի կողմից այն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում, եւ
- բ) պահանջն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում կամ հրատապ դեպքերում, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների առնչությամբ, 10 օրվա ընթացքում բարեխիղճ կերպով խորհրդակցություններ սկսել՝

քննարկվող հարցին արագ եւ փոխադարձաբար ընդունելի լուծում տալու մտադրությամբ:

4. Սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետները կարող են վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխվել:

5. Խորհրդակցություններն անցկացվում են գաղտնի եւ առանց սահմանափակելու վեճի երկու Կողմերի իրավունքները հետագա որեւէ քննության ժամանակ կամ սույն գլխի 8.4 հոդվածին համապատասխան:

6. Վեճի Կողմն իրավունք ունի դիմելու վեճի մյուս Կողմին՝ խորհրդակցություններին քննարկվող հարցում փորձ ունեցող պետական պաշտոնատար անձանց, փորձագետների եւ համապատասխան կարգավորող ու փորձագիտական մարմինների ներկայացուցիչների մասնակցության հնարավորությունն ապահովելու պահանջով: Այդպիսի պահանջ ստացած Կողմը պարտավորվում է գործադրել բոլոր ջանքերը՝ այն կատարելու նպատակով:

7. Խորհրդակցություններն անցկացվում են Պատասխանողի տարածքում, եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվել: Խորհրդակցությունները կարող են վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ ամբողջությամբ կամ մասամբ անցկացվել կապի հեռահար միջոցների, այդ թվում, *ի թիվս այլնի*, տեսահամաժողովի օգնությամբ:

Հոդված 8.7

Արբիտրաժային խմբի ստեղծումը

1. Հայցվորն իրավունք ունի պահանջելու ստեղծել արբիտրաժային խումբ՝
 - ա) եթե Պատասխանողը չի պահպանել սույն Համաձայնագրի 8.6 հոդվածով սահմանված ժամկետները, կամ

բ) եթե վեճի Կողմերը խորհրդակցություններ անցկացնելու մասին պահանջ ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում կամ հրատապ դեպքերում, այդ թվում՝ արագ փչացող ապրանքների առնչությամբ, 20 օրվա ընթացքում չեն կարողանում կարգավորել վեճը խորհրդակցությունների միջոցով:

2. Հայցվորն արբիտրաժային խումբ ստեղծելու մասին պահանջը սույն Համաձայնագրին համապատասխան նշանակված կապի ապահովման կենտրոնի միջոցով գրավոր ուղարկում է Պատասխանողին, ինչպես նաև Համատեղ կոմիտե: Հայցվորն արբիտրաժային խումբ ստեղծելու մասին պահանջի վերաբերյալ ծանուցագիրը նշանակված կապի ապահովման կենտրոնի միջոցով ուղարկում է մյուս Կողմերին: Պահանջում պետք է նշվեն խորհրդակցություններ անցկացված լինելու կամ չլինելու հանգամանքը, տվյալ վիճահարույց միջոցների նկարագրությունը, ինչպես նաև բողոք ներկայացնելու իրավական հիմքի համառոտ նկարագրությունը, որը խնդիրը հստակ ընկալելու համար բավարար կլինի:

3. Սույն հոդվածում նշված պահանջներն ու ընթացակարգերը կարող են վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխվել:

Հոդված 8.8

Արբիտրների նշանակումը

1. Արբիտրաժային խումբը կազմվում է երեք անդամից: Արբիտրաժային խումբ ստեղծելու մասին պահանջը Պատասխանողի կողմից ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում վեճի Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է արբիտր եւ նշանակված կապի ապահովման կենտրոնների միջոցով վեճի մյուս Կողմին գրավոր տեղեկացնում է այդ նշանակման մասին: Երկրորդ արբիտրին նշանակելուց հետո 15 օրվա ընթացքում նշանակված արբիտրներն ընտրում են երրորդ արբիտրին

(արբիտրաժային խմբի նախագահին), որը չպետք է համապատասխանի հետևյալ չափանիշներից որեւէ մեկին՝

- ա) ԵԱՏՄ անդամ պետության կամ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, կամ
- բ) ԵԱՏՄ անդամ պետության կամ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում մշտական բնակության վայր ունեցող, կամ
- գ) այնպիսի պետության քաղաքացի, որը չունի դիվանագիտական հարաբերություններ ԵԱՏՄ որեւէ անդամ պետության կամ Իրանի Իսլամական Հանրապետության հետ:

2. Եթե երրորդ արբիտրը չի նշանակվել սույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետներում, ապա վեճի Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, նշանակում են երրորդ արբիտրին՝ որպես արբիտրաժանային խմբի նախագահ:

3. Բոլոր արբիտրները պետք է՝

- ա) ունենան բավարար գիտելիքներ եւ (կամ) փորձ իրավագիտության, միջազգային առևտրի եւ սույն Համաձայնագրի շրջանակների մեջ մտնող այլ հարցերի կամ միջազգային առևտրային համաձայնագրերի շրջանակներում վեճերի կարգավորման ոլորտում.
- բ) ընտրվեն բացառապես օբյեկտիվության, անկողմնակալության, հուսալիության եւ ծանրակշիռ դատողություններ կատարելու սկզբունքների հիման վրա.
- գ) կախված չլինեն, ոչ մի կապ չունենան եւ որեւէ հրահանգ չստանան որեւէ Կողմից. եւ
- դ) վեճի Կողմերին տեղեկացնեն քննվող հարցի հետ կապված շահերի ցանկացած ուղղակի կամ անուղղակի բախման մասին:

4. Ֆիզիկական անձինք չպետք է հանդես գան վեճում որպես արբիտր, եթե նրանք նախկինում որեւէ կերպ առնչվել են այդ վեճին:

5. Եթե սույն հոդվածի պայմանների հիման վրա նշանակված արբիտրը հրաժարվում է իր լիազորություններից կամ այլեւս ունակ չէ իրականացնելու իր գործառույթները, ապա 15 օրվա ընթացքում պետք է նշանակվի նրան փոխարինող՝ այն նույն ընթացակարգին համապատասխան, որը սահմանվել է սկզբնական արբիտրի նշանակման համար, ընդ որում՝ փոխարինողն ստանձնում է սկզբնական արբիտրի բոլոր լիազորություններն ու պարտավորությունները: Վարույթի ընթացքում կիրառելի ցանկացած ժամկետ կասեցվում է՝ սկսած այն օրվանից, երբ արբիտրը հրաժարվել է իր լիազորություններից կամ այլեւս ունակ չէ իրականացնել իր գործառույթները՝ մինչեւ այն օրը, երբ ընտրվում է նրան փոխարինող անձը: Արբիտրաժային խմբի ստեղծման ամսաթիվ է համարվում արբիտրաժային խմբի նախագահի նշանակման ամսաթիվը:

7. Սույն հոդվածում նշված պահանջներն ու ընթացակարգերը կարող են փոփոխվել վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 8.9

Արբիտրաժային խմբի գործառույթները

1. Արբիտրաժային խմբի գործառույթներն են ներկայացված վեճի օբյեկտիվ քննությունը, այդ թվում՝ գործի փաստացի հանգամանքների, սույն Համաձայնագրի կիրառելիության եւ դրան համապատասխանության օբյեկտիվ գնահատումը, իր քննությանը ներկայացված վեճի լուծման համար իր կարծիքով անհրաժեշտ եզրահանգումների կատարումը եւ որոշումների կայացումը, ինչպես նաեւ, վեճի Կողմի պահանջով՝ ձեռնարկվող ցանկացած միջոցի եւ (կամ) համապատասխան

օգուտների կասեցման համապատասխանության որոշումը արբիտրաժային խմբի վերջնական զեկույցի միջոցով:

2. Արբիտրաժային խմբի եզրահանգումները եւ որոշումները չեն կարող ավելացնել կամ պակասեցնել Կողմերի՝ սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքների եւ պարտավորությունների ծավալը:

Հոդված 8.10

Արբիտրաժային խմբի վարույթը

1. Արբիտրաժային խմբի վարույթն իրականացվում է սույն գլխի դրույթներին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ արբիտրաժային խումբը, խորհրդակցելով վեճի Կողմերի հետ, ինքնուրույն մշակում է արբիտրաժային խմբի վարույթը՝ հաշվի առնելով վեճի Կողմերի լավագույն լինելու իրավունքը: Վեճի Կողմերը, խորհրդակցելով արբիտրաժային խմբի հետ, կարող են պայմանավորվել սույն հոդվածի դրույթներին չհակասող՝ լրացուցիչ կանոններ եւ ընթացակարգեր կիրառելու մասին:

3. Վեճի Կողմերի հետ խորհրդակցելուց հետո արբիտրաժային խումբը հնարավորինս կարճ ժամանակահատվածում, սակայն ոչ ուշ, քան ստեղծվելուց հետո 10 օրվա ընթացքում, սահմանում է արբիտրաժային վարույթի ժամանակացույցը: Այդ ժամանակացույցը պետք է ներառի վեճի Կողմերի կողմից գրավոր նյութերը ներկայացնելու հստակ ժամկետներ: Այդ ժամանակացույցում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ արբիտրաժային խմբի հետ խորհրդակցելուց հետո կարող են փոփոխություններ կատարվել:

4. Վեճի Կողմի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ արբիտրաժային խումբը կարող է իր հայեցողությամբ տեղեկություններ եւ (կամ) տեխնիկական

խորհուրդներ ստանալու համար դիմել ցանկացած ֆիզիկական անձի կամ մարմին, որն ինքը նպատակահարմար է համարում: Սակայն, տեղեկություններ եւ (կամ) խորհուրդներ ստանալու համար դիմելուց առաջ արբիտրաժային խումբն այդ մասին պետք է տեղեկացնի վեճի Կողմերին: Այդպերպ ստացված ցանկացած տեղեկություն եւ (կամ) տեխնիկական խորհուրդ պետք է մեկնաբանություններ ստանալու համար փոխանցվի վեճի Կողմերին: Եթե արբիտրաժային խումբն իր զեկույցը նախապատրաստելիս հաշվի է առնում այդ տեղեկությունները եւ (կամ) տեխնիկական խորհուրդները, ապա պարտավոր է նաեւ տվյալ տեղեկությունների եւ (կամ) տեխնիկական խորհուրդների վերաբերյալ հաշվի առնել վեճի Կողմերի ցանկացած մեկնաբանություն:

5. Արբիտրաժային խումբը կայացնում է ընթացակարգային որոշումներ, կատարում եզրահանգումներ եւ ընդունում որոշումներ ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) հիման վրա, ընդ որում, եթե արբիտրաժային խումբը չի կարողանում ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) գալ, ապա այդպիսի ընթացակարգային որոշումները, եզրահանգումներն ու որոշումները կարող են ընդունվել ձայների մեծամասնությամբ: Արբիտրաժային խումբը չպետք է առանձին արբիտրների քվեարկության վերաբերյալ տեղեկություններ բացահայտի:

6. Արբիտրաժային խմբի նիստերը փակ են: Վեճի Կողմերը կարող են ներկա գտնվել նիստին միայն արբիտրաժային խմբի հրավերով:

7. Արբիտրաժային խմբի նիստերը պետք է փակ լինեն հանրության համար, եթե վեճի Կողմերն այլ համաձայնության չեն եկել:

8. Վեճի Կողմերին հնարավորություն է ընձեռվում ներկա գտնվելու վարույթի ընթացքում ներկայացվող ցանկացած պրեզենտացիայի, արվող ցանկացած հայտարարության կամ ցանկացած ապացույցի հերքման ժամանակ: Կողմերից մեկի կողմից արբիտրաժային խումբ ներկայացված ցանկացած տեղեկություն կամ գրավոր նյութ, այդ թվում՝ նախնական զեկույցի նկարագրական մասին առնչվող

ցանկացած մեկնաբանություն եւ արբիտրաժային խմբի հարցադրումներին տրված ցանկացած պատասխան, պետք է հասանելի լինի վեճի մյուս Կողմի համար:

9. Արբիտրաժային խմբի քննարկումներն ու դրան փոխանցված փաստաթղթերը գաղտնի են:

10. Սույն գլխում ոչինչ չի խոչընդոտում վեճի Կողմին հրապարակավ հայտնել իր դիրքորոշումը: Վեճի Կողմը վեճի մյուս Կողմի կողմից արբիտրաժային խումբ ներկայացված՝ որպես գաղտնի նշված տեղեկությունները դիտարկում է որպես գաղտնի տեղեկություններ: Վեճի Կողմը ցանկացած Կողմի պահանջով տրամադրում է նաեւ իր կողմից ներկայացված գրավոր նյութերում պարունակվող տեղեկությունների ոչ գաղտնի ամփոփագիր, որը կարող է հրապարակվել:

11. Լսումների անցկացման վայրն ընտրվում է վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Համաձայնության չգալու դեպքում լսումները հաջորդաբար անցկացվում են վեճի Կողմերի մայրաքաղաքներում, ընդ որում՝ առաջին լսումն անցկացվում է պատասխանող Կողմի մայրաքաղաքում:

Հոդված 8.11

Արբիտրաժային խմբի խնդիրները

Եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվում, ապա արբիտրաժային խումբ ստեղծելու մասին պահանջն ստանալու օրվանից 20 օրվա ընթացքում սահմանվում են արբիտրաժային խմբի հետեյալ խնդիրները.

«Սույն վեճի լուծման նպատակով ուսումնասիրել սույն Համաձայնագրի համապատասխան դրույթների համատեքստում սույն Համաձայնագրի 8.7 հոդվածին համապատասխան արբիտրաժային խումբ ստեղծելու մասին պահանջով քննության ներկայացված հարցը, կատարել եզրահանգումներ եւ ընդունել որոշումներ օրենքի եւ փաստերի հիման վրա՝ պարզելով պատճառները»:

Հոդված 8.12

Վարույթի դադարեցումը կամ կասեցումը

1. Արբիտրաժային խումբը դադարեցնում է իր աշխատանքը վեճի Կողմերի համատեղ պահանջով: Այդ դեպքում վեճի Կողմերը պետք է համատեղ տեղեկացնեն այդ մասին արբիտրաժային խմբի նախագահին եւ Համատեղ կոմիտեին:
2. Արբիտրաժային խումբը վեճի Կողմերի համատեղ պահանջով ցանկացած ժամանակ դադարեցնում է իր աշխատանքը նման պահանջն ստանալու օրվանից 12 հաջորդական ամիսը չգերազանցող ժամկետով: Այս դեպքում վեճի Կողմերը պետք է այդ մասին համատեղ տեղեկացնեն արբիտրաժային խմբի նախագահին: Այդ ժամկետի ընթացքում վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է լիազորել արբիտրաժային խմբին՝ վերսկսելու իր աշխատանքը՝ այդ մասին տեղեկացնելով արբիտրաժային խմբի նախագահին եւ վեճի մյուս Կողմին: Այդ դեպքում սույն գլխում սահմանված բոլոր ժամկետները երկարաձգվում են այն ժամանակահատվածով, որով կասեցվել էր արբիտրաժային խմբի աշխատանքը: Եթե արբիտրաժային խմբի աշխատանքը 12 հաջորդական ամիսներից ավելի ժամկետով մնում է կասեցված, ապա արբիտրաժային խումբը դադարեցնում է իր աշխատանքը:
3. Արբիտրաժային խումբ ստեղծելու մասին պահանջով բարձրացված հարցի հետ կապված վեճի սկզբնական Կողմերի կողմից նոր արբիտրաժային խումբ ստեղծելու իրավունքը համարվում է մարված, եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվել:

Հոդված 8.13

Արբիտրաժային խմբի զեկույցները

1. Արբիտրաժային խմբի զեկույցների նախագծերը կազմվում են վեճի Կողմերի բացակայությամբ եւ պետք է հիմնված լինեն սույն Համաձայնագրի

համապատասխան դրույթների, վեճի Կողմերի կողմից ներկայացված գրավոր նյութերի եւ փաստարկների, ինչպես նաեւ սույն գլխի 8.10 հոդվածի 4-րդ կետին համապատասխան ստացված տեղեկությունների եւ (կամ) տեխնիկական խորհուրդների վրա:

Անվանացանկի ծածկագիրը	Նկարագրությունը	ԱԲՌ կիրառվող դրույքաչափը 2017 թվականի դրությամբ	Նվազեցում	Համաձայնեցված սահմանային դրույքաչափ
84295129	----- այլ	5,0%	20%	4,0%
84295190	--- այլ	5,0%	20%	4,0%
84295921	---- նոր	5,0%	20%	4,0%
84295922	---- օգտագործված, որոնց թողարկման պահից անցել է 5 տարուց պակաս	5,0%	20%	4,0%
84295929	----- այլ	5,0%	20%	4,0%
84295990	--- այլ	5,0%	20%	4,0%
84329000	- մասեր	5,0%	0%	5,0%
84335111	---- 140 ձ.ու.-ը գերազանցող հզորությամբ	5,0%	0%	5,0%
84335200	-- կալսիչ մեքենաներ կամ մեխանիզմներ՝ այլ	5,0%	0%	5,0%
84335310	--- մեքենաներ՝ բազուկի տերեւուքը կտրող, եւ մեքենաներ բազուկահավաք	5,0%	0%	5,0%
84335910	--- այլ կոմբայներ	5,0%	0%	5,0%
84339000	- մասեր	5,0%	0%	5,0%
84388000	- այլ սարքավորումներ	5,0%	0%	5,0%
84818010	- այլ ամրաններ	55,0%	30%	38,5%
84818015	- այլ ամրաններ	55,0%	30%	38,5%
84818020	- այլ ամրաններ	55,0%	30%	38,5%
84818025	- այլ ամրաններ	26,0%	30%	18,2%
84818030	- այլ ամրաններ	26,0%	30%	18,2%
84818035	- այլ ամրաններ	26,0%	30%	18,2%
84818036	- այլ ամրաններ	26,0%	30%	18,2%
84818037	- այլ ամրաններ	26,0%	30%	18,2%
84818040	- այլ ամրաններ	26,0%	30%	18,2%
84818045	- այլ ամրաններ	26,0%	30%	18,2%
84818055	- այլ ամրաններ	10,0%	30%	7,0%
84818060	- այլ ամրաններ	10,0%	30%	7,0%

Իրանի Իսլամական Հանրապետության սակագնային պարտավորությունները

Անվանացանկի ծածկագիրը	Նկարագրությունը	ԱԲՌ կիրառվող դրույքաչափը 2017 թվականի դրությամբ	Նվազեցում	Համաձայնեցված սահմանային դրույքաչափ
84818065	- այլ ամրաններ	15,0%	30%	10,5%
84818069	- այլ ամրաններ	15,0%	30%	10,5%
84818070	- այլ ամրաններ	15,0%	30%	10,5%
84818080	- այլ ամրաններ	20,0%	30%	14,0%
84818081	---- կոունկներ	10,0%	30%	7,0%
84818090	---- այլ	10,0%	30%	7,0%
84824000	- առանցքակալներ ասեղնավոր	10,0%	0%	10,0%
84829900	-- այլ	5,0%	0%	5,0%
85043130	--- S.M.D տրանսֆորմերներ	5,0%	20%	4,0%
85044010	--- էլեկտրոնային կերպափոխիչների (հիբրիդային) բոլոր տեսակները՝ 0/100 վոլտ մոտոքային/ելքային լարումով եւ 150 Վատտից պակաս հզորությամբ	5,0%	20%	4,0%
85044070	--- կերպափոխիչներ ստատիկ	5,0%	20%	4,0%
85071010	--- հերմետիկ	55,0%	30%	38,5%
85071090	--- այլ	55,0%	30%	38,5%
85072010	--- հերմետիկ	32,0%	30%	22,4%
85072090	--- այլ	32,0%	30%	22,4%
85354010	--- լարման կարգավորիչներ՝ 1 000 կՎատտ-ից ավելի հզորությամբ	5,0%	20%	4,0%
85371020	--- ներկառուցված սենսորային պանելներ (HML դիսփլեյ)	5,0%	20%	4,0%
85371040	--- էլեկտրական պանելներ՝ կենցաղային տեխնիկայի (սառնարաններ (ռեֆրիժերատորներ) լվացքի մեքենաներ եւ այլն) մեջ օգտագործելու համար	5,0%	20%	4,0%
85392240	--- լամպեր՝ 115 Վ լարումով, ինքնաթիռների մեջ օգտագործելու համար	5,0%	20%	4,0%
86050000	Ուղեորատար վագոններ՝ երկաթուղային կամ տրամվայի, ոչ ինքնագնաց վագոններ՝ ուղեբեռային,	10,0%	30%	7,0%

Իրանի Իսլամական Հանրապետության սակագնային պարտավորությունները

Անվանացանկի ծածկագիրը	Նկարագրությունը	ԱԲՌ կիրառվող դրույքաչափը 2017 թվականի դրությամբ	Նվազեցում	Համաձայնեցված սահմանային դրույքաչափ
	փոստային եւ երկաթուղային կամ տրամվայի այլ հատուկ վագոններ՝ ոչ ինքնագնաց (բացի 8604 ապրանքային դիրքում ընդգրկվածներից)			
86072900	-- այլ	5,0%	0%	5,0%
86073000	- կեռեր եւ կցորդման այլ սարքվածքներ, թափարգելներ, դրանց մասերը	5,0%	0%	5,0%
86079900	-- այլ	5,0%	0%	5,0%
86080000	Ուղեգծային սարքավորումներ եւ սարքվածքներ՝ երկաթուղային կամ տրամվայի գծերի համար. մեխանիկական (այդ թվում՝ էլեկտրամեխանիկական) ազդանշանային սարքավորումներ, երկաթգծերում, տրամվայի գծերում, ավտոճանապարհներին, ներքին ջրային ուղիներում, կայանման կառույցներում, նավահանգիստներում կամ օդանավակայաններում անվտանգությունն ապահովելու կամ երթեւեկությունը ղեկավարելու համար սարքվածքներ. նշված սարքվածքների եւ սարքավորումների մասերը	5,0%	0%	5,0%
87013020	--- գյուղատնտեսական տրակտորներ՝ 140 ձ.ու.-ից ավելի հզորությամբ	5,0%	20%	4,0%
87013090	--- այլ	5,0%	20%	4,0%
87019490	--- այլ	5,0%	20%	4,0%
87019590	--- այլ	5,0%	20%	4,0%
87022000	- ինչպես սեղմումով բոցավառվող ներքին այրման միսոցային շարժիչով (դիզելով կամ կիսադիզելով), այնպես էլ էլեկտրական շարժիչով շարժման մեջ դրվող	5,0%	20%	4,0%
87023000	- ինչպես կայծային բռնկմամբ ներքին այրման շարժիչով եւ միսոցի հետադարձ-առաջընթաց շարժումով, այնպես էլ	5,0%	20%	4,0%

Իրանի Իսլամական Հանրապետության սակագնային պարտավորությունները

Անվանացանկի ծածկագիրը	Նկարագրությունը	ԱԲՌ կիրառվող դրույքաչափը 2017 թվականի դրությամբ	Նվազեցում	Համաձայնեցված սահմանային դրույքաչափ
	Էլեկտրական շարժիչով շարժման մեջ դրվող			
87024000	- միայն էլեկտրական շարժիչով շարժման մեջ դրվող	5,0%	20%	4,0%
87041090	--- այլ	5,0%	20%	4,0%
87051010	--- երկու առանձին խցիկներով (ղեկային կառավարման եւ կռունկի)	5,0%	0%	5,0%
87085039	---- այլ	5,0%	20%	4,0%
87087029	---- այլ	5,0%	20%	4,0%
87111012	--- հիբրիդային	5,0%	20%	4,0%
87111019	---- մրցարշավների ժամանակ օգտագործելու համար	5,0%	20%	4,0%
87116090	--- այլ	5,0%	20%	4,0%
87163920	Կցանքներ եւ կիսակցանքներ. այլ ոչ ինքնագնաց տրանսպորտային միջոցներ. դրանց մասերը	5,0%	20%	4,0%
87163930	Կցորդներ եւ կիսակցորդներ. ոչ ինքնագնաց այլ տրանսպորտային միջոցներ. դրանց մասերը	5,0%	20%	4,0%
88021100	-- 2000 կգ-ից ոչ ավելի դատարկ ապարատի զանգվածով	15,0%	0%	15,0%
88021200	-- 2000 կգ-ից ավելի դատարկ ապարատի զանգվածով	5,0%	0%	5,0%
88024000	- ինքնաթիռներ եւ այլ թռչող ապարատներ՝ 15 000 կգ-ից ավելի դատարկ ապարատի զանգվածով	5,0%	0%	5,0%
88031000	- օդային պտուտակներ եւ տանող պտուտակներ ու դրանց մասերը	5,0%	0%	5,0%
88032000	- շասսիներ եւ դրանց մասերը	5,0%	0%	5,0%
88033000	- ինքնաթիռների եւ ուղղաթիռների մասեր՝ այլ	5,0%	0%	5,0%
89012000	- լցանավեր (տանկերներ)	5,0%	0%	5,0%
89019000	- բեռնատար եւ բեռնաուղեւորատար լողացող միջոցներ՝ այլ	5,0%	0%	5,0%

Իրանի Իսլամական Հանրապետության սակագնային պարտավորությունները

Անվանացանկի ծածկագիրը	Նկարագրությունը	ԱԲՌ կիրառվող դրույքաչափը 2017 թվականի դրությամբ	Նվազեցում	Համաձայնեցված սահմանային դրույքաչափ
90131000	- հեռադիտակային նշանոցներ՝ զենքերի վրա տեղադրելու համար. շրջադիտակներ (պերիսկոպներ). դիտափողեր, որոնք պատրաստված են որպես տվյալ խմբում կամ XVI բաժնում նշված մեքենաների, գործիքների, սարքերի կամ ապարատուրայի համար մասեր	10,0%	0%	10,0%
90158010	- - - սարքեր եւ գործիքներ սեյսմոլոգիական	5,0%	0%	5,0%
90283011	- - - - էլեկտրամեխանիկական	55,0%	30%	38,5%
90283019	- - - - այլ	55,0%	30%	38,5%
90283021	- - - - էլեկտրամեխանիկական	55,0%	30%	38,5%
90283029	- - - - այլ	55,0%	30%	38,5%

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՇԱԳՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Թիվ 2 հավելվածի ծանոթագրություններ

Սույն Հավելվածի նպատակներով՝

1. Ցանկի առաջին սյունակը պարունակում է ապրանքային դիրքեր, երկրորդ սյունակը պարունակում է ապրանքների նկարագրությունը: Ապրանքները սույն ցանկում որոշվում են բացառապես ըստ Ներդաշնակեցված համակարգի (ՆՀ) ապրանքի ծածկագրի: Ապրանքի նկարագրությունը բերված է միայն օգտվելու հարմարության համար:

2. «Ապրանքային դիրք»՝ Ներդաշնակեցված համակարգի ապրանքային դիրք (4 նիշ).

«VAC X%» նշանակում է, որ սույն Համաձայնագրի 6.5 հոդվածով սահմանված բանաձեւին համապատասխան հաշվարկված՝ Կողմում վերջնական ապրանքի արտադրության ընթացքում ստացված ավելացված արժեքի մասնաբաժինը կազմում է առնվազն X տոկոս.

«CC» նշանակում է, որ ծագում չունեցող այն նյութերը, որոնք օգտագործվում են վերջնական ապրանքի արտադրության մեջ, ապրանքների դասակարգման մեջ ենթարկվել են փոփոխության ՆՀ-ի 2 նիշի մակարդակով:

3. Ապրանքների դասակարգումը փոխելու պահանջները կիրառվում են միայն ծագում չունեցող նյութերի նկատմամբ:

4. Ցանկի երրորդ սյունակում նշված ծագման չափանիշներով արտադրական գործողությունների նկատմամբ սահմանվում են նվազագույն պահանջներ: Մեծ ծավալով արտադրական գործողությունների կատարումը ապրանքին նույնպես տալիս է ծագում ունեցողի կարգավիճակ:

ՆՀ ծածկագիրը	Ապրանքի նկարագիրը	Ծագման չափանիշները
7303.00	Խողովակներ, փողակներ եւ սնամեջ տրամատներ՝ թուջե ձուլվածքից	CC
73.04	Խողովակներ, փողակներ եւ սնամեջ տրամատներ՝ անկարան, սեւ մետաղներից (թուջե ձուլվածքից բացի)	CC
73.05	Այլ խողովակներ եւ փողակներ՝ (օրինակ՝ զոդովի, գամած կամ նույնանման եղանակով միացրած) կլոր հատումով, որոնց արտաքին տրամագիծը 406,4 մմ-ից ավելի է, սեւ մետաղներից	CC
73.06	Այլ խողովակներ, փողակներ եւ սնամեջ տրամատներ (օրինակ՝ առանց կարի կամ զոդովի, գամած կամ նույնանման եղանակով միացրած)՝ սեւ մետաղներից	CC
73.07	Կցամասեր խողովակների կամ փողակների համար (օրինակ՝ միացքներ, ծունկեր, խողովակակցիչներ), սեւ մետաղներից	CC
87.02	Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված 10 կամ ավելի մարդ, ներառյալ վարորդը, փոխադրելու համար	<p>VAC 50%, ինչպես նաեւ հետեւյալ տեխնոլոգիական գործողությունները կատարելու պայմանով՝</p> <ul style="list-style-type: none"> - թափքի (խցիկի) զոդում կամ թափքի (խցիկի) այլ եղանակով պատրաստում այնպիսի տեխնոլոգիաներ կիրառելու դեպքում, որոնք թափքի (խցիկի) պատրաստման ժամանակ չեն

ՆՀ ծածկագիրը	Ապրանքի նկարագիրը	Ծագման չափանիշները
		<p>նախատեսում զորման գործողություններ.</p> <ul style="list-style-type: none"> - թափքի (խցիկի) ներկում. - շարժիչի տեղադրում (ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների համար, ինչպես նաև հիբրիդային ուժային ագրեգատների համար). - քարշային էլեկտրամեքենաների տեղադրում (գեներատորներ, էլեկտրաշարժիչներ) (այն շարժիչային տրանսպորտային միջոցների համար, որոնք դրվում են շարժման մեջ էլեկտրաշարժաբերով կամ հիբրիդային ուժային կայանքներով). - փոխհաղորդակի տեղադրում. - առջևի եւ հետևի կախոցի տեղադրում (այն շարժիչային տրանսպորտային միջոցների համար, որոնք դրվում են շարժման մեջ էլեկտրաշարժաբերով կամ հիբրիդային ուժային կայանքներով, եւ կայծային բռնկմամբ ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների համար). - ղեկային կառավարման եւ արգելակման համակարգի տեղադրում.

ՆՀ ծածկագիրը	Ապրանքի նկարագիրը	Ծագման չափանիշները
		<ul style="list-style-type: none"> - խլացուցիչի եւ արտաժման խողովակի հատվածամասերի տեղադրում (կայծային բռնկմամբ ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների համար). - շարժիչի արատորոշում եւ կարգավորում. - արգելակման համակարգի արդյունավետության ստուգում. - ռադիոխանգարումների մակարդակի եւ էլեկտրամագնիսական համատեղելիության նորմերի ստուգում (այն շարժիչային տրանսպորտային միջոցների համար, որոնք դրվում են շարժման մեջ էլեկտրաշարժաբերով կամ հիբրիդային ուժային կայանքներով). - պատրաստի շարժիչային տրանսպորտային միջոցի ստուգիչ փորձարկումների անցկացում
87.03	Թեթև մարդատար ավտոմոբիլներ եւ շարժիչային այլ տրանսպորտային միջոցներ՝ բացառապես նախատեսված մարդկանց փոխադրելու համար (բացի 87.02 ապրանքային դիրքում ընդգրկված շարժիչային տրանսպորտային միջոցներից)՝ ներառյալ	<p>VAC 50%, ինչպես նաեւ հետեւյալ տեխնոլոգիական նորմերը կատարելու պայմանով՝</p> <ul style="list-style-type: none"> - թափքի (խցիկի) զոդում կամ թափքի (խցիկի) այլ եղանակով պատրաստում այնպիսի տեխնոլոգիաներ կիրառելու դեպքում, որոնք թափքի (խցիկի) պատրաստման ժամանակ չեն

ՆՀ ծածկագիրը	Ապրանքի նկարագիրը	Ծագման չափանիշները
	<p>բեռնաուղեւորատար ֆուրգոն-ավտոմոբիլները եւ մրցարշավային ավտոմոբիլները</p>	<p>նախատեսում զողման գործողություններ.</p> <ul style="list-style-type: none"> - թափքի (խցիկի) ներկում. - շարժիչի տեղադրում (ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների համար, ինչպես նաեւ հիբրիդային ուժային ագրեգատների համար). - քարշային էլեկտրամեքենաների տեղադրում (գեներատորներ, էլեկտրաշարժիչներ) (այն շարժիչային տրանսպորտային միջոցների համար, որոնք դրվում են շարժման մեջ էլեկտրաշարժաբերով կամ հիբրիդային ուժային կայանքներով). - փոխհաղորդակի տեղադրում. - առջեւի եւ հետեւի կախոցի տեղադրում (այն շարժիչային տրանսպորտային միջոցների համար, որոնք դրվում են շարժման մեջ էլեկտրաշարժաբերով կամ հիբրիդային ուժային կայանքներով, եւ կայծային բռնկմամբ ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների համար). - ղեկային կառավարման եւ արգելակման համակարգի տեղադրում.

ՆՀ ծածկագիրը	Ապրանքի նկարագիրը	Ծագման չափանիշները
		<ul style="list-style-type: none"> - խլացուցիչի եւ արտաժման խողովակի հատվածամասերի տեղադրում (կայծային բռնկմամբ ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների համար). - շարժիչի արատորոշում եւ կարգավորում. - արգելակման համակարգի արդյունավետության ստուգում. - ռադիոխանգարումների մակարդակի եւ էլեկտրամագնիսական համատեղելիության նորմերի ստուգում (այն շարժիչային տրանսպորտային միջոցների համար, որոնք դրվում են շարժման մեջ էլեկտրաշարժաբերով կամ հիբրիդային ուժային կայանքներով). - պատրաստի շարժիչային տրանսպորտային միջոցի ստուգիչ փորձարկումների անցկացում
87.04	Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ բեռներ փոխադրելու համար	<p>VAC 40%, ինչպես նաեւ հետեւյալ տեխնոլոգիական գործողությունները կատարելու պայմանով՝</p> <ul style="list-style-type: none"> - թափքի (խցիկի) զոդում կամ թափքի (խցիկի) այլ եղանակով պատրաստում այնպիսի տեխնոլոգիաներ կիրառելու դեպքում, որոնք թափքի (խցիկի) պատրաստման ժամանակ չեն

ՆՀ ծածկագիրը	Ապրանքի նկարագիրը	Ծագման չափանիշները
		<p>նախատեսում զոդման գործողություններ.</p> <ul style="list-style-type: none"> - թափքի (խցիկի) ներկում. - շարժիչի տեղադրում (ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների համար, ինչպես նաև հիբրիդային ուժային ագրեգատների համար). - քարշային էլեկտրամեքենաների տեղադրում (գեներատորներ, էլեկտրաշարժիչներ) (այն շարժիչային տրանսպորտային միջոցների համար, որոնք դրվում են շարժման մեջ էլեկտրաշարժաբերով կամ հիբրիդային ուժային կայանքներով). - փոխհաղորդակի տեղադրում. - առջեւի եւ հետեւի կախոցի տեղադրում (այն շարժիչային տրանսպորտային միջոցների համար, որոնք դրվում են շարժման մեջ էլեկտրաշարժաբերով կամ հիբրիդային ուժային կայանքներով, եւ կայծային բռնկմամբ ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների համար). - ղեկային կառավարման եւ արգելակման համակարգի տեղադրում.

ՆՀ ծածկագիրը	Ապրանքի նկարագիրը	Ծագման չափանիշները
		<ul style="list-style-type: none"> - խլացուցիչի եւ արտաձման խողովակի հատվածամասերի տեղադրում (կայծային բռնկմամբ ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների համար). - շարժիչի արատորոշում եւ կարգավորում. - արգելակման համակարգի արդյունավետության ստուգում. - ռադիոխանգարումների մակարդակի եւ էլեկտրամագնիսական համատեղելիության նորմերի ստուգում (այն շարժիչային տրանսպորտային միջոցների համար, որոնք դրվում են շարժման մեջ էլեկտրաշարժաբերով կամ հիբրիդային ուժային կայանքներով). - պատրաստի շարժիչային տրանսպորտային միջոցի ստուգիչ փորձարկումների անցկացում

Հավելված 3

1. Արտահանող (անվանումը, հասցեն եւ երկիրը)			4. Համար _____		
2. Ներմուծող (Ստացող) (անվանումը, հասցեն եւ երկիրը)			ԵԱՏՄ-ԻՐԱՆ ԱԱԳ ԱՊՐԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՁԵՆ CT-3		
			Տրված է		

			(երկրի անվանումը)		
			Ներկայացվելու է		

			(երկրի անվանումը)		
3. Տրանսպորտային միջոցները եւ երթուղին (որքանով այն հայտնի է)			5. Ծառայողական նշումների համար		
6. Հերթական համարը	7. Փաթեթվածքների քանակը եւ տեսակը	8. Ապրանքների նկարագիրը	9. Ծագման չափանիշը	10. Ապրանքների քանակը	11. Հաշիվապրանքագրի համարը եւ ամսաթիվը
12. Հավաստում Սույնով հավաստվում է, որ, ըստ անցկացված ստուգման, դիմողի հայտարարագիրը համապատասխանում է իրականությանը			13. Դիմողի հայտարարագիրը Ստորեւ ստորագրողը հայտնում է, որ նշված տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, բոլոր ապրանքներն արտադրված են		

			(երկրի անվանումը)		
			եւ համապատասխանում են ԵԱՏՄ-ԻՐԱՆ ԱԱԳ-ի 6-րդ գլխով (Ծագումը որոշելու կանոնները) նախատեսված՝ ծագումը որոշելու կանոններին		
Վայր Ամսաթիվ Ստորագրություն Կնիք			Վայր Ամսաթիվ Ստորագրություն Կնիք		

1. Exporter (business name, address and country)			4. N° _____				
2. Importer/Consignee (business name, address and country)			EAEU-IRAN FTA Certificate of Origin Form CT-3				
			Issued in _____				
			(country)				
			For submission to _____				
			(country)				
3. Means of transport and route (as far as known)			5. For official use				
6. Items N°	7. Number and kind of packages	8. Description of goods	9. Origin criterion	10. Quantity of goods	11. Number and date of invoice		
12. Certification It is hereby certified, on the basis of control carried out, that the declaration by the applicant is correct			13. Declaration by the applicant The undersigned hereby declares that the above details are correct: that all goods were produced in _____ (country) and that they comply with the rules of origin as provided in Chapter 6 (Rules of Origin) of the EAEU-IRAN FTA				
Place	Date	Signature	Stamp	Place	Date	Signature	Stamp

Ապրանքի ծագման հավաստագրի CT-3 ձեւի լրացուցիչ թերթ _____					
6. Հերթական համարը	7. Փաթեթվածքների քանակը եւ տեսակը	8. Ապրանքների նկարագիրը	9. Ծագման չափանիշը	10. Ապրանքների քանակը	11. Հաշիվ-ապրանքագրի համարը եւ ամսաթիվը
<p>12. Հավաստում</p> <p>Սույնով հավաստվում է, որ, ըստ անցկացված ստուգման, դիմողի հայտարարագիրը համապատասխանում է իրականությանը</p>			<p>13. Դիմողի հայտարարագիրը</p> <p>Ստորեւ ստորագրողը հայտնում է, որ նշված տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, բոլոր ապրանքներն արտադրված են</p> <p>_____</p> <p>(երկրի անվանումը)</p> <p>եւ համապատասխանում են ԵԱՏՄ-ԻՐԱՆ ԱԱԳ-ի 6-րդ գլխով (Ծագումը որոշելու կանոնները) նախատեսված՝ ծագումը որոշելու կանոններին</p>		
Վայր Ամսաթիվ Ստորագրություն Կնիք			Վայր Ամսաթիվ Ստորագրություն Կնիք		

Additional sheet of Certificate of Origin Form CT-3 No. ____					
6. Items N ^o	7. Number and kind of packages	8. Description of goods	9. Origin criterion	10. Quantity of goods	11. Number and date of invoice
<p>12. Certification</p> <p>It is hereby certified, on the basis of control carried out, that the declaration by the applicant is correct</p>			<p>13. Declaration by the applicant</p> <p>The undersigned hereby declares that the above details are correct: that all goods were produced in</p> <p>_____</p> <p>(country)</p> <p>and that they comply with the rules of origin as provided in Chapter 6 (Rules of Origin) of the EAEU-IRAN FTA</p>		
Place	Date	Signature	Stamp	Place	Date
				Signature	Stamp

**Ապրանքի ծագման հավաստագրի (Ձեւ CT-3)
լրացման մասին հրահանգ**

Ապրանքի ծագման հավաստագիրը (Ձեւ CT-3) եւ դրա լրացուցիչ թերթերը ձեւակերպվում են ISO A4 ձեւաչափի գունավոր ձեւաթղթի վրա, անգլերենով՝ սույն հավելվածում ներկայացված նմուշին համապատասխան:

6-11-րդ վանդակներում չօգտագործված մասերի վրա պետք է գիծ քաշվի՝ դրանցում հետագայում որեւէ լրացում կատարելը կանխելու նպատակով:

Ապրանքի ծագման հավաստագիրը պետք է՝

- ա) ձեւակերպվի թղթային կրիչով՝ սույն հավելվածում ներկայացված օրինակին համապատասխան, անգլերենով.
- բ) պարունակի 1, 2, 4, 7, 8, 9, 10, 11, 12, 13 վանդակներում պահանջվող պարտադիր տեղեկատվությունը.
- գ) պարունակի պաշտոնատար անձի ստորագրությունը եւ լիազորված մարմնի պաշտոնական կնիքը, ինչպես նաեւ պաշտպանության միջոցները: Ստորագրությունը պետք է լինի ձեռագիր. ֆաքսիմիլի օգտագործումը չի թույլատրվում:

1. **Վանդակ 1.** Նշվում են տեղեկություններ ապրանքի արտահանման մասին՝ ֆիրմային անվանումը, հասցեն եւ երկիրը:

2. **Վանդակ 2.** Նշվում են տեղեկություններ ներմուծման (պարտադիր) եւ ապրանքներն ստացողի (եթե հայտնի է) մասին՝ ֆիրմային անվանումը, հասցեն եւ երկիրը:

3. **Վանդակ 3.** Նշվում են ապրանքների տրանսպորտային փոխադրման երթուղու մասին (որքանով այն հայտնի է) այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են՝ ուղարկման (բեռնառաքման) ամսաթիվը, տրանսպորտային միջոցի տեսակը (նավ, ինքնաթիռ եւ այլն), բեռնաթափման վայրը (նավահանգիստ, օդանավակայան):

4. **Վանդակ 4.** Նշվում է հավաստագրի գրանցման համարը, հավաստագիրը տրամադրած երկիրը եւ այն երկիրը, որի համար նախատեսված է այդ հավաստագիրը:

5. **Վանդակ 5.** Կատարվում են հետեւյալ նշումները՝

«DUPLICATE OF THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER__DATE__»՝ ապրանքի ծագման հավաստագրի բնօրինակի կրկնօրինակի տրման դեպքում:

«ISSUED IN SUBSTITUTION FOR THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER__DATE__»՝ ապրանքի ծագման հավաստագրի բնօրինակի կրկնօրինակի փոխանակման դեպքում:

«ISSUED RETROACTIVELY»՝ բացառիկ դեպքերում, երբ ապրանքի ծագման հավաստագիրը չի տրվել ապրանքների արտահանումից առաջ կամ դրա ժամանակ:

6. **Վանդակ 6.** Նշվում է ապրանքի հերթական համարը:

7. **Վանդակ 7.** Նշվում են փաթեթվածքների քանակը եւ տեսակը:

8. **Վանդակ 8.** Նշվում է ապրանքների մանրամասն նկարագրությունը եւ, կիրառելի լինելու դեպքում, մոդելը եւ ֆիրմային անվանումը, որոնք թույլ են տալիս նույնականացնել ապրանքը:

9. **Վանդակ 9.** Նշում են ծագման չափանիշները յուրաքանչյուր ապրանքի համար՝ աղյուսակում առկա նշումներին համապատասխան՝

Ծագման չափանիշները	Նշում 9-րդ վանդակում
ա) Ապրանքներն ամբողջությամբ ստացված կամ արտադրված են Կողմում՝ սույն Համաձայնագրի 6.4 հոդվածին համապատասխան	WO
բ) Ապրանքներն ամբողջությամբ արտադրված են Կողմերից մեկում կամ երկու Կողմերում՝ բացառապես Կողմերից մեկի կամ երկու Կողմերի ծագում ունեցող նյութերից	PE
գ) Ապրանքներն արտադրված են Կողմում՝ ծագում չունեցող նյութերի օգտագործմամբ՝ պայմանով, որ ավելացված արժեքի մասնաբաժինը կազմում է EXW մատակարարման պայմաններով ապրանքի արժեքի առնվազն 50 %-ը	VAC X %*
դ) Ապրանքներն արտադրված են Կողմում՝ ծագում չունեցող նյութերի օգտագործմամբ եւ բավարարում են սույն Համաձայնագրի թիվ 2 հավելվածով սահմանված պահանջները	PSR

* նշվում է ավելացված արժեքի տոկոսային մասնաբաժինը՝ հաշվարկված սույն Համաձայնագրի 6.5 հոդվածին համապատասխան

10. **Վանդակ 10.** Նշվում է ապրանքների քանակը՝ համաքաշը (կիլոգրամներով) կամ չափման այլ միավորներ (հատ, լիտր եւ այլն): Մատակարարված ապրանքի փաստացի քաշը չպետք է գերազանցի ապրանքի ծագման հավաստագրում նշված քաշն ավելի, քան հինգ տոկոսով:

11. **Վանդակ 11.** Նշվում են ապրանքի ծագման հավաստագրի տրման համար լիազորված մարմին ներկայացված հաշիվ-ապրանքագրի (հաշիվ-ապրանքագրերի) համարը (համարները) եւ ամսաթիվը (ամսաթվերը):

12. **Վանդակ 12.** Նշվում են տվյալներ ապրանքի ծագման հավաստագրի տրման ամսաթվի եւ վայրի մասին, լիազորված մարմնի կնիքը, ինչպես նաեւ պաշտոնատար անձի ստորագրությունը:

13. **Վանդակ 13.** Նշվում է ապրանքի ծագման երկրի անվանումը (ԵԱՏՄ անդամ պետություն կամ Իրանի Իսլամական Հանրապետություն), այդ դիմումի վայրը եւ ամսաթիվը, դիմումատուի ստորագրությունը եւ կնիքը:

Հավելված 4

ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հոդված 1

1. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը գործարքի արժեքն է, այսինքն՝ այն գինը, որը փաստացի վճարվել է կամ ենթակա է վճարման այն ապրանքների համար, որոնք վաճառվել են ներմուծման երկիր արտահանման նպատակով, ինչը ճշգրտված է՝ սույն Կանոնների 8-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, այն պայմանով, որ՝

- ա) գնորդի կողմից ապրանքները տնօրինելու կամ դրանք օգտագործելու նկատմամբ սահմանափակումներ չկան, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք՝
 - i) ներմուծման երկրում սահմանվում կամ պահանջվում են օրենքով կամ իշխանության մարմինների կողմից.
 - ii) սահմանափակում են այն աշխարհագրական շրջանը, որտեղ ապրանքները կարող են վերավաճառվել. կամ
 - iii) էապես չեն ազդում ապրանքների արժեքի վրա.
- բ) վաճառքը կամ գինը որեւէ պայմանի կամ պարտավորության առարկա չէ, որի պատճառով չի կարող որոշվել գնահատվող ապրանքների արժեքը.
- գ) գնորդի կողմից ապրանքների որեւէ հետագա վերավաճառքից, տնօրինումից կամ օգտագործումից ստացվող հասույթի ոչ մի մաս ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի անցնում վաճառողին, եթե միայն

պատշաճ ճշգրտում չի կարող կատարվել՝ 8-րդ հոդվածի դրույթներին համապատասխան. եւ

- դ) գնորդը եւ վաճառողը փոխկապակցված չեն կամ, եթե գնորդը եւ վաճառողը փոխկապակցված են, ապա գործարքի արժեքն ընդունելի է մաքսային նպատակների համար՝ սույն հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն:
2. ա) Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ապրանքների մաքսային արժեքը որոշելու նպատակների համար գործարքի գնի ընդունելի լինելը որոշելիս այն փաստը, որ գնորդը եւ վաճառողը փոխկապակցված են 12-րդ հոդվածի իմաստով, ինքնին հիմք չէ՝ գործարքի արժեքն անընդունելի ճանաչելու համար: Այդ դեպքում ուսումնասիրվում են այն հանգամանքները, որոնց դեպքում իրականացվում է վաճառքը, եւ գործարքի արժեքն ընդունվում է այն պայմանով, որ փոխկապակցվածությունը ազդեցություն չի ունեցել գնի վրա: Եթե ներմուծողի կողմից կամ այլ կերպ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ մաքսային մարմինը հիմք ունի համարելու, որ կապն ազդել է գնի վրա, ապա նա այդպես կարծելու իր հիմքերի վերաբերյալ տեղեկացնում է ներմուծողին, եւ ներմուծողին տրվում է արձագանքելու ողջամիտ հնարավորություն: Ներմուծողի համապատասխան խնդրանքով հիմքերի վերաբերյալ հաղորդումը տրամադրվում է գրավոր:
- բ) Փոխկապակցված անձանց միջեւ վաճառքի դեպքում գործարքի արժեքն ընդունվում է, եւ ապրանքները գնահատվում են սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան սահմանված գործարքի արժեքի հիման վրա, եթե ներմուծողը ցույց է տալիս, որ այդ արժեքը մոտ է նույն կամ գրեթե նույն ժամկետում գործող հետեւյալ արժեքներից որեւէ մեկին՝

- i) գործարքի արժեքը՝ չփոխկապակցված գնորդներին՝ ներմուծման նույն երկիր արտահանելու համար նախատեսված նույնական կամ համանման ապրանքների վաճառքների դեպքում.
- ii) նույնական կամ համանման ապրանքների մաքսային արժեքը, ինչպես որոշված է 5-րդ հոդվածի դրույթների համաձայն.
- iii) նույնական կամ համանման ապրանքների մաքսային արժեքը, ինչպես որոշված է 6-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Վերը նշված ստուգումներն անցկացնելու ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ցույց տրված տարբերություններին՝ առեստրային մակարդակներում, քանակական մակարդակներում, 8-րդ հոդվածում թվարկված տարրերում եւ վաճառողի կողմից վաճառքների ժամանակ կրած ծախսերում, որտեղ վաճառողն ու գնորդը փոխկապակցված չեն՝ այնպիսի ծախսերի համեմատ, որոնք վաճառողը կրում է այն վաճառքների դեպքում, որտեղ վաճառողն ու գնորդը փոխկապակցված են:

- գ) Այն ստուգումները, որոնք շարադրված են սույն հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետում, օգտագործվում են ներմուծողի նախաձեռնությամբ եւ միայն համադրության նպատակով: Սույն հոդվածի 2(բ) կետի դրույթների համաձայն՝ փոխարինող արժեք չի կարող սահմանվել:

Հոդված 2

1. ա) Եթե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել՝ 1-ին հոդվածի դրույթների համաձայն, ապա մաքսային արժեք է համարվում այն արժեքը, որը սահմանվել է սույն Կանոնների 1-ին

հողվածին համապատասխան եւ ընդունվել է այն նույնական ապրանքների նկատմամբ, որոնք վաճառվում են ներմուծման նույն երկիր արտահանելու նպատակով եւ արտահանվում են գնահատվող ապրանքների հետ նույն կամ գրեթե նույն ժամանակում, սակայն գնահատվող ապրանքները ներմուծվելուց ոչ շուտ, քան 90 օրացուցային օր առաջ:

բ) Սույն հողվածը կիրառելու ժամանակ մաքսային արժեքը որոշելու համար օգտագործվում է նույնական ապրանքների հետ գործարքի արժեքը՝ գնահատվող ապրանքների նման միեւնույն առետրային մակարդակում եւ հիմնականում նույն քանակությամբ վաճառելիս: Երբ այդպիսի վաճառք չի հայտնաբերվել, ապա օգտագործվում է այն նույնական ապրանքների գործարքի արժեքը, որոնք վաճառվում են այլ առետրային մակարդակում եւ (կամ) այլ քանակությամբ, ինչը ճշգրտվել է այնպես, որ հաշվի առնվեն այն տարբերությունները, որոնք պայմանավորված են առետրային մակարդակով եւ (կամ) քանակությամբ՝ այն պայմանով, որ այդպիսի ճշգրտումները կարող են կատարվել ներկայացրած ապացույցների հիման վրա, որոնք պարզ վկայում են ճշգրտման խելամիտ եւ ստույգ լինելու մասին՝ անկախ այն հանգամանքից, թե ճշգրտումը հանգեցնում է արժեքի աճին, թե նվազեցմանը:

2. Եթե սույն հողվածը կիրառելիս պարզվել է նույնական ապրանքներով մեկից ավելի գործարքի արժեք, ապա ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար օգտագործվում է այդպիսի նվազագույն արժեք:

Հողված 3

1. **ա)** Եթե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել՝ 1-ին եւ 2-րդ հողվածների դրույթների համաձայն, ապա մաքսային արժեք է

համարվում այն արժեքը, որը սահմանվել է սույն Կանոնների 1-ին հոդվածին համապատասխան եւ ընդունվել է այն նույնական ապրանքների նկատմամբ, որոնք վաճառվում են ներմուծման նույն երկիր արտահանելու նպատակով եւ արտահանվում են գնահատվող ապրանքների հետ նույն կամ գրեթե նույն ժամանակում, սակայն գնահատվող ապրանքները ներմուծելուց ոչ շուտ, քան 90 օրացուցային օր առաջ:

- բ)** Սույն հոդվածը կիրառելու ժամանակ մաքսային արժեքը որոշելու համար օգտագործվում է համանման ապրանքների գործարքի արժեքը՝ գնահատվող ապրանքների նման միեւնույն առետրային մակարդակում եւ հիմնականում նույն քանակությամբ վաճառելիս: Երբ այդպիսի վաճառք չի հայտնաբերվել, ապա օգտագործվում է այն համանման ապրանքների գործարքի արժեքը, որոնք վաճառվում են այլ առետրային մակարդակում եւ (կամ) այլ քանակությամբ, ինչը ճշգրտվել է այնպես, որ հաշվի առնվեն այն տարբերությունները, որոնք պայմանավորված են առետրային մակարդակով եւ (կամ) քանակությամբ՝ այն պայմանով, որ այդպիսի ճշգրտումները կարող են կատարվել ներկայացրած ապացույցների հիման վրա, որոնք պարզ վկայում են ճշգրտման խելամիտ եւ ստույգ լինելու մասին՝ անկախ այն հանգամանքից, թե ճշգրտումը հանգեցնում է արժեքի աճին, թե նվազեցմանը:

2. Եթե սույն հոդվածը կիրառելիս պարզվել է համանման ապրանքներով մեկից ավելի գործարքի արժեք, ապա ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար օգտագործվում է այդպիսի նվազագույն արժեք:

Հոդված 4

Եթե 1-ին, 2-րդ եւ 3-րդ հոդվածների դրույթների համաձայն ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել, ապա մաքսային արժեքը որոշվում է 5-րդ հոդվածի դրույթների համաձայն կամ, երբ մաքսային արժեքը չի կարող որոշվել սույն հոդվածի համաձայն, ապա 6-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ներմուծողի խնդրանքով 5-րդ եւ 6-րդ հոդվածների կիրառման կարգը փոփոխվում է հակառակ կարգով:

Հոդված 5

1. **ա)** Եթե ներմուծվող ապրանքները կամ ներմուծվող նույնական կամ համանման ապրանքները ներմուծվող երկրում վաճառվում են այն վիճակում, որով դրանք ներմուծվել են, ապա ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը՝ սույն հոդվածի դրույթների համաձայն, հիմնվում է այն արտադրանքի միավորի գնի վրա, որով ներմուծվող ապրանքները կամ ներմուծվող նույնական կամ համանման ապրանքները համախառն ամենամեծ քանակով՝ գնահատվող ապրանքների ներմուծման հետ միաժամանակ կամ գրեթե միաժամանակ վաճառվում են այն անձանց, որոնք փոխկապակցված չեն այն անձանց հետ, որոնցից նրանք գնում են այդ ապրանքները՝ հետեւյալ նվազեցումներն իրականացնելու պայմանով՝
 - i) կամ կոմիսիոն վճարներ, որոնք սովորաբար վճարվում են կամ վճարելու համար համաձայնեցվում են, կամ հավելումներ, որոնք սովորաբար կատարվում են շահույթի համար եւ այդ երկրում միեւնույն դասի կամ տեսակի ներմուծվող ապրանքների վաճառքների հետ կապված ընդհանուր ծախսերը ծածկելու համար.

- ii) սովորական տրանսպորտային եւ ապահովագրական ծախսեր ու դրանց հետ կապված՝ ներմուծման երկրում կատարված ծախսեր.
 - iii) համապատասխան դեպքերում՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ծախքեր եւ տուրքեր եւ
 - iv) մաքսատուրքեր եւ ազգային այլ հարկեր, որոնք ներմուծման երկրում ապրանքների ներմուծման կամ վաճառքի հետ կապված, ենթակա են վճարման:
- բ)** Եթե ոչ ներմուծվող ապրանքները, ոչ էլ ներմուծվող նույնական կամ համանման ապրանքները չեն վաճառվում գնահատվող ապրանքների ներմուծման հետ միաժամանակ կամ գրեթե միաժամանակ, ապա մաքսային արժեքը հիմնվում է, եթե սույն հոդվածի 1(ա) կետի դրույթներում այլ բան նշված չէ, արտադրանքի միավորի այն գնի վրա, որով ներմուծվող ապրանքները կամ ներմուծվող նույնական կամ համանման ապրանքները ներմուծման երկրում վաճառվում են այն վիճակում, որով դրանք ներմուծվել են՝ գնահատվող ապրանքները ներմուծելուց հետո ամենամոտ օրվա դրությամբ, սակայն այդպիսի ներմուծումից հետո մինչեւ 90 օրը լրանալը:

2. Եթե ոչ ներմուծվող ապրանքները, ոչ էլ ներմուծվող նույնական կամ համանման ապրանքները չեն վաճառվում ներմուծման երկրում այն վիճակով, որով դրանք ներմուծվել են, ապա, ներմուծողի համապատասխան հարցման հիման վրա մաքսային արժեքը հիմնվում է այն արտադրանքի միավորի գնի վրա, որով ներմուծվող ապրանքները հետագա մշակումից հետո վաճառվում են համախառն ամենամեծ քանակով ներմուծման երկրի այն անձանց, որոնք փոխկապակցված չեն այն անձանց հետ, որոնցից նրանք այդ ապրանքները գնում են, ընդ որում, այդպիսի մշակումով կատարված ավելացված արժեքի վրա կատարվում են

համապատասխան ուղղումներ եւ սույն հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետով նախատեսված նվազեցումներ:

Հոդված 6

1. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը հիմնվում է հաշվարկային արժեքի վրա: Հաշվարկային արժեքը պետք է բաղկացած լինի հետևյալ գումարներից՝

- ա) ծախքերից կամ նյութերի եւ արտադրության արժեքից կամ այլ մշակումից, որը կիրառվել է ներմուծվող ապրանքների պատրաստման ժամանակ.
- բ) շահույթի եւ ընդհանուր ծախսերի ծավալից՝ հավասար նրանց, որոնք սովորաբար արտացոլվում են ներմուծման երկիր արտահանման համար՝ արտահանման երկրում արտադրողների կողմից արտադրված գնահատվող ապրանքների միեւնույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքների վաճառքների ժամանակ.
- գ) ծախքերից կամ բոլոր մյուս ծախսերի արժեքից, որոնք անհրաժեշտ են, որպեսզի արտացոլվի Կողմի կողմից ընտրված գնահատման մեթոդը՝ Ց-րդ հոդվածի 1-ին կետի (ե), (զ) եւ (է) ենթակետերի համաձայն:

2. Կողմերից ոչ մեկն իր տարածքում ռեզիդենտ չհանդիսացող որեւէ անձից չի կարող պահանջել կամ նրան ստիպել ռաումնասիրության համար ներկայացնել կամ հասանելի դարձնել որեւէ հաշիվ կամ այլ հաշվառման փաստաթուղթ՝ հաշվարկային արժեքը որոշելու նպատակներով: Սակայն, սույն հոդվածի դրույթների համաձայն մաքսային արժեքը որոշելու նպատակներով ապրանքներն արտադրողի կողմից ներկայացված տեղեկատվությունը կարող է ստուգվել արտադրողի համաձայնությամբ՝ այլ երկրում ներմուծման երկրի իրավասու մարմինների կողմից

եւ այն պայմանով, որ նրանք նախապես բավարար ժամկետում ծանուցում են շահագրգիռ երկրի կառավարությանը, եւ վերջինս չի առարկում քննությանը:

Հոդված 7

1. Եթե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել 1-6-րդ հոդվածների համաձայն, ապա մաքսային արժեքը որոշվում է ներմուծման երկրում առկա տվյալների հիման վրա ողջամիտ միջոցների օգտագործմամբ:

2. Մաքսային արժեքը սույն հոդվածի դրույթների համաձայն չի որոշվում հետեւյալի հիման վրա՝

- ա) ներմուծման երկրում այն ապրանքների վաճառքի գինը, որոնք արտադրվում են այդ երկրում.
- բ) այն համակարգը, որով նախատեսվում է մաքսային նպատակներով ընդունել երկու այլընտրանքային արժեքից ավելի բարձրը.
- գ) արտահանման երկրի ներքին շուկայում առկա ապրանքների գինը.
- դ) արտադրության այլ ծախսեր, որոնք տարբերվում են հաշվարկային այն արժեքից, որը սահմանվել է նույնական կամ համանման ապրանքների համար՝ 6-րդ հոդվածի դրույթներին համապատասխան.
- ե) ապրանքի գինը՝ ներմուծման երկրից տարբերվող այլ երկիր արտահանելու համար.
- զ) նվազագույն մաքսային արժեքները, կամ
- է) կամայական կամ շինծու (ֆիկտիվ) արժեքները:

3. Ներմուծողի համապատասխան հարցմամբ սույն հոդվածի դրույթների համաձայն որոշված մաքսային արժեքի եւ այդ արժեքը որոշելու համար օգտագործված մեթոդի վերաբերյալ գրավոր տեղեկացվում է ներմուծողին:

Հոդված 8

1. Մաքսային արժեքը 1-ին հոդվածի դրույթների համաձայն որոշելիս ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին ավելացվում են՝

- ա) հետեւյալ ծախսերն այնքանով, որքանով դրանք կատարված են գնորդի կողմից, սակայն ներառված չեն ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ.
 - i) կոմիսիոն կամ բրոքերային վճարները՝ բացառությամբ գնման համար կոմիսիոն վճարի.
 - ii) այն տարայի արժեքը, որը մաքսային նպատակներով դիտարկվում է որպես համապատասխան ապրանքների հետ մեկ ամբողջություն կազմող.
 - iii) փաթեթվածքի արժեքը, որն իր մեջ ներառում է ինչպես աշխատուժի, այնպես էլ նյութերի արժեքը.
- բ) հետեւյալ այն ապրանքների եւ ծառայությունների համաչափորեն բաշխված արժեքը, որոնք գնորդի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրվում են վաճառողին անվճար կամ իջեցված գնով՝ ներմուծվող ապրանքներն արտահանման նպատակով արտադրելու եւ վաճառելու հետ կապված դրանց օգտագործման համար՝ այնքանով, որքանով այդ արժեքը ներառված չէ փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ՝
 - i) նյութեր, բաղադրիչներ, մասեր եւ նույնանման տարրեր, որոնք ընդգրկված են ներմուծվող ապրանքներում.

- ii) գործիքներ, դրոշմակնիքներ, ձեւեր եւ նույնանման տարրեր, որոնք օգտագործվել են ներմուծվող ապրանքների արտադրության մեջ.
 - iii) ներմուծվող ապրանքների արտադրության ընթացքում սպառված նյութեր.
 - iv) ներմուծման երկրի սահմաններից դուրս կատարված եւ ներմուծվող ապրանքների արտադրության համար անհրաժեշտ նախագծում, մշակում, գեղարվեստական եւ կոնստրուկտորական գործունեություն, գծագրեր ու էսքիզներ.
- գ)** գնահատվող ապրանքներին վերաբերող ռոյալթիներ եւ լիցենզիոն վճարներ, որոնք գնորդի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն պետք է վճարվեն որպես գնահատվող ապրանքների վաճառքի պայման՝ այնքանով, որքանով այդ ռոյալթիներն ու վճարները ներառված չեն փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ.
- դ)** ներմուծվող ապրանքների հետագա վերավաճառքի, տնօրինման կամ օգտագործման արդյունքում ստացվող՝ վաճառողին ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելիք հասույթի ցանկացած մասի արժեքը.
- ե)** ներմուծվող ապրանքները նավահանգիստ կամ ապրանքների՝ ներմուծման երկրի ներմուծման վայր փոխադրելու արժեքը.
- զ)** ներմուծվող ապրանքները նավահանգիստ կամ ապրանքների՝ ներմուծման երկրի ներմուծման վայր փոխադրման հետ կապված՝ բեռնման, բեռնաթափման եւ մշակման ծախսերը.
- է)** ապահովագրման արժեքը:

2. Ավելացումները փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին, սույն հոդվածի համաձայն, կատարվում են միայն օբյեկտիվ եւ քանակական որոշման ենթակա տվյալների հիման վրա:

3. Մաքսային արժեքը որոշելիս չի թույլատրվում փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին ավելացումներ կատարել՝ բացառությամբ սույն հոդվածով նախատեսված ավելացումների:

Հոդված 9

Այն դեպքում, երբ մաքսային արժեքի որոշման համար անհրաժեշտ է արժույթի փոխարկում, օգտագործվում է այն փոխարժեքը, որը ներմուծման երկրի իրավասու մարմնի կողմից սահմանվում է ներմուծման երկրի մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ:

Հոդված 10

Մաքսային գնահատման նպատակներով գաղտնի հիմունքներով տրամադրված կամ գաղտնի բնույթ ունեցող ամբողջ տեղեկատվությունը որպես հույժ գաղտնի է դիտարկվում իշխանության համապատասխան այն մարմինների կողմից, որոնք այն չեն բացահայտում առանց այդ տեղեկատվությունը ներկայացնող անձի կամ կառավարության հատուկ թույլտվության՝ բացառությամբ այն դեպքի, երբ դրա բացահայտումը կարող է պահանջվել ներմուծման երկրի ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 11

1. Մաքսային արժեքի որոշման առնչությամբ՝ ներմուծողի կամ տուրքը վճարելու համար պատասխանատու այլ անձի համար յուրաքանչյուր Կողմի օրենսդրությամբ նախատեսվում է առանց տուրքը վճարելու բողոքարկման իրավունք:
2. Առանց տուգանքի բողոքարկման իրավունքով թույլատրվում է նախնական բողոքարկում մաքսային վարչակազմի համակարգում համապատասխան մարմին կամ անկախ մարմին, սակայն յուրաքանչյուր անդամ երկրի օրենսդրությամբ նախատեսվում է առանց տուգանքի դատական մարմին բողոքարկելու իրավունք:
3. Բողոքարկող անձին ուղարկվում է ծանուցում բողոքարկման վերաբերյալ կայացված որոշման մասին, եւ այդ որոշումն ընդունելու հիմքերը ներկայացվում են գրավոր: Բողոքարկող անձը տեղեկացվում է նաեւ հետագա բողոքարկման հետ կապված իր բոլոր իրավունքների մասին:

Հոդված 12

1. Սույն Կանոններում՝
 - ա) «ներմուծվող ապրանքների մաքսային արժեք» նշանակում է ապրանքների արժեքը՝ ներմուծվող ապրանքների արժեքի նկատմամբ տոկոսներով մաքսատուրքերով հարկման համար.
 - բ) «արտադրված» ներառում է անեցված, պատրաստված եւ արդյունահանված.
 - գ) «նույնական ապրանքներ» նշանակում է ապրանքներ, որոնք բոլոր առումներով նույնն են՝ ներառյալ ֆիզիկական բնութագրերը, որակը եւ համբավը: Աննշան արտաքին տարբերությունները խոչընդոտ չեն՝ մյուս

առումներով տվյալ սահմանմանը բավարարող ապրանքները նույնական համարելու համար.

- դ)** «համանման ապրանքներ» նշանակում է ապրանքներ, որոնք, թեպետ միանման են ոչ բոլոր առումներով, ունեն նման բնութագրեր եւ նման բաղադրիչ նյութեր, որոնց շնորհիվ դրանք կատարում են նույն գործառույթները եւ առետրային տեսանկյունից փոխադարձ փոխարինելի են: Ապրանքների որակը, համբավը եւ ապրանքային նշանի առկայությունն այն գործոններից են, որոնք ապրանքների համանման լինելը կամ չլինելը որոշելիս պետք է հաշվի առնել.

«Նույնական ապրանքներ» եւ «համանման ապրանքներ» եզրույթները չեն ընդգրկում համապատասխան դեպքերում այն ապրանքները, որոնք ներառում կամ արտացոլում են նախագծումը, մշակումը, գեղարվեստական եւ կոնստրուկտորական գործունեությունը, գծագրերը եւ էսքիզները, որոնց համար 8-րդ հոդվածի 1(բ)(iv) կետի համաձայն ճշգրտում չի կատարվել, քանի որ այդ տարրերը կատարվել են ներմուծման երկրում:

Ապրանքները չեն համարվում «նույնական ապրանքներ» կամ «համանման ապրանքներ», եթե միայն դրանք չեն արտադրվել այն նույն երկրում, որտեղ արտադրվել են գնահատվող ապրանքները:

Այն ապրանքները, որոնք արտադրվել են այլ անձի կողմից, հաշվի են առնվում այն դեպքում, երբ չկան նույնական կամ համանման ապրանքներ, որոնք արտադրվել են գնահատվող ապրանքներն արտադրած միեւնույն անձի կողմից:

- ե)** «նույն դասի կամ տեսակի ապրանքներ» նշանակում է ապրանքներ, որոնք դասվում են որոշակի բնագավառում կամ արդյունաբերական

հատվածում արտադրվող ապրանքների խմբին կամ շարքին եւ ներառում են նույնական ու համանման ապրանքներ:

2. Սույն Կանոնների նպատակներով անձինք համարվում են փոխկապակցված, միայն եթե՝

- ա)** մեկը մյուսի ընկերության աշխատակիցներ կամ տնօրեններ են.
- բ)** նրանք իրավաբանորեն ճանաչված գործընկերներ են.
- գ)** նրանք գործատու եւ պաշտոնյա են.
- դ)** որեւէ անձ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում, վերահսկում կամ տնօրինում է շրջանառության մեջ բաց թողնված բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոսը, ինչը նրանց երկուսին տալիս է ձայնի իրավունք.
- ե)** նրանցից մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է մյուսին.
- զ)** երկուսն էլ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում են երրորդ անձի կողմից.
- է)** նրանք միասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են երրորդ անձին.
- ը)** նրանք միեւնույն ընտանիքի անդամ են:

3. Այն դեպքում, երբ գործնական կապեր ունեցող անձանցից մեկը մյուս անձի բացառիկ գործակալը, բացառիկ դիստրիբյուտորը (բաշխողը) կամ բացառիկ կոնցեսիոներն է՝ անկախ նրանից, թե դա ինչպես է ներկայացվում, նրանք, սույն Կանոնների նպատակներով, համարվում են փոխկապակցված, եթե համապատասխանում են սույն հոդվածի 2-րդ կետում նշված չափանիշներին:

Հոդված 13

Գրավոր հարցմամբ ներմուծողն իրավունք ունի գրավոր բացատրություն ստանալու այն մասին, թե ներմուծման երկրի մաքսային վարչակազմի կողմից ինչպես է որոշվել ներմուծողի ապրանքների մաքսային արժեքը:

Հոդված 14

Սույն Կանոններում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մաքսային վարչակազմերի՝ մաքսային գնահատման համար ներկայացված ցանկացած դիմումի, փաստաթղթի կամ հայտարարագրի հավաստի կամ ճշգրիտ լինելու հարցում համոզվելու իրավունքները սահմանափակող կամ կասկածի տակ դնող:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի մայիսի 17-ին Աստանայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված ժամանակավոր համաձայնագրի» հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն